



ISSN 1829-0272

Հայ Արվեստ

ARMENIAN ART

CULTURAL MAGAZINE

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

3-4/2007



Գեորգ Բաշինջադյան, «Գյուղը գիշերով», 1910 թ., մասնավոր հավաքածու



- ▶ **ՄԻՐԱՆՈՒՅՇ - 150**
- ▶ **«Ժողովրդական երգիչ» նախագիծը**
- ▶ **Հնագիտական հայտնագործություններ**
- ▶ **Առեղծվածային դարձգիրը**
- ▶ **Հայաստան - Սֆյուտ. արվեստի նորություններ**

Ֆրատարակիչ
Հայաստանի ազգային պատկերասրահ

Լրատվական գործունեություն իրականացնող
«ՅՈԹ ԱՐՎԵՍ» ՍՊԸ
Հասցեն՝ Երեւան, Խանջյան 43, բն. 14
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա 053641, տրված՝ 20.03. 2002 թ.

Գլխավոր խմբագիր՝ Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Թողարկման պատասխանատու, գործադիր տնօրեն Հասմիկ ԳԻՆՈՅԱՆ

Խմբագրական խորհուրդ
Փարավոն Միրզոյան (նախագահ)
Վարադդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Արարատ ԱՂԱՍՅԱՆ, Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ,
Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Սերգեյ ԽԱՉԻԿՕՂԵՅԱՆ, Դանիել ԵՐԱԺԻՇՏ,
Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ, Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ,
Լեւոն ԼԱՃԻԿՅԱՆ

Համակարգչային ձեւավորող
Վարդան ԴԱԼԼԱՔՅԱՆ

Ֆրատարակվում է գիտական համագործակցությամբ
• Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
• ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
• ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի

Հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՂ-ի «Ատենախոսությունների արդյունքների տպագրության համար ընդունելի ամսագրերի ցուցակում»

Գրանցման վկայական՝ 01Մ000095
Դասիչ՝ 77789
Ստորագրված է տպագրության 30.11.2007
Ծավալը՝ 6.5 մամուլ
Տպաքանակը՝ 500

Խմբագրության հասցեն
Երեւան, Հանրապետության 32
Հեռախոս՝ (374 10) 52 3501
խմբագիր՝ (374 91) 45 5347
տնօրեն՝ (374 91) 40 3215
Ֆաքս՝ (374 10) 56 3661
E-mail: hayart02@hotmail.com

Արտատպություն կատարելիս հղումը
«Հայ արվեստին» պարտադիր է:

ՀԱՍՄԱՐԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՅՈՒ ԱՄՆ ԱՐԵՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ



ԱՄՆ Արեւմտյան թեմի եւ Առաջնորդարանի բազմաճյուղ գործունեության մասին կարելի է տեղեկանալ հետևյալ կայքում.
www.armenianchurchwd.com

բովանդակություն

3Մեծերը

4Խաչատուր Ավագյան, Սիրանույշ - 150

6Անահիտ Մարգարյան, Կրֆո Տադևոսի ուժը.
Հակոբ Գյուրջյան

8Նունե Հախվերդյանի հարցազրույցը
Փարավոն Միրզոյանի հետ

10Թամար Պատարյան-Չեսքեր, Չուցահանդես Նյու Յորքում

13Լեւոն Լաճիկյան, Արվեստը գնահատել եւ գնահատել չալ...

14Լ. Լաճիկյանի հարցազրույցը
Նորվան Եռս. Ջաֆարյանի հետ

16Անի Կիրակոսյան, Պերճ Պառլյանը որդես լուսանկարիչ

19«Ժողովրդական երգիչ» Նախագիծը

22Ասիլվա. ինքնաներկայացում

24Շահեն Խաչատրյան, Հարություն Հարությունյան

29Գեղանկարիչ Պապիկ Պարսամյան

30UNESCO-ի Պաշտոնյաների այցը Աստանայի թեմ

32Գ. Սարգսյան, Հ. Մելիքյան, Երկու նորահայտ ամրոց
Ծաղկաձորում

33Պապիկ Սարգսյան, Պառլյանը Պաշտոնում

34Հուսիկ Մելիքյան, Նորահայտ եկեղեցի Եղվարդում

35Պապիկ Ս. Սարգսյան, Պաշտոնի ամրոցը

38Դանիել Երաժիշ, Պալինդրոմոն-Պարձիր

40Քրիստին Մերմակ, Կարինե Աճեմյան

42Սարո Սարուխանյան, Սամվել Չիրուխյանի արվեստը


44Անահիտ Արթեն, Սեֆան Անդրանիկյան

45Սիրայել Հարությունյան, Նամականիքների հրաշալի
աշխարհը


46Արծվի Բախչինյան, Բալեսի մեր հրաշք տղաները

12, 15, 18. 29, 50.... Մշակութային լուրեր

խմբագրական



2008 թվականը հոբելյանական տարի է, մեր երեք մեծերի՝ Վազգեն Առաջին Կաթողիկոսի, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի եւ գրող Ուլիյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակը: Երեքն էլ մերն են ու նաեւ աշխարհինը: Երեքն էլ անջնջելի հետք են թողել մեր պատմության ու նաեւ այսօր ապրող ավագ ու միջին սերնդի բազում մարդկանց հիշողության մեջ: Ակամա մտածում ես, ի՞նչ հրաշալի համաստեղություն: Հայկական Ճակատագրի յուրահատկության պատճառով երեքն էլ Հայաստանի սահմաններից դուրս են ծնվել, բայց բնատուր շնորհով ու աշխատասիրությամբ ամեն մեկն իր բնագավառում զազաթ է դարձել: Յուրաքանչյուրի արածին ու հայրենանվեր



վաստակին անդրադառնալու համար մի-մի գիրք կարելի է գրել, եւ բնական է, որ այստեղ կենսագրական տեղեկություններ կամ մասնագիտական գնահատականներ չպիտի տանք, մանվանդ որ զալիք տարվա ընթացքում վստահաբար պատշաճ ձեւով կնշվեն այդ հոբելյաններն ու ըստ ամենայնի կասվի ամեն բան:

Սակայն մի խնդրի ուզում ենք անդրադառնալ: «Ուշ-ուշ, բայց ոչ ուշացած, ճիշտ ժամանակին ծնված ու ժամանակից առաջ անցած» Հայոց մեծերին հիշելն ու գնահատելը միայն բարեկրթության ու պատվախնդրության հարց չէ, այլեւ ներշնչանքի աղբյուր, առաջընթացի լիցք: Մեծերն այն մարդիկ են, որոնց կյանքն ու գործն անբաժանելիորեն միախլուսված են եւ թերեւս շաղախված աստվածային սիրով: Մեծերը տարբերվում են մեղավոր մահկանացուներիցս նրանով, որ մեզ հետ են նաեւ իրենց մահից հետո, ոչ միայն «երկնքում մեզ սատար», այլեւ ուղեւոր երկրի վրա: Եւ եթե նոր սերունդը մեր մեծերից անգամ ոչ մի դաս չքաղի, նրանց գոյությունն արդեն իսկ դաս է: Եւ այդ դասի պատգամն էլ հստակ է՝



հոգեւոր եւ մտավոր զարգացումն է հայ մարդու ճանապարհն ու նպատակը, նաեւ ճշմարտությանն ու արդարությանը հետեւելն է նրա կոչումը, մի բան, որ ժամանակին համարեղորեն ձեւակերպել է Մեծն Թումանյանը՝

Մենք ուխտ ունենք՝
Միշտ դեպի լույս:
Այդ լույսը երեւում է հեռվում՝ Արագածի զազաթին, կամ մեկ այլ սրբազան բարձունքի վրա: Սակայն այդ լույսի մի ծվեն անթեղված է նաեւ յուրաքանչյուր մարդու սրտում: Եւ ահա մեծերը մեզանից տարբերվում են նաեւ նրանով, որ այդ անթեղված լույս-կայծը վերածում են կրակի, որի կենսապարգեւ ջերմությունը հասնում է նաեւ իրենցից հետո եկողներին:

Կարեն Մաթեոսյան

ՄԻՐԱՆՈՒՅՇ



150

1857-ի մայիսի 25-ին Պոլսի Բերա թաղամասում, բնիկ վանեցի ատաղձագործի ընտանիքում ծնվեց մի աղջնակ, որին վիճակվելու

ներել էին ու անուրանալի. հրայր-քոտ տեմպերամենտ ուներ, իդեալական շարժումներ, դուրալի ծայր, արտահայտիչ դիմախաղ, ամեն ինչ սրտով ընկալող, մարդկային հոգու ամենամուրթ թրթիռներն զգալու եւ նույնպիսի նրբությամբ վերարտադրելու ունակությամբ էր օժտված: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ՝ «Սիրանույշը... գեղանկար է, գրեթե անդորր, անտազնապ: Սակայն նրա խոսքի մեջ կա զսպված կիրք, շարժումների մեջ՝ լիաբուռն եւ լիակատար զգացմունք, որ ջինջ է, պարզորոշ, վիթխարի: Եւ ի՞նչ ծայր՝ երաժշտություն, որի մեջ հնչում է կանացի հմայքի անխարդախ ու մշտաշող մետաղը»:

Գեղեցկուհի չէր, բայց ուներ այնպիսի արտահայտություն, որ առիճքում էր առաջին իսկ հայացքից, իսկ բեմում արդեն կախարդական թովչանք էր ձեռք բերում ու զերում ամենքին:

Հանգամանքներն էլ (ոչ անձնական կյանքը, որ լի եղավ անդարմանալի կորուստներով ու վշտերով) բարենպաստ էին ի սկզբանե, նշանավոր դերասանուհի Ազնիվ Հրաչյայի ազգականուհին էր, ավագ քույրը՝ Աստղիկը, դերասանուհի էր, եւ նրանց օգնությամբ

սակաւ բնագոյն ու ռուս մեծ բեմարվեստից սերված իրապաշտ ոգին, ռոմանտիկական ու ռեալիստական ոճերը, բեմում հնչեցներ մեր երկփեղկված լեզվի ընդհանրական գեղեցկությունը:

Սիրանույշը ճանաչեց, տեր կանգնեց ու արժանի եղավ իր կոչմանը: Նրա գրեթե ամեն քայլը, ամեն դերակատարումն ուղեկցվել է թեժ վեճերով ու տարակարծություններով: Կարճատես միամտություն կլիներ դրանց ակունքը շրջապատի անընթերցողության կամ չկամության ու նախանձի մեջ որոնել (թեւեւ դրանք էլ են եղել եւ քիչ չեն պղտորել դուրագոյն ու դուրագրգիռ արտիստուհու հոգին): Եական պատճառը նրա արվեստի անսովորությունն ու յուրօրինակությունն էր, որի ընկալումը նույնիսկ բարեկամներից պահանջում էր որոշակի խորատեսություն ու առանձնահատուկ ճաշակ: Եվ մի բնագր, որ ուներ ինքը՝ Սիրանույշը: Այդ բնագրով նա, երբեմն չգիտակցելով էլ, իր դեր-կերպարներում միախառնում էր դասականությունն ու արդիականությունը, արվեստի բարձր, անանց սկզբունքները եւ կենդանի իրականության թրթիռները: Հավատարիմ էր մնում արվեստի հավեր-

ՀԱՅ ԲԵՄԻ ԱՌԱՋՆՈՒՅԻՆ

էր համազգային փառք ու ճանաչում: Միայն նախնական կրթություն ստացած Սերուպե Գանթարջյանը պիտի դառնար «հայ բեմի լուսատու աստղը», «հայ ցեղի պարծանքներից մեկը»: Պիտի դառնար շուրջ 300 դեր խաղացած Սիրանույշ: Եվ դարձավ: Ինչպե՛ս:

Բնատուր շռայլ օժտվածությամբ ու տաղանդով: Արտաքին ու ներքին տվյալների, ծայրի, հոգե-բարոյական, մարդկային կերտվածքի հազվագյուտ հարստությամբ ու նրբությամբ: Բացառիկ աշխատասիրությամբ, իր արվեստին նվիրվելու ջերմեռանդությամբ: Կամ հանգամանքների բարենպաստ դասավորությամբ ու ընթացքով:

Այո, Սիրանույշի արտիստական շնորհներն սկզբից եւեթ ակ-

կապվեց թատրոնին, դեռատի ընդունվեց Մաղաթյանի, ապա Վարդույանի թատերախմբերը, բեմական դպրոց անցավ այդ հմուտ վարպետների ձեռքի տակ, ոգեւորվեց գտած հաջողությամբ...

Բայց Սիրանույշը Սիրանույշ դարձավ այն օրինաչափությամբ, որ մեծությունները ծնվում են, երբ հասարակությունն սպասում է նրանց, ու երբ նրանց առաքելությունն է նշանակալից...

Հիրավի մեծ էր Սիրանույշի առաքելությունը հայ մշակութուն: Աղանջանից հետո նա իր արվեստով ու անձով պիտի կամրջեր արեւմտյան եւ արեւելյան բեմերը, հաստատուն բուն լինելու նույնարմատ, բայց երկճյուղ այն ծառի համար, որ կոչվում էր հայ թատրոն: Եւ ազգային միասնական արվեստում օրգանապես մեկտեղեր դա-

ժական գեղեցկությանը եւ արձագանքում ժամանակի մղումներին՝ յուրովի արտահայտելով հարազատ ժողովրդի տրամադրություններն ու մտածումները:

Սիրանույշին հաճախ հանդիմանում էին իր պոլսական խաղացանկի դերերից ու խաղաոճից լիովին չիրաժարվելու համար, մոռանալով, որ դրանով նա ոչ միայն պահպանում է իր կապը ակունքների հետ, այլեւ բերում մի գույն, որ ինչքան էլ «հին» լինել կամ թվար, այնուամենայնիվ, իր ինքնօրինակ արվեստի բնական երանգներից էր: Վիճում էին նաեւ այն հարցի շուրջը, թե Սիրանույշը ճի՞շտ է վարվում արդյոք, ավելի հաճախ դիմելով դասական խաղացանկի դերերին, եւ համեմատաբար քիչ՝ ազգային թատերագրության կենցաղային հանգի կերպարներ-

րին: Այս դեպքում էլ հարկ եղածին պես չէր կարելորվում այն, որ դերասանուհու դասական անձնավորումները միշտ եւ առանց բացառության ամենամիջական ու սերտ աղերս ունեին արդիականության հետ, դրա՛ն էին ուղղված: Եւ որ ազգայինը Սիրանույշի արվեստում դրսեւորվում էր սովորականից տարբեր ձեւ ու կերպով: Ճիշտ է նկատված, որ Սիրանույշին խորթ էր ազգայինի զուտ արտաքին հատկանիշների ընդգծումը: Ճշմարիտ արվեստը չի կարող զուրկ լինել ազգային դիմագծից, բայց որոշակի դիմագիծ ունենալու համար դա նախ պիտի արվեստ լինի, այսինքն՝ կենսական, մարդկային եւ գեղարվեստական ճշմարտություն կրի իր մեջ: Սիրանույշը նախ այս վերջիններին էր հետամուտ եւ այդ չափանիշով էր գնահատում իր եւ այլոց ստեղծագործությունը:

Վերկենցաղային, բայց ոչ վերացական արվեստով, կատարյալ տեխնիկայով, իր անզուգական «անձնականությամբ» ու ողբերգական անկեղծ շնչով Սիրանույշը կենդանություն է տվել բազում անկենդան դերերի՝ եթե, իհարկե, տեսել է դրանցում ճշմարիտ գեղարվեստականության թեկուզ մի հատիկ, մի կայծ: Նա կարողանում էր նկատել դրանք, բոցավառել իր կրքոտ ներքինով, բեմում բռնկելով մի հրդեհ, որի տաք շնչից ալեկոծվում էր դահլիճը:

Այդ հրդեհը, իհարկե, շատ ավելի ուժգին էր բորբոքվում լիարժեք այն կերպարներն անձնավորելիս, որ կազմել են Սիրանույշի դերացանկի զարդը. Մեղեա, Հովհաննա, Մարգարիտ Գոտիե, Ջեյմաբ, Ռուզան, Համլետ...

«Սիրանույշը Ռուզանի կերպարն անձնավորելով նպատակ է ունեցել հայ աղջկան, հայ երիտասարդությանն ընդհանրապես մղել «դեպի վեհ, ազնիվ զգացմունքներ», դեպի «բարձր, ազնիվ աշխարհը: Եւ նա... իր նպատակին հասել է լիովին»:

Սիրանույշի Համլետի մեջ կային «ե՛ւ արդարության եւ ճշմարտության ձգտումներ, ե՛ւ ցասումնալից վրեժխնդրության վճիռ, ե՛ւ դառն բողոք բարոյական աշխարհակրթությունների դեմ, թունա-

վոր ծաղր ստորաբարշության, դավաճանության, սրբապղծության վրա, ե՛ւ հոգեկան տարուբերումներ, ե՛ւ տանջող խոհերի բեռ»:

Եւ այսպես, ժամանակակիցները, Սիրանույշի կյանքին ու գործին նվիրված հետազոտությունների հեղինակները միահամուռ վկայում են դերասանուհու արվեստի կատարելությունը, ամբողջությունը, անկրկնելիությունը: Սիրանույշին համեմատել են Սառա Բեռնարի, Էլենորա Դուզեի, Ֆեդոտովայի եւ այլոց հետ, համարել «Հայկական Սառա Բեռնար», «Հայկական Ֆեդոտովա» եւ այլն: Բայց նա ինքն էր՝ Սիրանույշը, որի անունը որեւէ այլ մակդիր չի ընդունում քան՝ հայ մեծ դերասանուհի:

20-րդ դարասկզբի բարդ, հակասական իրականության մեջ Սիրանույշի արվեստը ասես յուրատեսակ մի կողմնացույց լինել, որ հայ առաջադեմ մտավորականությանը, երիտասարդությանը, ողջ հասարակայնությանը տալիս էր դրական լիցքեր, ազնվության դասեր, արդարության համար ոգեւորելու մղումներ: Դրա համար էլ այնքան անվերապահ ու բուռն էր նրա հանդեպ հանդիսականների սերը, հիացումը, որ հիմա էլ, շատ տասնամյակներ անց, կարծես լսում ես ծափերի ու հիացմունքի արձագանքը, եւ այսօր էլ մեր ժողովրդի երախտապարտ սրտում հառնում է հայ բեմի առաջնուհու՝ Սիրանույշի շողշողուն կերպարը:

Սիրանույշի (ինչպես եւ մեր բեմի մյուս մեծերի) դեպքում իր իմաստը կորցնում է այն միտքը, թե դերասանի արվեստն անցողիկ է, կորչում-չքանում է իր հետ միասին: Ո՛չ, իսկական, մեծ ու վեհ, իրո՛ք մարդկային եւ իրո՛ք ժողովրդական բեմարվեստը չի չքանում, այլ մտնում է ակամատես սերունդների արյան մեջ, դառնում նկարագիր, բնավորություն եւ հենց դրանով՝ անմահանում ու հավերժանում...

Այդպես անմահ ու հավերժ է Սիրանույշի անզուգական արվեստը:

Խաչատուր Ավագյան
Արվեստի վաստակավոր գործիչ



Համլետի դերում



Ռուզան

քանդակ



ԿՐՔՈՏ ՏԱՂԱՆԴԻ ՉԱԿՈՐ ԳՅՈՒՐՋՅԱՆԻ ՈՒԺԸ

20-րդ դարի առաջին կեսի հայ քանդակագործության ամենավառ ներկայացուցիչ Հակոբ Գյուրջյանի (1881-1948) ծննդյան 125-ամյակին նվիրված ցուցահանդեսը Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց 2006 թ. դեկտեմբերին: Առաջին անգամ էին ներկայացվում հեղինակի գունավոր մատիտներով, կավճաներկերով, ջրաներկերով եւ տուշով կատարված 20 գրաֆիկական աշխատանքները, դիցաբանական, աստվածաշնչյան թեմաներով հորինվածքները, հուշարձանների էսքիզները:

Շուշի քաղաքն էր Հակոբ Գյուրջյանի ծննդավայրը, ուր սկիզբ էր առել քանդակագործության հանդեպ ունեցած նրա նախասիրությունը:

Հ. Գյուրջյանը ապրել է ստեղծագործել է տարբեր երկրներում, տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերում: Երկար ժամանակ, շուրջ 40 տարի ապրելով Փարիզում, Գյուրջյանը մնաց հայրենասեր, հարազատ իր արմատներին: Այժմ նրա գործերը, որպես մնացորդ, հայ ժողովրդի սեփականությունն են: Դեռեւս քանդակագործի կենդանության օրոք ազգային պատկերասրահում իրենց տեղն ունեին Գյուրջյանի վաղ շրջանի գործերը, իսկ մահից հետո, 1958 թ., Հայաստան ուղարկվեցին Փարիզի արվեստանոցում մնացած նրա բոլոր գործերը՝ 400-ից ավելի աշխատանքներ:

1899-1904 թթ. Հակոբ Գյուրջյանն ապրել է սովորել է Մոսկվայում՝ Ֆիդլերի մասնավոր ռեալական ուսումնարանում: Այդ ժամանակ այնտեղ գործել են մի խումբ նշանավոր արձանագործներ՝ Տրուբեցկոյը, Անդրեյեւը, Առնոլդը եւ այլք: Գյուրջյանը բարերար ազդեցություն էր կրել նրանց հետ շփվելով:

Հակոբ Գյուրջյանն առիթնուղ արտաքին ուներ. թիկնեղ էր, սեւ սաթի պես փայլուն մազերով, թավ հոնքերով, թուխ դեմքով ու անթերի ատամնաշարով... Եվ ապոլոնյան արտաքինով արձանագործը կերտում էր նուրբ ու զգալուն մարմարյա ֆիգուրներ: Նրա յուրաքանչյուր ստեղծագործության մեջ, ռելյեֆ լինի, թե թեմատիկ-կոմպոզիցիոն գործ, դիմաքանդակ, թե անիմալիստական աշխատանք, առաջին հերթին տաղանդն էր առկայծում, կրքոտ արվեստագետի կրքոտ վերաբերմունքը: Մեղմ

սիրտ ուներ, բայց արվեստում մեծ կրքերի մարդ էր:

Երիտասարդության տարիներին Փարիզում նա երգել է Կարա-Մուրզայի (Գրիգոր Միրզայանի) դեկավարած երգչախմբում, իսկ հանդամիրյանների հայտնի դահլիճում Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացման մեջ նա խաղացել է Աբիսոդոն աղա, հայ մեծ դերասանուհի Սիրանուշի հետ: Հ. Գյուրջյանը ընդունվել էր Ժյուլիենի գեղարվեստի ակադեմիան եւ, Մաքսիմիլիան Գոտիեի վկայությամբ, ակադեմիայի ուսուցիչները զարմացել էին, որ Գյուրջյանը նախկինում որեւէ ակադեմիայում քանդակագործության արվեստ չի ուսումնասիրել: Լինելով Օ. Ռոդենի առաջին աշակերտներից՝ կրում էր ռոդենյան արվեստի հմայքը: Տարիներ անց՝ 1914 թ., Գյուրջյանն ասել է, որ ինքը Ռոդենի ազդեցությունը արդեն թոթափել է:

Հ. Գյուրջյանի «հերոսները» քնարական կերպարներ են: Խորը զգացումով էր նա ճկուն, շնչավորում պլաստիկ ֆորման, ներդաշնակում տեսանելի ու զգայականը: Նա տիրապետում էր քանդակագործական բոլոր նյութերին՝ հմտորեն մշակում էր գրանիտը, մեծ վարպետությամբ մարմարից «քնքշանք էր կորզում», կատարելության հասցնում բրոնզե



քանդակ

ծուլվածքները՝ օգտագործելով նրա ռեֆլեքսների հարստությունը, զգում էր թրձակվել: Տեխնիկային կատարելապես տիրապետելով, նա հասնում է ռճային առանձնահատկությունների: Քանդակագործը ստեղծում է «նոր արխաիզմի» նուրբ ու բարձրարժեք հորինվածքներ:

Գյուրջյանն արձանագործության մեջ ուներ իր բանալին (ինչպես երաժշտության մեջ են օգտագործում բանալին), սակայն ամեն քանդակ նույն բանալիով չէր լուծում: Հին մշակույթի ավանդներից Գյուրջյանը հասել էր նոր ժամանակների արվեստին՝ իմպրեսիոնիզմին եւ կուբիզմին՝ միշտ հավատարիմ մնալով իր ուրույն ոճին: «... Նա կրել է բազմաթիվ ազդեցություններ, սակայն լավ մարտել է, արյան մեջ քաշել ու հիմա դժվար է մի որեւէ «իզմով» նրան բնորոշել», արվեստագետի մասին գրել է Երվանդ Քոչարը: Ինքը՝ Գյուրջյանը, Պրահայի սլավոնական ինստիտուտի առաջարկած հարցաթերթիկում գրում է. «Իմ արվեստը բազմակողմ է: Գաղափարները, որ մարմնավորել եմ, հաճախ հուշել են իրենց՝ ձեւերը: Բոլոր այդ «իզմերը» հորինել է դարը, որոնց մասին գաղափար չունեին արվեստի լավագույն ժամանակների արտիստ-


Սալոն



ները: Նրանք արվեստ էին ստեղծում, իսկ հիմա «իզմեր» են շինում: Քանդակ պետք է համարել այն, ինչը կերտված է քանդակագործության օրենքներով, այսինքն այն, ինչը ունի երեք հատկանիշ՝ դեկորատիվություն, մոնումենտալություն եւ կոմպոզիցիա»: Հակոբ Գյուրջյանը համագործակցել է հայ արվեստագետների «Անի» միության հետ, մասնակցել է նրա կազմակերպած ցուցահանդեսներին, օգնել հայ արվեստագետներին ասպարեզ դուրս գալ:

1927 թ. Փարիզի «Ժորժ պոլի» սրահում բացվեց «Անիի» կազմակերպած առաջին ցուցահանդեսը, ուր ներկայացված էր տաղանդների մի համաստեղություն: Մշակութային Ֆրանսիան, որ ճանաչում էր հայ արվեստի հատուկենտ ներկայացուցիչների, կարծես ցնցվեց, զարմացավ, ապա եւ հիացավ, որ 1915 թ. Եղեռնից մազապուրծ ազգն իր մեջ այդքան հոգեւոր լիցք ունի եւ ամենեւին չի կորցրել գեղեցիկը զգալու, վերարտադրելու կարողությունը: Ֆրանսուա Պոլ Ռեյնալը հիացմունքով է գրում հայերի մասին, ներկայացնելով Նարեկացուն, Պեշիկթաշյանին, Ջիվանուն եւ իր ժամանակակիցներին՝ Արշակ Չոպանյանին, Էդգար Շահինին եւ «մի շատ զորեղ քանդակագործի» Հակոբ Գյուրջյանին»:

1928 թ. Բելգիայում, Բրյուսելի արվեստների պալատում «Անի» միության կազմակերպած երկրորդ ցուցահանդեսում Գյուրջյանը զովասանքների արժանացավ Ալբերտ Առաջին թագավորից ու թագուհուց: Թագավորը նկատում է. «Մեր արվեստագետները անցել են ավելի փափուկ նյութերի, մինչդեռ օտարները բելգիական գրանիտ են «կրծում»: Սրանք ավելի երկար կապրեն»: Բելգիական կառավարությունը գնում է Գյուրջյանի «Սպիտակ կատուն»: Քանդակագործին իր դիմաքանդակն է պատվիրում Բելգիայի արվեստների



Գարեգին Չովսեփյանի դիմաքանդակը

պալատի հիմնադիրը՝ Անրի լե Բյոֆը, ապա եւ Դանիայի թագաժառանգը՝ մեծ իշխան Հաագը:

Հակոբ Գյուրջյանը լավ գիտեր իր ստեղծագործության արժեքը, եւ գուցե հենց դրա համար էլ նրան զնահատում եւ վարձատրում էին ըստ արժանվույն: Տեմի Ռոշը 1932 թվականին նրա ալբոմի առաջաբանում իրավացիորեն գրել է. «Հ. Գյուրջյանի գործերը ամբողջ աշխարհի սիրտն են գրավել իրենց ճշմարտացիությամբ»: 1910 թվականից մինչեւ կյանքի վերջը Հ. Գյուրջյանը բազմաթիվ ցուցահանդեսների է մասնակցել Փարիզում, Բրյուսելում, Նյու Յորքում, Տոկիոյում, Բեռլինում, Պրահայում, Լյուքսեմբուրգում, Ամստերդամում, Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում: Կենսասեր արվեստագետի սիրտը դադարեց բաբախել զբոսանքի ժամանակ: 1948 թ. դեկտեմբերի 27-ին ժան Գուժոն փողոցում զսնվող հայոց եկեղեցուն Փարիզը նրան հրաժեշտ տվեց: Գյուրջյանի անձն ու գործը անմահ են, որովհետեւ նա իր ողջ կյանքն ու ստեղծագործությունը նվիրաբերել է հանրությանը: «Գյուրջանական» դպրոցը, որը ստեղծվել էր դեռեւս իր կյանքի օրոք, շարունակվեց եւ իր ազդեցությունն ունեցավ հայ քանդակագործների բոլոր սերունդների վրա:

Անահիտ Մարգարյան
ՀԱՊ-ի գիտաշխատող

ԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ, ԵՐԲ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՊԵՏՔ Է ՊԱՐՏԱԴՐԱՆՔ ԴԱՌՆԱ

**ասում է
Հայաստանի
ազգային
պատկերասրահի
տնօրեն
Փարավոն
Միրզոյանը,
ով արդեն հինգ
տարի
ղեկավարում է
արվեստի
ամենահարուստ
հավաքածուն իր
ցուցասրահ-
ներում եւ
ընդերքում
պահող
թանգարանային
հսկա
կառույցը:**

25 հազարից ավելի նմուշներ ունեցող պատկերասրահը վերա-նորոգումից ու վերաբացումից հետո լուծեց քննուցման հույժ կա-րեւոր խնդիրներից մեկը, ավելաց-րեց սրահներն ու մշտական ցուցա-դրության ծավալը:

Պատկերասրահների աշխա-տառճը սովորաբար անուղղակի-որեն նմանվում է իր ղեկավարի բնավորությանը: Մեր պատկերաս-րահի աշխատառճն էլ կրում է գե-ղանկարիչ Փարավոն Միրզոյանի բնավորության գծերը՝ շատ զուսպ, ուշադիր ու պահանջկոտ: «Մենք առաջին հերթին ազգային արժեք-ների պահպանողն ենք,- ասում է նա, -ազգային կերպարվեստը պետք է նման լինի մեր ավանդույթ-ներին: Արվեստն իհարկե ազգու-թյուն է ճանաչում, բայց ամեն մի ազգ իր արվեստն ունի: Չեն կարող համաշխարհային ճանաչում ունե-նալ այն նկարչի գործերը, որոնց մեջ ազգայինը չի երեւում: Նայելով նկարին պետք է հասկանաս, թե որ ազգի ներկայացուցիչն է»:

Վերջին տարիներին մարդիկ սկ-սել են ավելի հաճախ պատկերաս-րահ այցելել: Եվ սա թերեւս ամենա-ոգելորիչ փաստն է մեր հասարա-կության համար:

- Կարելի՞ է ասել, որ ձեր տնօրի-նության հինգ տարիների ընթաց-քում փոխվել է պատկերասրահի մտածելակերպը:

- Փոխվել է աշխատառճը, ողջ աշխատանքը դարձել է ավելի իմաստալից: Երբ դարձա տնօրեն, առաջին հերթին ցանկացա, որ պատկերասրահն իսկապես ազ-գային թանգարան դառնա ու լի-արժեքորեն մտնի համրապետու-թյան մշակութային կյանքի մեջ: Մենք ցանկանում ենք, որ պատկե-րասրահը յուրահատուկ մշակու-թային ու կրթական կենտրոնի վե-րածվի: Պատկերասրահի բոլոր ցուցադրությունները նաեւ կրթա-կան դեր են կատարում: Եզիպտա-կան, հունական, իտալական ար-վեստը պետք է օգնեն այցելունե-րին լավ պատկերացնել պատմու-

թյունն ու արվեստի գործերի ար-ժեքը: Այդ իմաստով եզիպտական եւ հունական սրահների բացումը ուղղակի անհրաժեշտ էր: Այժմ այդ սրահներում կարելի է դասախոսու-թյուններ անցկացնել, դասեր վա-րել: Եւ ես մեծ գոհունակությամբ եմ տեսնում, թե ինչպես են գեղար-վեստի ակադեմիայի, համալսարա-նի ուսանողներն այդ սրահներում դասեր անցկացնում:

Մինչեւ 7 տարեկան երեխանե-րի, թոշակառուների, մշակութային բուհերի ուսանողների, պատերազ-մի վետերանների մուտքը պատկե-րասրահ անվճար է: Քաղաքապե-տարանների եւ թաղապետարան-ների հետ մենք դպրոցներին արո-նեմենտներ ենք բաժանում: Ուրա-խալի է, որ դպրոցականները շատ կազմակերպված են պատկերաս-րահ այցելում: Հիմա նման այցելու-թյունները մենք ծրագրում, նաեւ ինչ-որ տեղ պարտադրում ենք: Եր-բեմն երեխային սովորեցնելու հա-մար հարկավոր է նաեւ նրան պար-տադրել:

- Ինչպիսի՞ փոփոխություններ են արվել պատկերասրահի աշխա-տանքային ծրագրերում:

- Հայ կերպարվեստը, որը հա-վաքածուի մեծ մասն է կազմում, ներկայացված է ըստ դարաշրջան-ների եւ ըստ հեղինակների:

Նորություն էր Արեւելքի սրա-հի բացումը: Մեր Արեւելքի հավա-քածուն բավականին հարուստ է, իսկ մարդիկ շատ նմուշների ծա-նոթ չէին: Չինական, ճապոնական, պարսկական եւ հնդկական կիրա-ռական արվեստի նմուշները շատ արժեքավոր են: Մենք այժմ նաեւ երկու հիամալի սրահներ ունենք, որոնք համապատասխանեցվել են գրաֆիկական աշխատանքնե-րի ցուցադրման յուրահատուկ պա-հանջներին:

Հետագայում պետք է քանդա-կի սրահների մասին մտածել: Մոտ ժամանակներում կբացվի Հակոբ Գյուրջյանի քանդակների ցուցադ-րությունը: Այդ հավաքածուն պատ-կերասրահի ֆոնդերում է գտնվում եւ երբեք ամբողջովին չի ցուցադր-

վել: Պատկերասրահը որպես ճար-տարապետական կառույց հարմա-րեցված չէ քանդակների ցուցադ-րությունների համար: Այսօր զգաց-վում է, որ մենք տարածքների մեծ պահանջ ունենք:

- Այցելուների թիվն ավելացել է: Ձեր կարծիքով, ինչի՞ շնորհիվ է դա տեղի ունեցել:

- Այցելուների հոսքից կարելի է եզրակացնել, որ մենք կարողա-ցանք «դսի» մարդկանց հետա-քրքրել մեր պատկերասրահով: Դա տեղի ունեցավ նաեւ կինոդի-տումների շնորհիվ, որոնք պարբե-րաբար անցկացվում են իններորդ հարկում: Հաշվի առեք, որ ցուցա-դրվող ֆիլմերը բացառապես ար-վեստի մասին են: Երաժշտությու-նը նույնպես մուտք գործեց պատ-կերասրահ: Այս տարի տեղի ունե-ցավ «Ազգային պատկերասրահ» երրորդ երաժշտական միջազգա-յին փառատոնը: Երաժշտությունն ու կերպարվեստը միասին ներկա-յացնելու փորձը շատ արդյունա-վետ էր:

- Գիտական աշխատանքն ինչ-պե՞ս եք զննահատում:

- Գիտական աշխատանքը որա-կապես բարելավվել է: Հրատա-րակվել են տասնյակ կատալոգ-ներ, ալբոմներ, բուկլետներ: Վեր-ջին ալբոմներից կարող եմ նշել «Ռուսական ավանգարդը», «Հա-կոբ Գյուրջյան» եւ «Հովնաթանյան-ների արվեստը» «Եղիշե Թադևու-սյան», «Վանո Խոջաբեկյան» ալ-բոմները: Պատկերասրահի գիտաշ-խատողները հանդես են գալիս գի-տական հոդվածներով: Չեմ կարող չնշել նաեւ «Հայ արվեստ» ամսա-գիրը՝ հայերեն եւ անգլերեն տպա-գրությամբ, որը լայնորեն պրոպա-գանդում է մեր արվեստը: Ազգային պատկերասրահն արդեն երրորդ տարին աջակցում է ամսագրի տպագրությանն ու տարածմանը: Գործում է նաեւ պատկերասրահի բավական հարուստ ինտերնետա-յին կայքը (www.gallery.am):

- Թեմատիկ եւ հեղինակային ցու-ցադրումների թիվն ավելացե՞լ է:

- Ոչ միայն ավելացել, այլեւ ավե-

լի կազմակերպված է դարձել: Կազ-մակերպում ենք միջազգային ար-վեստը ներկայացնող ցուցադրու-թյուններ. Մաքս Էրնստի, Ժորժ Բրակի, Տոնիո Գուերայի, Գրոյի եւ այլոց:

Մենք համագործակցում ենք նաեւ դեսպանատների հետ եւ մի-ջոցառումների շարքում ընդգր-կում ենք այլ երկրների կազմակեր-պություններին: պատկերասրահը միջազգային համբավ է ձեռք բե-րում նաեւ իր հավաքածուի գլուխ-գործոցները բազմաթիվ երկրնե-րում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներում ներկայացնե-լու շնորհիվ:

Ճապոնացի նկարիչների հետ մենք կազմակերպեցինք «Արա-րատ եւ Ֆուժիյամա» ցուցահանդե-սը: Պատկերասրահը մասնակցեց Ֆրանսիայում Հայաստանի տար-վա շրջանակներում անցկացված միջոցառումներին: Փարիզի ծովա-յին թանգարանում ներկայացվեց Այվազովսկու «Ծովի պոեզիա» ցու-ցադրությունը, Փոփ Պալեում կազ-մակերպված «Կերպարվեստը Հա-յաստանում 1830-1930 թթ.» ցուցա-հանդեսը եւ այլն:

- Ինչպե՞ս կարելի է նկատել, բա-վականին երիտասարդացել է պատկերասրահի գիտաշխատող-ների կազմը:

- Համոզված եմ, որ սերնդափո-խությունը ժամանակին պետք է կատարվի, եւ կարելորը ոչ թե տա-րիքային հարցն է, այլ տարիքային կապը: Երբ տնօրեն դարձա, նկա-տեցի, որ գիտաշխատողները մեծ մասամբ հիսունն անց մարդիկ են: Կարճ ժամանակահատվածում կո-լեկտիվը համալրեցինք մասնագի-տական կրթություն ստացած երի-տասարդներով: Միաժամանակ նկատեմ, որ թանգարանային գի-տությունը հիմնականում ոչ թե բու-հերում են սովորում, այլ հենց թան-գարանում: Հետեւաբար պատկե-րասրահի աշխատողը պետք է կազմավորվի տարիների ընթաց-քում, շփվելով ավագ սերնդի մաս-նագետների հետ:

- Իսկ արտասահման ուսման ուղարկելու փորձեր արե՞լ եք:

- Հիմնական ուսումը հենց պատ-կերասրահում է տեղի ունենում: Արդեն մի քանի տարի ռեստավրա-ցիայի բաժնի աշխատակիցներին վերապատրաստման ենք ուղար-



կում Մոսկվա: Պայմանավորվածու-թյուն ունենք Ճապոնացիների հետ, որոնք շուտով ռեստավրացիոն նոր սարքեր են տրամադրելու եւ մեր աշխատակիցներին կսովորեց-նեն դրանցից օգտվել:

- Իսկ նոր աշխատանքներ պատ-կերասրահը կարողանո՞ւմ է գնել, թե՞ միայն նվիրատվություններ են լինում:

- Թանգարաններն անպայման պետք է պետական օժանդակու-թյուն ստանան ու պետության հս-կողության տակ լինեն: Երբ եկա այստեղ աշխատելու, պատկե-րասրահի հաշվին գումար չկար, որպեսզի կարողանայինք անզամ գրելու թուղթ գնել: Իսկ այսօր, բա-րեբախտաբար, կարողանում ենք գնել ինչ որ անհրաժեշտ է աշխա-տանքի համար, ու նաեւ նոր ստեղ-ծագործություններ ձեռք բերել: Վերջերս գնել ենք Ալեքսանդր Բաժ-բուկ-Մելիքյանի, Դմիտրի Նալ-բանդյանի, Արփենիկ Նալբանդյա-նի, Սարգիս Խաչատրյանի եւ ժա-մանակակից նկարիչների գործեր: Հինգ տարում գնվել է շուրջ 100 ստեղծագործություն եւ ստացվել մոտ 800 նվիրատվություն հայե-րից եւ օտարներից:

- Իսկ այսօր ո՞րն եք համարում պատկերասրահի թիվ մեկ խնդիրը:

- Օդափոխություն հարցն է շատ կարելոր: Առաջին երեք հարկե-րում օդափոխության համակար-գը տեղադրված է, սակայն պատ-կերասրահի շենքի կառուցվածքը ստիպում է օդափոխման համա-կարգը հիմնովին վերակառուցել: 2008 թվականին կարծում եմ այդ հարցը լուծվելու է: Իսկ ընդհան-րապես պատկերասրահի աշխա-տանքն ամենօրյա է, եւ երբեմն նույ-

նիսկ օրը չի բավականացնում:

- Պատասխանատու այրերը որպես կանոն հազվադեպ են իրենց ընտանիքների հետ թանգա-րաններ այցելում: Ինչո՞ւ է այդպես:

- Թանգարան այցելելը առանձ-նահատուկ կուլտուրա եւ դաստիա-րակություն է: Մարդու արյան մեջ պետք է այդ կուլտուրան լինի: Մար-դուն դաստիարակելը դանդաղ պրոցես է, որն առաջին հերթին ըն-տանիքից է կախված: Ժամանակ է պետք, որպեսզի թանգարան այցե-լելու ավանդույթ ստեղծվի: Նկար-չությամբ կամ երաժշտությամբ զբաղվելը երեխայի համար պար-տադիր է, եւ բոլորովին էլ պետք չէ, որ նա ապագայում նկարիչ կամ երաժիշտ դառնա, նա, այդպիսով, պարզապես կրթված մարդ է մեծա-նում:

Ամփոփելով ասեմ, որ ազգա-յին պատկերասրահի հիմնական առաքելությունը մեր ազգային գե-ղարվեստական արժեքների ապա-հով պահպանությունն է ու արդի-ական պահանջներին համապա-տասխանող ցուցադրությամբ ներ-կայացնելը: Դրան ցուգահեռ խն-դիրներ են հավաքածուի ուսում-նասիրությունն ու հարստացումը, ցուցահանդեսների ու արվեստը պրոպագանդող այլ միջոցառում-ների կազմակերպումը, իրատա-րակությունների իրականացումը եւ այլն: Բայց, որպեսզի մեր առա-քելությունն իր նպատակին հաս-նի, նախ եւ առաջ անհրաժեշտ է, որ մարդիկ զան պատկերասրահ եւ այն համարեն իրենց հարազատ «արվեստի տունը»:

**Զրույցը վարեց
Նունե ՀԱՆՎԵՐԴՅԱՆԸ**

Հայ կին արվեստագետների ցուցահանդես Նյու Յորքում



Հիլդա Էքմեքչյան-Ուիթերսփուն, Թամար Գասպարյան-Չեսթեր

Հոկտեմբերի 4-ին Նյու Յորքում առաջին անգամ մեկ տանիքի տակ ներկայացվեցին բացառապես հայ կին արվեստագետների աշխատանքներ: Բազմաթիվ հայեր եւ օտարերկրացիներ էին ներկա բացման արարողությանը: Ցուցահանդեսի նպատակն էր համախմբել սփյուռքի հայ կին արվեստագետներին եւ հնարավորություն տալ արվեստասեր հասարակությանը տեսնել եւ գնահատել նրանց արվեստը: Մեզ՝ համադրողներիս (Ամեր Աբնուսին եւ ինձ) անչափ հետաքրքրում էր, թե քանի ժամանակակից կին արվեստագետ կա, որոնց մասին մենք չգիտենք: Իմ հավաքած տեղեկությունների շնորհիվ գիտեմք արդեն հաստատված արվեստագետներ Նինա Խաչատրյանի, Նորա Չավուշյանի, Բարբարա Եթերյանի եւ Երեւանում ՄԺԱԿ-ի հիմնադիր Սոնյա Բախսանյանի մասին: Նոր տաղանդավոր նկարիչներ գտնելու հույսով ցուցահանդեսի մասին հայտարարությունը տեղադրվեց տարբեր ինտերնետային կայքերում: Արդյունքում ընտրվեց քսաներեք արվեստագետի երեսուներկու տարբեր

ոճի եւ տեսակի աշխատանք՝ գեղանկար, քանդակ, ջրաներկ, գծանկար, լուսանկար, կոլաժ եւ ասամբլեաժ, ու չնայած ներկայացված աշխատանքների այս բազմազանությանը, նրանցից շատերում կարելի էր տեսնել հեղինակի ուղղակի կամ անուղղակի անդրադարձը հայկական մշակույթին ու պատմությանը:

Բոստոնաբնակ Մարշա Նուրիցա Օդաբաշյանն իր կտավներում հակադրում է հայկական միջնադարյան արվեստի եւ ժամանակակից արեւմտյան մշակույթի էլեմենտները: Մանրանկարչությունից ոգեշնչված կերպարները հայտնվում են ժամանակակից մանկական գրքերի նկարազարդումներից ոգեշնչված կերպարների կողքին: «Այս աշխատանքում ես փորձել եմ արտահայտել հիշողության եւ վերափոխման վերացարկումը», - ասում է նկարչուհին:

Թալին Մեղերյանի ներկայացրած աշխատանքի ոգեշնչման առարկան հենց իր մազերն են: Նկարչուհու համար մազի հյուսը հայ կնոջ սիմվոլն է: «Ես հավատում եմ, որ մազերի այս պատկերները հատուկ ուժ ունեն, իսկ հյուսած մազն առավել եւս», ասում է նկարչուհին: Գուաշով արված իր նկարների միջոցով Թալինը պատմում է Հայոց ցեղասպանության բոլորիս հայտնի պատմությունները:

Բնության մեջ առկա ձեւերն ու նախշերն են ընկած Արթի Ճենեթեան-Նաճարեանի աշխատանքների հիմքում: «Պենելոպե» մատիտով, քանաքով, կարմիր թելով եւ Վատիկանի քանդակները պատկերող գրքի թերթերով արված մի գործ է: «Աշխատանքն սկսելիս սովորաբար մտքումս ծրագիր ունեմ, բայց հետո նկարչությունն ինքն իր մեջ զարգանալով մեկ այլ ուղղություն է ստանում, եւ ես սիրում եմ տեսնել, թե ինչպես է այն զարգանում այդ բանական ճանապարհով», ասում է նա: Թղթի սպիտակ տարածությունը եւ նկարչության հետ դրա հարաբերությունը Արթիի համար նույնքան կարեւոր են, որքան նկարչությունն ինքնին: Ինչպես նկարչուհին է ասում. «Ես փորձում եմ իրոք հասկանալ իմ պատկերման առարկան եւ նույնիսկ աշխատանքի գրեթե վերջում նկարում եմ աչքերս փակ, թողնելով, որ միտքս մատիտի միջոցով ձուլվի թղթին: Արդյունքում նկարն ինձ ավելի բնական է թվում»:

Այցելուների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրին նաեւ Նորա Չավուշյանի, Թալին Պերպերյանի, Սյուզան Անուշյանի եւ Բարբարա Յեթերյանի աշխատանքները: Հատուկ ուշադրության արժանացան Հիլդա Էքմեքչյան-Ուիթերսփունի, Լուսի Քալյանի, Լին Գուլեզյանի եւ Վարդենիի աշխատանքները:

Հոկտեմբերի 5-ին նույն վայրում Հայ բանաստեղծության համացանցի համադրող Լոլա Գունտաքճեանն անցկացրեց հայ ժամանակակից պոեզիայի երեկո, որին մասնակցում էին հայ եւ օտարազգի գրողներ: Լոլա Գունտաքճեանը ցուցահանդեսին մասնակցում էր նաեւ ջրաներկ աշխատանքներով:

Հոկտեմբերի 6-ին անցկացվեց քննարկում, որի ընթացքում արվեստագետները խոսեցին ներկայացված աշխատանքների, ինչպես նաեւ հայ եւ սփյուռքահայ ժամանակակից արվեստի խնդիրների մասին: Արվեստագետներն անչափ կարեւորեցին նման ցուցահանդեսների կազմակերպումը, քանզի նրանցից շատերը չգիտեին անգամ, որ այսօր իրենց կողքին այդքան հետաքրքիր ժամանակակից արվեստագետներ են ստեղծագործում:

Թամար Գասպարյան-Չեսթեր

Արվեստաբան, ցուցահանդեսի համադրող



Մարշա Նուրիցա Օդաբաշյան
Marsha Nourica Odabashian

Լին Գուլեզյան
Lynne Dian Gulezian

Նորա Չավուշյան
Nora Chavooshian



Թալին Մեղերյան
Talin Megherian

ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱԴՅԱՆ

ՉՈՒՇԱՀԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ



Օճվային տեսարան (Սբ. Ղազար), 1892 թ. / Seascape (St. Lazar), 1892

Բնանկար (մասնավոր հավաքածու) / Landscape (personal collection)



GEVORG BASHINJAGHIAN
Exhibition in National Gallery of Armenia

Արվեստը գնահատել եւ գնահատել տալ...



Տեր եւ տիկին Ռաֆֆի եւ Շողակ (Վիկի) Յովհաննիսյաններին լավ են ճանաչում թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում։ Նրանք քաջածանոթ են հատկապես արվեստասեր շրջանակներին, նրանց հովանավորությամբ բազմաթիվ տեղական ու միջազգային ցուցահանդեսներ են կազմակերպվել, պատկերազրբեր տպագրվել, բարեգործական տարաբնույթ միջոցառումներ իրականացվել։

Ծնունդով Մերձավոր Արեւելքից լինելով (Ռաֆֆին ծնվել է Երուսաղեմում, Շողակը՝ Բեյրութում)՝ նրանք աճել ու հասակ են առել հայաշունչ մթնոլորտում, ժամանակի հետ կրողն ու արժանավոր ժառանգորդը դարձել մեր հայրենի ավանդույթների եւ ոսկեդարի մայրենիի։ Ամուսնանալուց հետո 1965-ին մեկնելով հեռավոր Չիկագո՝ նրանք մոր շունչ հաղորդեցին տեղական համայնքին՝ հայկականություն տարածելով իրենց շուրջը։ Հայրենասիրությունն այս ընտանիքի համար երբեք կեցվածք չեղավ, այլ կեցություն, ապրելու իրական եղանակ ու կենսաձեւ։ Նրանք մեծապես նպաստեցին 1987-ին ամերիկյան այդ քաղաքում հիմնելու ՀԲԸՄ-ի տեղական կենտրոնը, «Սիսակ Վարժապետյան» շաքաթօրյա ազգային վարժարանը եւ «Սբ. Հովակիմ եւ Աննա» եկեղեցին։

Ռաֆֆի Յովհաննիսյանն իրեն նվիրեց բժշկությանը, սակայն լինելով արվեստի ջերմ երկրպագու՝ սատար կանգնեց Շողակի արվեստագիտական բոլոր ձեռնարկումներին, քաջալերեց ու ոգևորեց նրան, քանի որ երկուսն էլ այն հանդուժողն էին, որ մշակույթն

է եղել մեր ազգին պարզերես անողը, մեր ինքնությունը կերտողն ու հավերժի մեր երթն ապահովողը եւ այդ դերն ունի մաքուր այսօր։ Ուստի բարեգործության ամենաճիշտ հասցեն արվեստն է, իսկ «թիրախը»՝ շնորհալի արվեստագետները։ Հայրենի արվեստագետներին օգնելը նրանք ավելի շատ հոգու պարտականություն են դիտում, քան բարեգործություն՝ սովորական իմաստով։

Արվեստաբան, հավաքորդ եւ հանրային գործիչ Շողակ Յովհաննիսյանի ուշադրության եւ հոգածության կենտրոնում առավելապես ժամանակակից արվեստի ասպարեզում ստեղծագործողներն են։ Լինելով Չիկագոյի ժամանակակից արվեստի թանգարանի հավաքորդների, ինչպես նաեւ արվեստի ինստիտուտի արդի արվեստի խորհրդի նախագահ եւ գործունե անդամ, նա իր փորձն ու միջոցները ներդնում է հայաստանցի արվեստագետներին միջազգային ասպարեզ հանելու հույժ կարելու գործում։ «Իմ նպատակն է, որ շնորհալի հայ արվեստագետներն ստեղծագործեն հայրենիքում եւ գնահատվեն, որպեսզի նրանց չկորցնենք օտար ափերում», - ասում է նա։

Տիկին Շողակը մաքուր ինքն է գնահատում Հայաստանում, ի մասնավոր՝ Երեւանում եւ Գյումրիում ապրող մեր նկարիչների ու քանդակագործների արվեստը, ապա այն գնահատել տալիս օտարներին։ Երբ 1994-ի դժվարին օրերին նա առաջին անգամ եկավ Հայաստան, զարմացավ՝ տեսնելով հայ կերպարվեստագետների ստեղծագործություն-

ներից ճառագող ջերմությունն ու լույսը։ Այդ կտավներն ու քանդակային արարումները միջազգային ճանաչման հասցնելու համար նրանից մեծ ջանքեր եւ տարիների հետեւողական աշխատանք պահանջեցին։ Չիկագոյում բացած իր անձնական պատկերասրահում ներկայացնելուն զուգընթաց նա ժամանակակից հայ արվեստի ցուցահանդեսներ կազմակերպեց ամերիկյան մի շարք քաղաքներում, ապահովեց հայ արվեստագետների մասնակցությունը ArtExpo-ի ցուցադրություններին։ Միջազգային ճանաչումը նպաստեց ոչ միայն մեր արվեստագետների վարկին, այլեւ նրանց նյութական ապահովվածության բարձրացմանը, որի շնորհիվ դուրսից դարձավ նրանց կեցությունը Հայաստանում եւ նպաստեց մեր ստեղծագործությունների ի հայտ գալուն։

Շողակ Յովհաննիսյանը շատ ուրախ է ժամանակակից ստեղծագործողների հաջողություններով, նրանց անուրանալի ձեռքբերումներով։ Գտնում է, որ դասական վարպետների կողքին պետք չէ աչքաթող անել երիտասարդներին, նրանց արդի մտածողության գունաձեւային դրսևորումները։ «Կյանքն արագ է փոփոխվում, - սիրում է կրկնել տիկին Շողակը, - ժամանակի մեջ անցյալը միշտ ներկա է. պետք է առաջ նայել»։ Այս սկզբունքով են հեռավոր Չիկագոյում ապրում տեր եւ տիկին Յովհաննիսյանները՝ հայացքը մայր հայրենիքի վաղվա գեղեցիկ օրվան։



Լիոնի հայուԹյան հոգեւոր կենտրոնը

Կենտրոնական Ֆրանսիայում կամ, որ նույնն է, երկրի Ռոն-Ալպյան շրջանում այսօր մոտ 80 հազար հայ է ապրում: Նրանց նախնիներն այդտեղ են եկել 1915-ի մղձավանջից հետո՝ արմատներ ձգելով Ռոն գետի գեղատեսիլ հովտում եւ տասնամյակների ընթացքում ստեղծելով համայնքային հզոր կառույցներ:

Վերջիններիս համատեղ ջանքերով 2006-ին հնարավոր եղավ Ֆրանսիայի երկրորդ խոշոր քաղաքի՝ Լիոնի կենտրոնում վեր խոյացնելու Հայոց ցեղասպանության հուշարձանը՝ որպես պատմական հիշողության եւ Ֆրանսիայի այդ հատվածում մեր ազգային ներկայության քարե վկայագիր: Հայկական տառերի քանակով այն ամփոփում է 36 տապանաքար՝ նշանավոր հայորդիների անմահ գրություններով:

Այս գործում իր կարեւոր դերակատարությունը ունեցավ Հայ Առաքելական եկեղեցին, ի մասնավորի Լիոնի եւ Ռոն-Ալպյան շրջանի հայ համայնքի հոգեւոր առաջնորդ Նորվան եպս. Ջաքարյանը: Նրա հետ հանդիպումը կայացավ Լիոնի գործվածքի եւ դեկորատիվ արվեստի թանգարանում, որի սրահներում եւ քաղաքի վրա իշխող Ֆուրվիեր սրբավայրում Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում այս գարնանը կազմակերպվել էր «Հայաստանի ոսկին եւ գանձերը» տպավորիչ ցուցահանդեսը: Վերջինս, ըստ գերաշնորհ սրբազան հոր պարգաբանման, նախատեսված էր 2001-ին՝ Հայաստանում քրիստոնեության դարձի 1700-ամյակի կապակցությամբ, սակայն հնարավոր եղավ իրագործել վեց տարի անց: «Հայաստանի տարին ազգային զարթոնքի հիմք դարձավ,- մեր զրույցում նկատեց Նորվան եպիսկոպոս Ջաքարյանը,- բանն այն է, որ այդ կերպ ոչ միայն մեր հայրենիքը ներկայացվեց Ֆրանսիային ու Ֆրանսիացի ժողովրդին, այլեւ տեղի հայությանը ազգային գիտակցության մեծ լիցք հաղորդեց, իսկ երիտասարդությանը առիթ տվեց իր արմատները փնտրելու»:

Հոգեւոր առաքելության այս ուղղություններին Նորվան սրբազանը հետամուտ է եղել բազմամյա ծառայության առաջին իսկ օրերից, երբ վարդապետ ձեռնադրվեց Սերովբե արք. Մանուկյանի, իսկ եպիսկոպոս՝ Վազգեն Ա Վեհափառ հայրապետի ձեռամբ: Նրա ուղեկցությամբ Լիոնի «Հայաստան» անունը կրող փողոցով քայլեցինք մինչեւ Սուրբ Հակոբ մայր եկեղեցի: Վերջինս ազգային ճարտարապետության զուսպ ձեւերով հարկորոշվող կառույց է՝ վեր հանած ժողովրդական հանգանկությամբ: Հիմնարկեքը տեղի է ունեցել 1954 թ., իսկ օծումը՝ 1963-ի հունիսի 30-ին՝ ձեռամբ Սերովբե արք. Մանուկյանի: Այժմ եկեղեցու

բետոնակուռ կառույցը բարձրանում է հենասյուների վրա: Բացի լուսավոր ու ընդարձակ աղոթասրահից, այն ունի ընդունելության մեծ սրահ, որտեղ համայնքային ժողովներ եւ տարատեսակ միջոցառումներ՝ դասախոսություններ ու լսումներ են անցկացվում: Կիրակնօրյա պաշտամունքին մասնակցում է «Կոմիտաս» երգչախումբը: Մայր եկեղեցին հանդիպավայր է գաղութի թե՛ տարեցների, թե՛ երիտասարդների համար: Բոլոր ցանկացողների համար այդտեղ պարբերաբար կազմակերպվում են հայերենի ուսուցման եւ հայրենի մշակույթի ներկայացման դասընթացներ:

«Առանց հայկական դպրոցի զաղութները ապագա չունին» կարգախոսին հետեւելով՝ Նարվան սրբազանը 1988-ին նախաձեռնեց եւ Ազգային միության վարչության գործակցությամբ ու տեղի եւ տիկին Արփիկ եւ Մարգար Մարգարյանների նվիրատվությամբ Լիոնի եկեղեցուն կից հիմնեց «Մարգարյան-Փափազյան» ամենօրյա վարժարանը, որը ներառում է նաեւ մանկապարտեզ-նախակրթարան եւ բոլոր պայմաններն ունի նորահաս սերնդի հայեցի դաստիարակության համար: Ուրախալի է, որ տարեցտարի ավելանում է աշակերտության թիվը՝ սկզբնական շրջանի մի քանի տասնյակից այսօր հասնելով 190-ի:

Բարեբախտաբար հայոց եկեղեցիներ եւ միօրյա վարժարաններ են գործում նաեւ կենտրոնա-



գծանկարը՝ Լ. Մանուկյանի

կան Ֆրանսիայի մյուս քաղաքներում ու հայաշատ բնակավայրերում՝ Վալանս, Դեսին, Վիեն, Սենթ Էթեն, Ռոման, Գրենոբլ եւ այլն: Եթե մեկ տասնյակից ավելի հայոց վարժարաններին հավելենք ազգային զանազան միություններն ու մշակույթի տները, ապա կունենանք հայապահպանման հուսալի մի ցանց, որ զորեղ պատվար է ուժգնացող ուժացման դեմ: Նորվան սրբազանն ուրույն ըմբռնում ունի հայ սփյուռքի ապագայի հարցում: «Գնալով ավելի կուժեղանանք,-

ասում է նա՝ որպես նախապայման դիտելով հայկական բոլոր հաստատությունների ուժերի ու ջանքերի մեկտեղումը՝ առանցքում ունենալով եկեղեցին,- սփյուռքի մեջ բոլոր կառույցները օր մը պիտի օտար լեզվով խոսին, բացի եկեղեցուց»:

«Հայոց տառերը սփյուռքի մեջ գտնվեցան», - հիշեցնում է նա եւ մեծ գնահատանքով խոսում Ֆրանսիայում հաջողությամբ անցկացված Հայաստանի տարվա մասին՝ գտնելով, որ հայ-ֆրանսիական առնչությունների դարավոր պատմու-

թյունն այսուհետեւ հարկ է բաժանել երկու շրջանների՝ մինչեւ 2007 թվականը եւ դրանից հետո:

2007 թ. հունիսի 22-ին Փարիզի Սբ. Հովհաննես-Սկրտիչ մայր տաճարում տեղի ունեցած ընտրություններից հետո հայ եկեղեցու Ֆրանսիայի նորաստեղծ թեմի առաջնորդ ընտրվեց Նորվան եպս. Ջաքարյանը: Շնորհավորում ենք նրան այդ կապակցությամբ եւ մաղթում հոգեւոր առաջնորդության բեղմնավոր տարիներ:

Լեւոն Լաճիկյան, Լիոն-Երեւան

Լուսանկարիչ Կառլոս Խոսե Բուրջյան



Կառլոս Խոսե Բուրջյանը ծնվել է Վենեսուելայում, այնուհետեւ տեղափոխվել Հայեպ: Այստեղ ավարտել է պետական համալսարանի բիզնեսի եւ տնտեսագիտության ֆակուլտետը (1991): Լուսանկարչական արվեստի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունը երիտասարդ Կառլոսին մղում է մասնակցելու «Լե Պոն» (Le Pont) պատկերասրահի պրոֆեսիոնալ լուսանկարչության դասընթացներին: Համապատասխան հմտություն ձեռք բերելով՝ 1998 թ-ից նա մասնակցում է բազմաթիվ լուսանկարչ-



չական ցուցահանդեսների (Սիրիա, Լիբանան, Հոլանդիա, Կոբե, Ճապոնիա):

1997-ին, երբ նա առաջին անգամ եկավ Հայաստան, զմայլվեց հայրենիքի տեսարժան վայրերով, պատմական կոթողներով ու հուշարձաններով, հին եկեղեցիներով եւ խաչքարերով, ժողովրդի ջերմությամբ: Դրանից հետո նա գրեթե ամեն տարի լուսանկարչական սարքով «զինված» եկել է Հայաստան, ուր նաեւ ձեռք է բերել մոր ընկերներ ու բարեկամներ:

Հոկտեմբերի 13-ին «Ավուր» սրճարան-ցուցասրահում բացվեց Կառլոս Խոսե Բուրջյանի առաջին անհատական ցուցահանդեսը հայրենիքում, որը վերնագրված էր «10 տարի... Հայաստան»:

Ներկայացված էին հիմնականում հայկական ոգին եւ զույները արտացոլող աշխատանքներ, ինչպես օրինակ «Արարատ» բաժինը, Հայաստանը մոր մայրաքաղաք կառուցելիս, Հայաստան երկրի անմահ կոթողները, ինչպես նաեւ մի առանձին սրահ էր հատկացված անվանի

մարդկանց լուսանկարներին: Ցուցահանդեսում տեղ էին գտել նաեւ էկզոտիկ արեւելյան զույներով Սիրիան պատկերող լուսանկարներ:

Հեղինակի որսած պահերը սոսկ պատկերներ չեն, այլեւ խորիմաստ եւ երբեմն էլ շատ անսպասելի իրավիճակներ, եւ ինչպես ինքն է ասում, «անպայման չէ օգտագործել պրոֆեսիոնալ լուսախցիկ, եթե ընտրած գործի հանդեպ սերը բխում է սրտից եւ հոգուց...»: Կառլոս Խոսե Բուրջյանը նաեւ թղթակցում է Ազատ հայ (www.azadhye.com) կայքին՝ տարբեր ճանաչված մարդկանց հետ ունեցած հարցազրույցներով:

Երբ Հայեպ վերադառնալու օրերը մոտենում են, Կառլոսի հոգին լցվում է թախիծով, բայց վստահ եմ, որ այս այցի տպավորությունները դեռ երկար ժամանակ պետք է լինեն արվեստագետի հետ եւ եւս մեկ ամուր կամուրջ դառնան նրա համար:

ՊԵՐԺ ԱՇՏԱՐԱԿԵՅԻ

Պերժ Պոռոջյանը որպես լուսանկարիչ



Հանրահայտ մանկավարժ և վիպասան («Սոս և Վարդիթեր», «Հացի խնդիր», «Բղդե», «Ցեցեր» վեպերի հեղինակ) Պերժ Պոռոջյանը (1837-1907) ժամանակին հայտնի լուսանկարիչ էր և իր կատարած լուսանկարները ստորագրում էր Պերժ Աշտարակեցի: Քչերը գիտեն, որ Պերժ Պոռոջյանը իր հետքն է թողել նաև հայ լուսանկարչության պատմության մեջ: 1860 թ. նրան հրավիրում են աշխատակցելու նորաբաց «Կռունկ» հանդեսին: Հրատարակիչը՝ Համբարձում Էմֆիաճյանը (1824-1896), մտադիր էր զարդարել ամսագիրը Հայաստանի հնությունների և այլ լուսանկարներով: Այդ նպատակով 1863 թ. նա իր միջոցներով օգնում է Պոռոջյանին լուսանկարչություն սովորելու, գնում է անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Կարճ ժամանակ անց ամսագիրը սնանկանալու պատճառով դադարում է տպագրվել: Պոռոջյանին մնում է իր նոր ձեռք բերած

մասնագիտությունը, որ դառնում է նրա գալիք կյանքի նեցուկն ու հենարանը:

Ինչպես իր հուշերում պատմում է Պոռոջյանը, «Ֆոտոգրաֆիան շալակած» մի քանի ամիս ճամփորդում է Կախեթիայի կողմերը, իսկ 1865 թ. աշնանը մի քանի ամիս ապրում է Երեւանում՝ նախկին Սվերդլով, այսօր Փալատոս Բյուզան դի թիվ 7 տանը: Հետո լինում է Ագուլիսում, Աշնախում, Թավրիզում, Հին Նախիջևանում, Օրդուբադում և, ինչպես ինքն է հիշում, «այդ քաղաքների բնակիչ պարսիկ խան ու բեկերը սիրեցին ֆոտոգրաֆիական պատկերները»: Հաց վաստակելու հետ մեկտեղ Պոռոջյանը ստեղծում էր հետաքրքիր, մնայուն գործեր և շարունակում ավելի հմտանալ: Նա հպարտությամբ էր հիշում, որ ուներ իր սեփական գործը՝ ֆոտոգրաֆիան, և մտադիր էր գնալ Պոլիս՝ Աբդուլլահյան եղբայրների մոտ լուսանկարչական արվեստի մեջ կատարելագործվելու: Վերջիններս ճանաչված և պրոֆեսիոնալ լուսանկարիչներ էին:



Սակայն Պոռոջյանին պետական մարմիններն արգելում են մեկնել «վասն վատ վարուց»: Նրան ճանաչում և զնախատում էին իր ժամանակի ամենաառաջադեմ հայ գործիչները, ի դեմս Ներսես



Աշտարակեցու, Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի և այլոց: Պոռոջյանն իր «Սոս և Վարդիթեր» վեպից հետո հեռանում է գրական ասպարեզից և 17 տարի զբաղվում լուսանկարչությամբ և ուսուցչությամբ՝ իր բազմամյա ընտանիքը պահելու համար:

Պերժը 1869 թ. ամուսնանում է Աննա Դոլգյանի հետ, որը սերում էր Սայաթ-Նովայի տոհմից: Պահպանվել են Աննայի մի քանի լուսանկարներ՝ կատարված Պոռոջյանի ձեռքով:


1872 թ. Պոռոջյանն աշխատում է Ալեքսանդրապոլում, լուսանկարում ուխտավորներին, ուսուցիչներին, Հառիճի վանքը: Վերջին պատկերը նա ուղարկում է կաթողիկոսին: 1874 թ. նա մեկնում է Աստրախան, ապա Թիֆլիս, Երեւան, Էջմիածին, Բաքու: Ամենուր նա իր մանկավարժական գործունեության հետ համատեղում էր լուսանկարչական գործը և ստեղծում հետաքրքիր աշխատանքներ: Ստեղծվում էին նաև պատմվածքներ՝ «Լուսանկարչի հիշատակարանից» խորագրով:

Պերժ Պոռոջյանի թողած ժառանգության անբաժանելի մասը,

իհարկե, նրա արած լուսանկարներն են, որոնք այսօր պահպանվում են տարբեր թանգարաններում և զանազան արխիվներում: Դրանք ունեն պատմական ու ճանաչողական մեծ արժեք ինչպես ժանրային բազմազանությամբ, այնպես էլ թեմատիկայով:

Երեւանի Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում կան խոսում վկայագրեր Պերժ Պոռոջյանի լուսանկարչական գործերի մասին: Դրանցից ամենաթանկը հայ գուսանական արվեստի հիմնադիրներից Հիրիցի և Ջիվանու լուսանկարներն են՝ թվագրված 1850 և 1871 թ. (ըստ Գարեգին Լեւոնյանի): Առանձնակի հետաքրքրություն ունեն շուշեցի երիտասարդի (1867 թ.), Սայաթ-Նովայի թռռան (կնոջ մոր՝ Շուշանիկ Դոլգյանի), աշտարակեցի Շահազիզ-Կամսարականի, Թեւանի ընտանիքի, որդու՝ Էաջի Պոռոջյանի և այլ լուսանկարներ:

ԱՆԻ ԿԻՐԱԿՈՅԱՆ
*և. Արովյանի անվ.
 ՊՄԳ-ի զեղարվեստական
 լուսանկարչության
 բաժնի ուսանող*



«Որ Ազնավուրին ավելի ջատ սիրեն...» Ֆրանսիական երգը հայերենով

Փարիզաբնակ մեր հայրենակից Ալեքսանդր Բարսեղյանը (վերջինս արժանացել է Բեռլինի մրցանակին) իր գեղեցիկ հայերենի համար պարտական է մնալ եւ առաջ ընտանիքին, ի մասնավոր՝ մեծ հորը, ապա Սետի Մխիթարյան վարժարանի իր ուսուցիչներին։ Առ այսօր լավ է հիշում 1967-ի ամառը, երբ առաջին անգամ եկավ մայր հայրենիք՝ մասնակցելու ուսանողական համահայկական հավաքին։ Եկավ ու իր համար բացահայտեց թե՛ նախնիների աշխարհը, թե՛ ինքն իրեն։ «Մինչ այդ չփվել էի միայն սփյուռքահայերի հետ։ Ինձ պակասում էր շփումը տեղացի հայերի հետ», - մտաբերում է գրուցակիցս։ Հաստատված կապը տարեցտարի ավելի է ամրանում, ծեռք բերում մոր գույներ ու երանգներ։ Վկան մրա հաճախակի այցերն են Հայաստան։

Դեռ փոքրուց պապից լսած հայկական երգերն Ալեքսին ինչոր վերացական տարաշխարհիկ բան են քվացել։ Պապերի երկրին ծանոթանալուց հետո, սակայն, հայկական երաժշտությունը կարծես միս ու արյուն է առել, հասկանալի իրողության վերածվել։ Այժմ նա հայերեն խոսասալիկների այնպիսի հարուստ հավաքածու ունի, որ կարող է մրցել ցանկացած երաժշտական խանութի հետ։

Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում Ալեքսը սկզբում ծանոթանում է երգիչ-երգահան, բանաստեղծ-թարգմանիչ Պերճ Թուրաբյանի հետ, լսում Շարլ Ազնավուրի, ֆրանսիացի այլ երգահանների ստեղծագործությունների մրա ընտիր հայացումները։ Ապա հայաստանցի իր ընկեր-ծանոթներին, պատահական բազմաթիվ մարդկանց հարցուփորձ է անում Ազնավու-

րից՝ պարզելով, որ մրանք մեծ շանոնյեին գնահատում են «որպես լավ հայ, արժանավոր հայորդի, մեծ երգիչ՝ առանց հասու լինելու մրա երգերի իմաստին»։ Ու ծնվում է զաղափարը. հայերենով ներկայացնել թե՛ Շարլ Ազնավուրին, թե՛ հանրահայտ մյուս ստեղծագործողներին՝ Ժակ Բրել, Ժորժ Բրասանս, Լեո Ֆերե եւ Շարլ Թրենե, ի պատիվ մրանց կազմակերպելով մեծ համերգ մայիս Երեւանում, ապա Փարիզում, Լոս Անջելեսում, Մոնրեալում եւ Մոսկվայում։ «Այս կերպ Ազնավուրին ավելի շատ պիտի սիրեն», - համոզված է Ալեքս Երանյանը եւ նպատակ ունի մրա երգերի շուրջը ու դրանց միջոցով համախմբելու հայության աշխարհասփյուռ հատվածներին։ «Ինչո՞ւ զրկենք մեր ժողովրդին օտար երգը հասկանալու հաճույքից», - միաժամանակ ավելացնում է նա։ Նախագիծը կրելու է «France, mon amour» («Ֆրանսիա, իմ սեր») նշանաբանը եւ դառնալու է շնորհակալության յուրատեսակ արտահայտություն մեր բարեկամ երկրին, որտեղ մեկ տարի թեւածում էր «Armenie, mon amie» («Հայաստան, իմ բարեկամ») կարգախոսը։ Ալեքսի կարծիքով Հայաստանի տարին Ֆրանսիայում միայն պաշտոնապես է ավարտվել։ Դրա արձագանքները դեռ երկար են թեւածելու եւ իրականում վերջ չեն ունենալու, ինչպես անվերջ են հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների համակրանքն ու բարեկամությունը։

Նախագծի եւ հաջորդ գարնանը կայանալիք առաջին համերգի մանրամասները քննարկելու համար մեր հայրենակիցը վերջերս դարձյալ Երեւանում էր։ Նա հանդիպումներ ունեցավ բեմադրիչ Արթուր Գրիգորյանի, երաժշտական մասի պատասխանատու Արմեն Մարտիրոսյանի եւ այն երգիչ-երգչուհիների հետ, որոնք հայերենով հնչեցնելու են ֆրանսիական երգը՝ հետաքրքիր էջ բացելով մերօրյա երգարվեստի պատմության մեջ։ Նախատեսվող համերգներին մասնակցելու են նաեւ արտերկրի հայ երգիչները՝ այդ թվում Ազնավուրի ավագ դուստր Սեդան։

Լ. Լաճիկյան

ՅԵԱՇԱԼԻ ՆԱԽԱԳԻԾ «Ժողովրդական երգիչ»



2007 թ. հուլիսին «Շանթ» հեռուստաընկերությունը սկսեց «Ժողովրդական երգիչ» երաժշտական նախագիծը, որն, ի տարբերություն նախընթաց նմանատիպ «մրցույթների», միանգամայն մոր որակ ստացավ։ Մասնակցելու հայտ էին ներկայացրել շուրջ 400 հոգի, սակայն վերջին փուլ դուրս եկան 14 լավագույնները Լուսինե Գասպարյան, Էդգար Մարտիրոսյան, Գոհար Բալյան, Նելլի Եղիազարյան, Արմինե Հովհաննիսյան, Անահիտ Իսկանյան, Գոհար Մաստրյան, Լուսինե Աբրահամյան, Սմբատ Խալաթյան, Տաթև Քոչարյան, Էդգար Ավետիսյան, Նարեկ Պողոսյան, Արմեն Դավթյան, Սեւակ Ամրոյան։

Քառամսյա մրցույթի արդյունքում հեռուստաթերից հնչեցին զուսանական եւ ժողովրդական հրաշալի երգեր, հրաշալի կատարումներով։ Շատ լավ եւ ուսանելի աշխատանք կատարեցին նաեւ Ժյուրին, նախագծի մասնակիցների հետ աշխատող երգարվեստի մասնագետները, երաժիշտները։ Մի խոսքով, սա ընդհանրապես հայկական հեռուստաթերի ցայծն եղած առավել հաջողված երաժշտական նախագիծը կարելի է համարել։

Ժողովրդական երգիչ ընտրվեց Սեւակ Ամրոյանը, սակայն շատ կարեւոր է, որ նա այդ բարձր կոչումն ստացավ ոչ թե որպես «մրցամարտի» հաղթող, ինչպես սպորտում է լինում, այլ ասպարեզ եկավ հայկական երգարվեստին զինվորագրված մի ամբողջ խումբ փայլուն երիտասարդների հետ, եւ թե սպորտի հետ համեմատությունը շարունակենք, ընտրվեց թիմի ավագ։ Մեր կարծիքով, նաեւ այս է նախագծի կարեւոր ձեռքբերումներից մեկը եւ, հուսով ենք, որ սա մի լավ գործի միայն սկիզբն է։

«Հայ արվեստի» խմբագրության հանձնարարությամբ ԵՊՀ Ժուռնալիստիկայի բաժնի ավարտական կուրսի ուսանողուհի, մեր արտահաստիքային թղթակից Ռուզաննա Մովսիսյանը հանդիպել է նախագծի պրոդյուսերի, Ժյուրիի անդամների եւ պատվավոր հյուրերի, ինչպես նաեւ Սեւակ Ամրոյանի հետ։ Ստորեւ ներկայացնում ենք նրանց խոսքը։

Հակոբ Ռուբինյան Ժողովրդական երգիչ նախագծի պրոդյուսեր

«Ժողովրդական երգիչ» նախագիծը ծեռնարկեց «Շանթ» հեռուստաընկերությունը։ Այն ուներ մի քանի նպատակային սկզբունքներ։

Վերջին 10-15 տարիներին հեռուստաթերում ժողովրդական,

աշուղական երգին մվիրված որեւէ հաղորդաշար չկար։ Կային հատուկներ տեսահոլովակներ կամ որեւէ կատարող խումբ, որը նկարում է տեսահոլովակներ, որոնք երբեմն երեւում էին երաժշտական հաղորդումներում կամ հոլովակային բլոկերում։ Բայց հաղորդաշար-նախագիծ գոյություն չուներ։

Մեր նպատակն էր հայտնաբե-

րել այն երիտասարդներին, ովքեր ունեն բարձրորակ ոկալ-ձայնային տվյալներ, մրանց ներկայացնել հանրությանը եւ այդ ամբողջ ընթացքում աշխատելով հասցնել այն բանին, որ հայ երիտասարդները կանգնեն ժողովրդական երգի ճանապարհին։

Ինչպես յուրաքանչյուր հեռուստաընկերություն, «Շանթը» եւս ցանկանում է ունենալ նախագիծ, որը կունենա նաեւ ժողովրդական հանրաճանաչ ընդունելություն, ինչը, կարելի է ասել, ստացվել է։

«Հայ սուպերսթար» եւ «Ժողովրդական երգիչ» նախագծերը տարբեր են։ Իհարկե կան ընդհանրություններ, քանի որ մուլտպես երաժշտական նախագիծ է՝ մրցութային սկզբունքով, բայց կան նաեւ մի քանի սկզբունքային տարբերություններ։ Օրինակ, առաջինում հաջորդ փուլ անցնողի կամ նախագիծը լքողի ճակատագիրը որոշում էր բացառապես հեռուստադիտողը քվեարկության միջոցով։ Իսկ երկրորդում ժողովրդի քվեարկությունից բացի մասնակիցների հաջորդ փուլ անցնել-չանցնելու հարցում էական է նաեւ պրոֆեսիոնալ Ժյուրիի գնահատականը։

Նախագծի հաղթողին, ինչպես նաեւ լավագույն մասնակիցներին սպասում էին հաճելի անակնկալներ։ Ժողովրդական երգիչ ճանաչված Սեւակ Ամրոյանը ստացավ 1 մլն դրամ, իսկ մնացած մասնակիցներին սպասում են աշխատանքային անակնկալներ. Ույեմբերի 27-ին Գյումրիում կկայանա երկու համերգ, իսկ դեկտեմբերի 1-ին եւ 2-ին «Արամ Խաչատրյան» մեծ համերգահրուսում համերգով հանդես կգան բոլոր 13 մասնակիցները։ Սրանով մրանց համերգային շրջագայությունը չի ավարտվի։

Երկրորդ «Ժողովրդական երգիչ» նախագիծը կսկսվի ավելի ուշ՝ մարտ ամսին, քանի որ առաջինի հետ կապված դեռ անելիքներ ունենք։ >>



Լեյլա Սարիբեկյան
Ժյուրիի անդամ

Ես որպես արվեստագետ շատ հավանում եմ «Ժողովրդական երգիչ» նախագիծը եւ ողջունում եմ «Շանք» հեռուստաընկերությանը նման նախաձեռնության համար: Յուրաքանչյուր գործ պետք է ունենա նպատակ, կարծում եմ՝ նախագծի նպատակն էլ հայկական գուսանական եւ ժողովրդական երգը պրոպագանդելն է: Սա փնտրված ու գտնված մի նախագիծ է, որը ցույց է տալիս, թե կան երիտասարդներ, ովքեր սիրում, զնահատում ու երգում են ժողովրդական երգեր: Համերգից համերգ զգում ես, որ մասնակիցների մեջ մի բան ավելացավ: Այսօր ժողովրդական երգիչ նախագծի ռեյտինգն ամենաբարձրն է՝ վկայելով, որ մեր ժողովրդին պետք են մեր երգերը, հայկական երգերը:

Ժյուրիի գնահատականը շատ մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր մասնակցի համար: Մենք տալիս ենք մեր գնահատականն ու համոզված լինում, որ տաղանդավորը դուրս չի մնա, քանի որ «դողում ենք» ամեն մի մասնակցի համար: Այս նախագծում ինչպես մասնակիցների երգն է ազնիվ, այնպես էլ ժյուրիի մոտեցումը: Սակայն միակ բանը, որ չեմ հավանում, SMS-ի գաղափարն է: Կարծում եմ, կան մասնակիցներ, ովքեր չունեն դրա հնարավոր

ությունը, եւ ինչպես Ազատ Գասպարյանն է ասում, կարելի է դրա փոխարեն մեկ այլ բան մտածել:

Արսեն Գրիգորյան
Ժյուրիի անդամ

Կարծում եմ, «Ժողովրդական երգիչ» նախագիծը եկավ ինչ-որ բաց լրացնելու մեր մշակութային կյանքում: Ինչու բաց, քանի որ երկար տարիներ ժողովրդական երգն ու երգիչները մի տեսակ անուշադրության են մատնվել: Կան մարդիկ, որոնց մտահոգության կենտրոնում եղել է ազգային ու ժողովրդական երգը, եւ «Շանք» հեռուստաընկերությունը կարողացավ առաջինը մտածել այդ ուղղությամբ: Սա նախագիծ էր, որն ապացուցեց, թե ինչքան էլ քիչ ինչի ազգային երգը, միեւնույն է, այն միշտ կլինի, չնայած այսօր շատերն են լսում ժամանակակից երաժշտություն եւ կարծում են, թե դա է հայկականը:

Որպես արվեստագետ կուզեի, որ նախագծի բոլոր մասնակիցներն էլ հաղթեին, քանի որ նրանք շատ տաղանդավոր են ու աշխատասեր: Իսկ որպես ժյուրիի անդամ կասեմ, որ մենք մեր գործն անում ենք շատ ազնիվ, նվիրված ու անաչառ: Մեր գնահատականի գաղափարը շատ լավ գաղափար էր, քանի որ պրոֆեսիոնալի աչքով ենք նայում եւ ավելի ճիշտ

ընտրություն կանենք, քան հեռուստադիտողը:

Գեորգ Դաբադյան
Ժյուրիի անդամ

«Ժողովրդական երգիչ» նախագիծը կարծես համաժողովրդական տոն լիներ, տոն, որին սպասում էին շատ շատերը: Համոզված եմ, որ այս նախագիծը նայել են հազարավոր երեխաներ, հետեւաբար հաջորդ նախագիծն ավելի լայն մասշտաբներ կընդգրկի: Գաղափարն ուշ առաջացավ, բայց ուշացած չէր:

Ցավոք սրտի, այսօր հայկական հեռուստաալիքներով քիչ է հնչում մաքուր հայկական երգը, ինչն այնքան էլ տրամաբանական չէ: Ամեն ինչ հնչում է, բացի հայկական ժողովրդական երգից: Կարծում եմ, բոլոր ժանրերի երաժշտությունն էլ պետք է հնչի, որպեսզի հայ երիտասարդն ընտրության հնարավորություն ունենա: Չպետք է նրան որեւէ բան պարտադրել:

Անկախությունից հետո մեր ազգային մշակույթը, ազգային արմատները շատ ավելի պետք է տարածվեին, եւ հատկապես մատաղ սերունդին դա պետք է ավելի ճիշտ ծելով ներկայացվեր եւ քարոզվեր:

Ազատ Գասպարյան
Ժյուրիի անդամ

Ես կուզեի խոսել ոչ թե որպես ժյուրիի անդամ, այլ որպես հանդիսատես: Մի քանի անգամ ասել եմ, հիմա էլ «Հայ արվեստ» ամսագրի համար կասեմ, որ այս նախագիծը գտնված բան եղավ մեր երաժշտական կյանքում, մեր հեռուստաշուու կոչվածի մեջ: Ի պատիվ թե՛ «Շանք» հեռուստաընկերության, թե՛ պրոդյուսեր Հակոբ Ռուբինյանի եւ թե մեզ (Ժյուրիի) հենց սկզբից ճիշտ դրսեւորեցինք մեզ՝ անկաշառ, որպեսզի «սարի այն կողմը» տեսնենք, որ կարողանանք մեր հայ մեղեդու պաշտպաններին ճանաչել եւ լավագույններին ճիշտ ընտրել: Սա երեւի թե Հայաստանում առաջին մրցույթն է, ուր ոչ մի ճնշում չկա որեւէ մեկի կողմից:

Գիտեք, թե շուկայում ինչ է կա-

տարվում հայ երգի ու հայ մեղեդու հետ, եւ չասեմ Աստված իրենց հետ, ես չեմ կարող նման բան ասել, քանի որ նրանք վատ բան են անում մեր աշուղական ու ժողովրդական երգի ու երաժշտության հետ: Իրենց մշակումներով, հրեշավոր նվագարանների՝ սինթեզատորների վրա «գործիքավորելով» (իրենց բառերն են ասում), հայ մեղեդին դարձել էր մի ահավոր բան:

Մեր ժողովրդական երգը չի կորչի, քանի որ կա Ռուբեն Մաթևոսյան, Օֆելյա Համբարձումյան, Արսեն Գրիգորյան, ընդամենը երեկ մեզանից բաժանվեց Հովհաննես Բադալյանը, սակայն նրանք մենակ էին մնացել, եւ «Ժողովրդական երգիչը» եկավ, ընկերացավ նրանց ու բարձրացրեց ու «երիտասարդացրեց» մեր երգը, ինչը ցանկալի էր եւ գովելի է:

Կարծում եմ՝ ժյուրիի գնահատականը ճիշտ է, քանի որ մեր ժողովուրդը մի քիչ կորցրել է իր ընկալումը լավի նկատմամբ եւ դրա պատճառով տաղանդավորը կարող է դուրս մնալ: Իսկ մենք օգնում ենք, որպեսզի նման մասնակիցները դուրս չմնան նախագծից: «Հայ արվեստի» միջոցով խմբդանքս է, որ ազգովին ճանաչենք մեր արվեստը եւ զնահատենք:



Աննա Մայիլյան
Նախագծի պատվավոր հյուր

Ամեն անգամ «Ժողովրդական երգիչը» նայելիս ոգեւորվում եմ ոչ այն պատճառով, որ սիրում եմ ժողովրդական երաժշտությունն ու կատարում, այլ որովհետեւ հեռուստատեսությամբ հնչում է այդքան մաքուր ու անաղարտ երգ ու մաքուր կատարում: Բոլոր 14-ի կատարումով ուղղակի հիացած եմ: Իհարկե դեռ երիտասարդ են, դեռ ճանապարհ կա անցնելու, բայց զարմանում եմ, թե ոնց կարելի է այս կարծ ժամանակահատվածում սովորել այդքան մեծ արվեստ:

Կեցցեն ծնողները, որ նման երեխաներ են դաստիարակել, ովքեր սիրում են աշուղական ու

ազգային երաժշտությունը: Իմօրհայրոց, ես գուսանաաշուղական երաժշտությանն այդքան հակված չեի, քանի որ չենք լսում եւ չգիտենք ինչ կա: Իսկ մեր մեծերը, ովքեր երգում էին նման երգեր, արդեն չկան, չեն հաղորդվում նրանց կատարումները, մոռացության էր մատնված այդ երաժշտությունը: Այժմ ես ինձ համար պարզեցի, որ շատ մեծ կապ ունեն հոգեւոր եւ աշուղական երաժշտությունները: Եթե վերցնենք Նարեկացու տաղերը, ապա կնկատենք, որ ուղիղ զիծ է տարվում դեպի Ջիվանի, Շերամ եւ այլն:

Նախագծից արդեն մի քանի ընկեր ունեմ, որոնց հրավիրել եմ իմ անսամբլի համերգին: Շատ ուրախ եմ այս ամենի համար եւ համոզված եմ, որ սրանից հետո էլ ավելի մեծ ուշադրություն կդարձվի մեր ազգային երաժշտությանը: Կարծում եմ, «Ժողովրդական երգիչ» նախագիծը ոչ թե շուու է, այլ մեծ դարոց: Այսինքն այնտեղ զնում է ուսման պրոցես, ինչը բնությունը նրանց տվել էր շուայրորեն, այժմ հղկվում ու կատարելագործվում է հմուտ մասնագետների օգնությամբ:

Ռոբերտ Ամիրխանյան
Նախագծի պատվավոր հյուր

«Ժողովրդական երգիչ» ծրագիրը հեռուստատեսային հայտնի հաղորդումների մեջ շահեկանորեն տարբերվում եւ առանձնանում է իր հիմնական գաղափարով: Վերջին շրջանում, երբ Հայաստանը թեւակոխեց իր ազատու-



թյան շրջանը, մարդիկ բոլոր ասպարեզներում փորձում էին գտնել նորը, անծանոթը: Եւ ժողովրդական երգ հասկացությունը փոխարինվեց մեզ համար ոճական, ժանրային մի ուրիշ ուղղությամբ, որն ամենաքիչը հայկական, ամենաքիչը ազգային կարող էր լինել եւ ամենաքիչը ժողովրդական երգի նման: Կարծես թե այդ հետընթաց շարժումը կասեցնելու առաջին փորձն էր «Ժողովրդական երգիչ» նախագիծը, քանի որ երգը մեզ համար զուլալ արցունքի պես մաքուր ու հարազատ դարձավ: Ես ողջունում եմ այս նախագիծը նաեւ այն առումով, որ այստեղ նոր ազգային գիտակցություն է գոյանում:

Սեւակ Ամրոյան

«Ժողովրդական երգիչ»

Ծնվել է Երեւանում 1990 թ: Այժմ բնակվում է Կոտայքի մարզի Պողոսյան ավանում: Սովորում է Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական ուսումնարանում: Մինչեւ նախագծին մասնակցելը երկու տարի սովորել է աշուղական դպրոցում:

Շատ ուրախ եմ, որ պրն Սեդրակի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ժողովրդական երգիչ» նախագիծը: Շնորհակալություն եմ հայտնում «Շանթ» հեռուստաընկերությանն ու կազմակերպիչներին, որ հնարավորություն տվեցին մեզ՝ երիտասարդներին, ասպարեզ դուրս գալու: Ջուտ մասնագիտական առումով բազմաթիվ ձեռքբերումներ ունեցա, այս ամբողջ ընթացքում շփվեցի այնպիսի մասնագետների հետ, որոնցից շատ մեծ գիտելիքներ ստացա: Նաեւ ձեռք բերեցի շատ լավ ընկերներ, ովքեր միշտ ինձ հետ են:

Նախագծի ավարտից հետո շատ անակնկալներ եղան ինձ համար: Առաջինն իմ հաղթանակն էր, իսկ երկրորդը, որ «Շանթ» հեռուստաընկերությունն ինձ դրամական պարգևի արժանացրեց:

Գեղանկարչություն

ԱՍԻԼՎԱ

ՆԿԱՐԻՉ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ

ՓՈՐԱԳՐԻՉ

Ծնվել է Կ. Պոլսում, բազմաթիվ ցուցահանդեսներ ունեցել աշխարհի տարբեր երկրներում (Ֆրանսիա, Շվեյցարիա, Բելգիա, Իտալիա, Իսպանիա, Մոնակո, Մալայզիա, ճապոնիա, Թայվան, Դանիա, ԱՄՆ, Ռուսաստան, Բոսնիա-Յերցեգովինա, Թուրքիա):

Թանգարանային ձեռքբերումներ

Հայաստան

Հայաստանի ազգային պատկերասրահ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ Ս. Փարաջանովի թանգարան

Ֆրանսիա

Ֆրանսիայի մշակույթի նախարարության Ավինյոնի քաղաքապետարանի մշակույթի բաժին «Շանալիեր» փորագրության թանգարան Ավինյոն քաղաքի համախմբման կենտրոն

Գերմանիա

Շտուտգարդ քաղաքի թանգարան

Բոսնիա-Յերցեգովինա

Տուզլայի դիմանկարի միջազգային պատկերասրահ

Լուսանկարներում՝ նկարչուհին ԳԳ առաջին տիկին Բելլա Քոչարյանի (1), ԳԳ մշակույթի նախարար Դամիր Պողոսյանի (2), Նկարիչների միության նախագահ Կարեն Աղայանի (3), Ցեղասպանության թանգարանի տնօրեն Դայկ Դեմոյանի (4), Փարաջանովի թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանի (5), պատկերասրահի ցուցահանդեսային բաժնի վարիչ Դամիր Գինոյանի (6), իր դուստր Ֆիմի Առաքելյանի ու բարեկամների (7) հետ:



1



2



3



4



5



6



7

Գեղանկարչություն



Ցուցահանդեսի բացումը. ծախից՝ արվեստաբաններ Հահեն Խաչատրյան, Դեմիրկ Իգիթյան, Ասիլվա, ԳԳ մշակույթի փոխնախարար Գագիկ Գյուրջյան, ազգային պատկերասրահի տնօրեն Փարալոն Միրզոյան:

ես կմերժեի շարունակել իմ ճանապարհը, մի ուրիշ, որը վերջ ի վերջո կբերի ինքնաճանաչման:

Ես հաճախ ցանկություն էի ունենում զատելու հեշտ լուծումներ, մտածելով, որ անում եմ այն, ինչ կարող եմ. պետք է բավարարվել մրանով, ինչ արդեն գիտեմ, հանգիստ թողնելով այն ամենը, ինչ կուտակվել է գիտակցության խորքերում եւ առաջանալ կյանքի արահետներով:

Բայց...

Որպես նկարիչ ես երբեք չեմ ընտրել դյուրին ճանապարհ. փնտրտուքի ուշակամությունն է, որ նկարչական արվեստի մեջ ինձ զորություն է տալիս շարունակելու, օգնում է, որ չիրաժարվեմ հետագիցիկ գործողությունից (biofeet

իրականացումը՝ ցանկություն առաջացավ փորձելու նոր հայացք նետել իմ ինքնության վրա:

Ո՞վ եմ ես:

Դեպի ներաշխարհ իմ հետա-

Ասիլվա. Ինքնաներկայացում

Ազգային պատկերասրահում բացված ցուցահանդեսում ներկայացված գործերն ստեղծում են մի մթնոլորտ, որն ամենեւին նման չէ իմ նախորդ ցուցադրություններին:

Ուղեւորության նպատակն է արվեստի աշխարհում հայտնաբերել ստեղծագործական մի նոր մեկնաբանություն՝ հիմնված այստեղ ներկայացվող հորինվածքների միասնության կամ համադասության վրա, ստեղծագործություններ, որոնք միաժամանակ կրում են իմ էության ու երբեմն էլ այլոց արտացոլանքը:

Մեկը մյուսի մեջ, մեկը մյուսի հետ՝ հանում իմ եւ ժամանակակից արվեստի խնդիրների բացահայտման հաճույթյան:

Նախքան հայելիներով կամ նկարներով ցուցադրություն կազմակերպելու իմ մտահղացման

դարձ խորասուզման նախաձեռնությունը հաստատեց, որ ճանապարհս լի է թակարդներով:

Դյուրին չէ հաշտվել սեփական թուլության, նախանձի, վաղուց ի վեր մեր մտայնության մեջ արմատացած թերությունների հետ: Գիտակցության դաշտը բարդ է: Յուրաքանչյուր քայլ անելիս ես կանգնում էի մի դռան առջեւ, որ պետք է բացեի, եւ հայտնվում էի բաց դռան հետեւում: Հետո ահա եւս մեկ դուռ. այսպես ես պետք է ուժ գործադրեի ինձ սպասող, իմ խորքում կուտակված թակարդները հաղթահարելու համար:

Իհարկե, կուզենայի, որ այս բոլորը, այս վերագտնված զգացումները լինեին անիրական, մեռած, անհետացած, մոռացված հավերժ, բայց դժբախտաբար դրանք կան, այստեղ են, կենդանի որպես վիշապներ, որոնց պետք է հաղթել առաջանալու համար: Այլապես

back), այսինքն՝ ընդունեմ, որ այն, ինչ արդեն արված է, իմն է: Այդ ընթացքը սահման չունի, եւ ուրեմն, անհնարին է վերջակետ դնել:

Ես հասկացա ֆիզիկական մարմնի եւ հոգեւոր գեղեցկության տարբերությունը: Ֆիզիկական գեղեցկության չափանիշները տարբեր մշակույթների մեջ տարբեր են: Բայց ներաշխարհի հմայքի նկատմամբ զգայուն եմ բոլորը: Այն հիմնվում է ուրիշին հարգելու, սիրու ու այլասիրության վրա. զգացումների սանդղակը այստեղ շատ բազմազան է ու նրբերանգներով հարուստ:

Իմ ներաշխարհով այս բոլորի անցնելուց հետո ես ինձ վերածնված եմ զգում եւ մտածում եմ, որ իմ նկարչությունն էլ նույնն է ապրում...

Շարունակությունը՝ էջ 26

3 ուրաքանչյուր ստեղծագործողի գերխնդիրը թերեւս ինքն իրեն, իր եսի ներքին սահմանները, խորքն ու խորությունները ճանաչելն ու բնության երեւոյթների մեջ աստվածային իր նկարագրի արտացոլանքը տեսնելն ու վերարտադրելն է: Իրերի ու երեւոյթների մեջ թափանցելու, տեսնելու, զգալու տաղանդն ինքնաբերաբար ծնունդ է արձեւտագետի ինքնօրինակությունը հաստատող արտահայտչաձեւը:

Հարություն Հարությունյանը հենց նման հատկություններով օժտված գեղանկարիչ է:

Ծնվել է 1948 թվականին Էջմիածնում: Մասնագիտական նախնական կրթությունն ստացել է Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում, ապա սովորել մայրաքաղաքի գեղարվեստի ինստիտուտում (1972): 70-ական թվականների կեսերից անընդմեջ մասնակցել է համրապետական եւ համամիութենական



ՆՈՒՐԲ, ԱԶՆՎԱԶԱՐՄ, ԵՐԳԵՑԻԿ

ցուցահանդեսներին: 1977 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է:

Ստեղծագործող անհատականության, մասնավորապես նկարչի աշխարհագրոգություն, սեփական ձեռագրի ձեւավորման համար չափազանց կարեւոր ու խիստ որոշակի դեր ունի այն միջավայրը, որում անցնում են նրա մանկության ու պատանեկության տարիները: Արարատյան դաշտի բերքառատ այգիներից, բազմերանգ ծաղիկներից ու Մայր աթոռ Սբ. Էջմիածնի կամարների ներքո հնչող հոգեւոր երգեցողությունից ստացած խոր տպավորություններն անջնջելի ակոս են բացել Հարությունի հոգում եւ կամխորշել նրա ստեղծագործական ներշնչումը:

չումների հիմնական գիծը՝ նուրբ, ազնվագարն, երգեցիկ քնարականությունը: Հարությունի աշխատանքները դիտողին գերում են պատկերների ներքին շերտը, ենթատեքստը կազմող մտերմիկ զգացմունքայնությամբ եւ ներկայանում են իբրեւ մանկության անջնջելի ու վառ հիշատակներ, իբրեւ հին էջմիածնի գեղեցիկ կառույցների, կենցաղի իրերի, ազգային հնավանդ բարբերի ու ջերմիկ մտորումների տեսիլներ: Հենց այս ամենի խտացումն են ասես իրենց մեջ ներառել էջմիածին քաղաքի հարսանյաց սրահի պատերը զարդարող որմնանկարները, որ նկարիչն իրականացրել իր վաղամեռիկ գործընկերոջ՝ կրկին էջմիածնաբնակ նկարիչ Համլետ Պողոսյանի հետ: Ներքին տեսողությամբ են թելադրված նրա պատկերների խորհրդավոր մթնոլորտը, գունային թրթռուն մակերեսները, որոնցից դիտողը զգում է հայրենի հողի դարավոր ու միշտ կենդանի շունչը:

Նման շնչառությամբ են օժտված Հարությունի ոչ միայն բնանկարները, խմբային հորինվածքներն ու ծաղիկներով նատյուրմորտները, այլեւ վերջին տարիներին նրա արվեստում առանձնակի տեղ զբաղեցրած կրոնական թեմաներով գործերը:


Ինչ էլ պատկերում է, ինչ թեմայի էլ անդրադառնում է նկարիչը, մնում է ինքն իրեն հարազատ, իր ընկալումների ու զգացողությունների մեջ ազնիվ ու անկաշառ՝ լինի անցյալից մի դրվագ, հուշի մի ծվեն, ներկա կյանքից մի պատահիկ թե երեւակայական մտացածին հորինվածք: Այդ է պատճառը, որ նրա ցուցահանդեսները Հայաստանում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Կանադայում եւ այլուր մշտապես արժանացել են արվեստասերների ջերմ ընդունելությանը:

Այսօր եւս Հարություն Հարությունյանն ստեղծագործական բուռն ու բեղմնավոր շրջանում է:

Շահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարություն Հարությունյան Harutyun Harutyunyan






Ասիլվայի «Ուղեւորություն արտաքինից դեպի ներս»-ի ցուցահանդեսը Հայաստանի ֆորմաներով եւ գույներով» սնկսական ցուցահանդեսը Հայաստանի սպասյին Պակետստահում 2007 թ. սեպտեմբերի 12-ից հոստեմբերի 4:

Ցուցադրված աշխատանքները թղթի վրա ոսկե հսնումով Պասրսսված յուղսներկ գործեր էին, որոնցից մի քանիսի բարձրությունը հսսնում էր 6 մետրի:

Asilva's individual exhibition "A Journey from the Outer into the Inner World by Forms and Colors" at the National Gallery of Armenia; September 12 - October 4, 2007.

The exhibited works were gold-cut paintings on paper. Some were about 6 meters in height.



Ա
Ս
Ի
Լ
Վ
Ա

A
S
I
L
V
A

Գագիկ Պարսամյան



Gagik Parsamyan



Գեղանկարչություն

Ծնվել է 1957 թ. Էջմիածնում: 1977-ին ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի ուսումնարանը, այնուհետև ուսումը շարունակել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1988-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է, 2007-ից՝ Լեհաստանի նկարիչների միության անդամ: 1989-94 թթ. աշխատել է Հայաստանի ազգային պատկերասրահի Մ. Աբեղյանի անվ. մասնաճյուղում որպես վարիչ: 1994-ից ապրում է և ստեղծագործում է Լեհաստանի Գդանսկ քաղաքում:

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել՝

1989 թ. Մոսկվա, Հոլանդիա, 1990 թ. Բելգրադ, 1991 թ. Փարիզ, Մոսկվա, Ռուս, 1993 թ. Էջմիածին, 1994 թ. Գդանսկ, 1998, 2001 թ. Վարշավա, 2004 թ. Կալինինգրադ, 2007 թ. Էջմիածին:

Ստորել ներկայացնում ենք հատվածներ լեհ արվեստաբան Վալենտինա Պոկլադովայի՝ Գ. Պարսամյանի արվեստին նվիրված հոդվածից:



Գ. Պարսամյանին հոգեհարազատ են կապույտ, կարմիր, դեղին, վարդագույն, մանուշակագույն գունախաղերը, որոնք հազվադեպ են հանդիպում իրականում եւ այդ պատճառով մեր առջեւ ծանապարհ են բացում դեպի անհայտը: Կտավների արողջական արտահայտությունը ստեղծում է պայմանական համամիացում, որի մեջ թվում է անհնար է գոյատևել, եւ որտեղ կարող են բնակվել միայն տիեզերական ոգիներ: Նկարների յուրաքանչյուր հատված պահպանելով իր առանձնա-

հատուկ իմաստը՝ միաժամանակ համաձուլվում է ընդհանուրի մեջ՝ ստեղծելով մի յուրահատուկ ու անկրկնելի պատկեր: Ըստ ամենայնի Գ. Պարսամյանի կտավները կարելի է վերածել երաժշտական լեզվի, որի ընթացքում կլսվի հայկական դուդուկը հիշեցնող գեղեցիկ, նուրբ մի երաժշտություն, կամ անկրկնելի Լուսինե Ջաքարյանի աստվածային ծայնը: Նկարիչն ուզում է աշխարհին նվիրել այն, ինչը հոգեհարազատ է իրեն՝ տաղանդ, բարություն եւ գեղեցկություն:

Արվեստի մի փոքրիկ աշխարհ Կոնդու



Երեւանի կենտրոնում պահպանված հին քաղաքի Կոնդ քաղամասում է գտնվում «Մխիթարին ստուդիո» անվանումով մշակույթի փոքրիկ կենտրոնը, որն իրականում արվեստագետ ամուսիններ Մամիկոն Մխիթարյանի եւ Պայծառ Ավետիսյանի՝ արվեստանոց թանգարանի վերածված տունն է: Ամուսինն զբաղված է մետաղով, կինը՝ գեղանկարչությամբ, իսկ համատեղ ստեղծում են գորգեր ու կարպետներ:

Հայ արվեստի ավանդական ճյուղերն այստեղ նոր շունչ են առել: Սակայն ամուսինների աշխատանքի առավել գնահատելի կողմն այն է, որ նրանք ոչ միայն ստեղծում են գեղարվեստական արժեք ունեցող գործեր, այլև յուրաքանչյուր ստեղծագործություն իմաստավորում են ներքին խորհրդաբանությամբ: Աշխատանքն այստեղ միայն միջոց է, իսկ նպատակը հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգության խորքերում անթելված հոգեւոր գանձերի վերհանումն ու արդիական եղանակով մատուցումն է:

Արվեստի այս գողտրիկ աշխարհին ավելի հանգամանորեն կարելի է ծանոթանալ համապատասխան կայքում (www.mstudio.am):

UNESCO-ի քննիչ պրն Փրեբիսի աշխատանքային այցելությունը Ատրպատականի պատմական սրբավայրեր

«Տեսանք ու շօշափեցինք այս պատմական սրբավայրերը: Մեր կազմակերպության պաշտոնական տեսակետը յայտնելու ենք շուտով», - Սր. Թադի վանքում յայտարարեց UNESCO-ի կազմակերպության ընդհանուր պատասխանատուներից դոկտ. Ալքիվիատես Փրեբիսը:



Սեպտեմբերի 6 - 9, 2007 թ., UNESCO-ի կազմակերպության ընդհանուր պատասխանատուներից դոկտ. Ալքիվիատես Փրեբիսը (Dr. Alkiviades Prepis) ընկերակցությամբ իր տիկնոջ, որը նույն կազմակերպության քննիչներից է, ինչպես նաև Իրանի մշակութային ժառանգության պատասխանատուների (Թեհրանից, Թաբրիզից և Ուրմիայից), նաև ճարտարապետ Վարուժան Առաքելյանի և Իրանի եկեղեցիների պաշտպանության պատասխանատու Շերլի Ալետեանի, աշխատանքային այցելությամբ գտնվեցին Ատրպատականի թեմի պատմական սրբավայրերում, UNESCO-ի մօտ սոյն սրբավայրերի պաշտոնական գրանցման համար:

Սեպտեմբերի 6-ին (հինգշաբթի) քննչական խումբը մեկնեց Սր.

Ստեփանոս Նախավկայի վանքը: Նախքան այդ, վանքի ճանապարհին, նրանք այցելեցին Յովի մատուռը: Այն վերջին ամիսներին ենթարկեց հիմնական նորոգության, բայց նրա զոյզը՝ Անդրեոլու մատուռը, որ գտնվում է ճիշտ նրա դիմացը՝ Արաքսի ափին, Նախիջևանի տարածքում, ամբողջությամբ պայթեցնեց 2005-ի ղեկտեմբերին: Ահա այս իմաստով, մատուռն իր տեսակի մեջ եզակի արժեք ունի:

Խմբի տեղ հասնելու ժամանակ Սր. Ստեփանոսի վանքում արդեն մատուցում էր Սր. Պատարագ Ուրմիոյ հոգեւոր հովիւ Անանիա արքեպիսկոպոսի Գուճանեանի գլխավորությամբ եւ մասնակցությամբ մի խումբ ուրմիահայերի եւ թաւրիզահայերի:

Հիւրերը մասնակցեցին Սր. Պատարագին: Պատարագիչը թեմի առաջնորդ Նշան եպս. Թովուլյանի անունից ողջունելով



րը ամբողջ տարւայ ընթացքում ոչ թէ այցելում են վանքերը, այլեւ յատուկ օրերում մնայուն բնակություն հաստատում եւ ժողովրդին մասնակից դարձնում զանազան կրօնական արարողությունների:

Քննիչ պատվիրակությունը ամբողջ օրը անցկացրեց վանքում, մօտիկից քննելով կատարած շինարարական աշխատանքները եւ մանրամասն կարծիք կազմելով համալիրի մասին: Նրանք այցելեցին նաեւ Դարաշամի Սր. Աստածածին եկեղեցին եւ պատմական գիւղը, որը գտնւում է ճիշտ Արաքս գետի ափին, զերծ մնալով որեւէ միջամտութիւնից:

Ուրբաթ օրը պատվիրակու-



նրանց, վանքում կատարուող կրօնական արարողությունների առթիւ բացատրություն տուց եւ շեշտեց, որ թեմակալ առաջնորդը, Թեմական խորհրդի եւ ուխտագնացության յանձնախմբի անդամնե-

նը կրկին այցելեց վերոնշեալ վայրերը եւ ապա ժամանեց Սր. Թադի վանք: Վանքում Սր. Պատարագ էր մատուցում թեմի առաջնորդ Նշան եպս. Թովուլյանը, երգեցողությունը կատարում էր



Թաւրիզի եկեղեցիների «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ Վարդան Վահրամեանի: Արարողութեան ընթացքում սրբազան հայրը ողջունելով հիւրերին ասաց. «Այստեղ են հանգչում Հայ Առաքելական եկեղեցու առաջին նահատակի՝ Սր. Սանդուխտ կոյսի նւիրական մասունքները. այստեղ է հանգչում Քրիստոսի աշակերտ եւ Հայաստան աշխարհի առաջին լուսաւորիչներից Սր. Թադէոս Առաքելի շիրմը, ինչպէս որ Սր. Ստեփանոսի վանքն է նւիրւած քրիստոնեայ առաջին նահատակի յիշատակին. ահա՛ նւիրական այն սուրբ եւ աստածային ժառանգութիւնը մեր ձեռքերում է պահւած եւ մեր սպասելիքն է, որ Դուք այս դիտանկիւնից նայէք այս սրբավայրերին»:

Արարողութիւնից յետոյ սրբազան հայրը հիւրերին նւիրեց մէկա-

համալիրում կատարեցին իրենց քննութիւնները, ընդարձակ տեղեկութիւններ հաւաքելով նաեւ նրա շուրջը գտնուող միւս մատուռների եւ գերեզմանատների մասին, որոնց պատասխաններն ու բացատրութիւնները սպառիչ կերպով ներկայացնում էին դոկտ. Աղլը, ճարտարապետ Ռահսազը, ճարտարապետ Վարուժան Առաքելյանը եւ տիկ. Շերլի Ալետեանը:

Շաբաթ օրը պատվիրակութիւնը այցելեց Մակի Պարոն գիւղը, Ծործորի Սր. Աստածածին եկեղեցին: Շուրջ չորսժամեայ քննչական այցելութեան ընթացքում վերոնշեալ պատասխանատու անձինք եկեղեցու տեղափոխութեան, հիմնօրհնէքի, վերստին օծման եւ հիմնական նորոգութեան մասին լսեցին ընդարձակ զեկոյց:

Նոյն օրն առաւօտեան առաջնորդ սրբազան հայրը Արեւմտեան



կան թանկագին յուշանւէր, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետի անունով, շեշտելով. «Վեհափառ Հայրապետը իւրայատուկ հոգատարութիւն ունի այս սրբավայրերի նկատմամբ, եւ մենք հետեւում ենք իր տեսական ցուցմունքներին եւ թելադրութիւններին միշտ կենդանի պահելու այստեղ կրօնական մթնոլորտը»:

Սրբազան հօր հարցին պատասխանելով՝ պրն Բրեբիսն ասաց. «Մե՛ծ հիասթափութեամբ դիտեցինք երէկ Հին Ջուղայի պատմական գերեզմանատան ամբողջական բնաջնջման տեսարանը Արաքսի ափից... Ի՛նչ ահաւոր քաղաքական ինքնասպանութիւն գործեցին որոշ երկրներ՝ աւերելով այս սրբավայրերը...»:

Ապա պատուիրակները վանքի

Ատրպատականի եւ կիրակի՝ Արեւելեան Ատրպատականի հեռուստացոյցի եւ ռադիոյի միջոցով ունեցաւ ընդարձակ հարցազրոյց (այն կարելի է տեսնել www.irna.ir հասցէի նահանգային բաժնի մշակութային սայթում):

UNESCO-ի պատասխանատուն Մախքան թեմից մեկնելը յայտնեց. «Յառաջիկայ 2008 թ. փետրուարին, Փարիզում տեղի ունեցալիք կազմակերպութեան ընդհանուր ժողովին 42 մասնագէտ անձների կողմից քւէարկութիւն է կատարւելու՝ թեմի վանքերը գրանցելու կապակցութեամբ եւ յոյսով եմ, որ պատասխանը դրական կլինի»:

Նյութը պատրաստվել է
Ատրպատականի թեմի
առաջնորդարանից ստացված
տեղեկատվության հիման վրա

ԵՐԿՈՒ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՄՐՈՑ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն **Գագիկ Սարգսյան**, միջին դարերի հնագիտության բաժնի վարիչ **Հուսիկ Մելքոնյան**

Ծաղկածորը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի հնագույն բնակավայրերից է: Հնում այն կոչվել է Ծաղկոցածոր, ապա՝ Ծաղկունյաց ծոր եւ Կեչառիս: Վաղ միջնադարում այն գտնվում էր Վարաժնունի նախարարական տան տիրույթներում, եղել Արշակունի արքաների ամառանոցը: 9-րդ դարից անցնում է Ապիրատյան տոհմին, որի տիրապետության շրջանում էլ հիմնադրվում է Կեչառիսի վանական համալիրը: Հիշյալ իշխանական տան նշանավոր դեմքերից մեկը՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը 995-1003 թթ. կառուցում է վանքի մայր տաճարը՝ Ս. Գրիգոր եկեղեցին: Ապիրատյանների հովանավորության ներքո վանքն արագորեն ծաղկում է՝ վերածվելով միջնադարյան Հայաստանի խոշորագույն հոգևոր եւ կրթա-մշակութային կենտրոնի: 13-14-րդ դարերում Կեչառիսն անցնում է Պռոշյաններին, որոնցից մի քանիսը թաղված են եղել վանքի գերեզմանատանը:

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 2007 թ. օգոստոսին նախնական բնույթի հետախուզական պեղումներ իրականացրեց Ծաղկածոր քաղաքի տարածքում «Խաչեր» կոչվող հնավայրում եւ քաղաքի հյուսիսային մասում գտնվող դամբարանադաշտում:

«Խաչեր» կոչվող համդամադ գտնվում է Ծաղկածոր քաղաքի հա-



րավարելւմտյան բարձրունքներից մեկի վրա, իր նպաստավոր ստրատեգիական դիրքով Կեչառիսի վրա իշխող բարձրադիր բլրի համեմատաբար հարթ գագաթին, զբաղեցնում է շուրջ 1500 քմ տարածություն: Պեղումների ժամանակ արտաքուստ բացվել են հնավայրի արեւելքից-արեւմուտք ձգվող պարիսպները՝ 37 մետր երկարությամբ: Այն շարված է տարբեր մեծության բազալտի զանգվածող քարերով, առանց շաղախի: Նորաբաց հատվածում, իրարից 10 մետր հեռավորության վրա, զետեղված են երկու ուղղանկյուն աշտարակներ (կոնտրֆորս), որոնցից արեւելյանը անհամեմատ լավ է պահպանվել: Պարիսպն ունի 3,2 մետր լայնություն: Պահպանված բարձրությունը 1 մետր է:

Հետախուզական պեղումների ժամանակ բացվել են երեք սենյակների առանձին մասերը, որոնք նախատեսվում է ամբողջությամբ պեղել 2008 թ.: Պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը մեծ թիվ չեն կազմում, քանի որ դրանք առայժմ միայն վերին շերտերից են: Նյութերի բացարձակ մեծամասնությունը վերաբերում է միջին դարերին (11-14-րդ դդ.): Հնավայրի արեւելյան մասում ճանապարհի շինարարության պատճառով դեպի թեք լանջը հրված հողերի մեջ հայտնաբերվեց 10-11-րդ դարերին բնորոշ բազալտե մի խաչքար: Հուշարձանի նախնական ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ մենք գործ ունենք հնագույն մի ամրոցի հետ, որն ակտիվորեն գործել է նաեւ Ապիրատյանների եւ Պռո-

շյանների տիրապետության շրջանում, հանդիսանալով այս իշխանական տների կեչառիսյան մասոցը: «Խաչեր» հնավայրի պեղումներին զուգահեռ արշավախումբն ուսումնասիրեց հնավայրը կրող բլուրն ամբողջությամբ: Տեղանքի հետազոտությունը ցույց է տալիս, որ պեղվող ամրոցի պարիսպներից ներքեւ տարածված է եղել նրա մերձակա բնակավայրը:

«Խաչեր» կոչվող հնավայրից շուրջ 2-3 կմ արեւելք, Թեղեմիսի արեւմտյան բազուկներից մեկի հարթ գագաթին պահպանվել են «Բերդի գլուխ» կոչված հնավայրի ավերակները: Այն տարբեր մեծության բազալտի քարերից, առանց կրաշաղախի կառուցված մի բավական հզոր ամրոց է, որի պարիսպներն ունեն մինչեւ երեք մետր լայնություն եւ մինչեւ 1,5 մետր պահպանված բարձրություն: Ամրոցի հյուսիսարեւմտյան հատվածում նշմարվում են մեծ չափերի կիսաբլուր աշտարակի ավերակները, որպիսիք բնորոշ են Հայաստանի վաղ միջնադարյան մի շարք հուշարձաններին (Վարդենուտ, Կոշ, Երնջատափ եւ այլն): Պետք է ենթադրել, որ այս ամրոցը պատկանել է Վարաժնունի նախարարական տանը, որի տիրույթների կարեւոր բնակավայրերից էր Ծաղկոցածորը:

Ծաղկածորի երկու նորահայտ ամրոցների մասին հնարավոր կլինի հավելյալ տեղեկություններ ստանալ առաջիկա տարիներին, պեղումների շարունակման դեպքում:

2007 թ. հնագիտական հետազոտություններ ձեռնարկվեցին Լոռու մարզի Սպիտակի ենթաշրջանի Գոգարան գյուղում եւ շրջակայքում: Բնակավայրը գտնվում է Սպիտակ քաղաքից 12 կմ հյուսիսարեւմուտք, Բազումի լեռնաշղթայի հարավային ստորոտում: Ինչպես գյուղի, այնպես էլ շրջակա տարածքները հարուստ են տարբեր դարաշրջանների պատմամշակութային հուշարձաններով:

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԳՈԳԱՐԱՆՈՒՄ

Դրանք միջին եւ ուշ բրոնզի դարաշրջանների դամբարանադաշտերն են ու բնակատեղիները, բնական ու արհեստական քարանձավները, բազմաթիվ սրբատեղիներ, ամրոց, վաղմիջնադարյան (4-րդ դ.) միանալ բազիլիկ եկեղեցին, քառակող կոթողներ, միջնադարյան տապանաքարեր:



2007 թ. ծրագրով նախատեսվեց պեղումներ իրականացնել երեք հնավայրում: Արշավախմբի երեք ջոկատները պեղումներ սկսեցին ամրոցում, արհեստական քարանձավում եւ գյուղից մոտ մեկ կմ հարավ տարածվող դամբարանադաշտում:

Գյուղի արեւմտյան կողմում, երեք կողմերից խորը ձորերով շրջափակված ժայռոտ հրվանդանի վրա, տեղացիների կողմից «Սանգյառ» անվանված միջնադարյան ամրոցն է: Հրվանդանի տարածքը մոտ երկու հեկտար է: Անհրաժեշտությունից ելնելով ամրոցը պարսպապատվել է միայն հյուսի-

սային կողմից, որտեղ պահպանված պարսպապատի բարձրությունը 1-2,5 մ է: Ամրոցի ներսում ուրվագծվում են բազմաթիվ քառակուսի եւ ուղղանկյուն հատակագծով սենյակներ:

Հրվանդանը եզրագծող ժայռերի մեջ կան մի քանի արհեստական քարանձավներ:

Ամրոցում պեղումներն սկսվեցին կենտրոնական հատվածում: Խնդիրը երկու սենյակներից բաղկացած համալիրն էր: Սենյակների ներսում 1-2 մ հաստությամբ հողաշերտ էր, որի մեջ պատերից թափված քարերն էին:

Արեւմտյան սենյակի (610x325 սմ) պատերն ունեն կիսամշակ բազալտի բավական կանոնավոր շարվածք (պահպանված բարձրությունը 90-120 սմ): Հատակի հարավային կեսը հողապատ է, իսկ հյուսիսայինը մշակված քարաժայռն է: Հյուսիսային պատը շարված է հատակից մոտ 30 սմ բարձրացող ժայռի վրա: Սենյակը արեւելյան պատի հարավային ծայրում թողնված մուտքով կապվում է արեւելյան, ավելի մեծ սենյակի հետ: Այստեղ գտնվեցին փայտյա սյուների երեք կյորավուն կիսամշակ տակդիր խարիսխներ:

Դատելով կառուցվածքային եւ շինարարական առանձնահատկություններից՝ բացահայտված սենյակներն ունեցել են գերանակապ, թերեւս երկթեք ծածկ:

Սենյակների պեղումների առաջին իսկ օրը գտնվեց 11-րդ դարի առաջին կեսով թվագրվող բյուզանդական պղնձյա դրամ: Այս գյուղը կարելի է հուշարձա-

նի ժամանակագրությունը որոշելու տեսանկյունից:

Հնագիտական նյութը ներկայացված է հիմնականում խեցեղեն առարկաների՝ կճուճների, թասերի, քրեղանների, կարասների, խփերի մեծ ու փոքր բեկորներով, որոնք թվագրվում են 12-19-րդ դդ.: Այս գտածոները, մասամբ նաեւ բացված սենյակների կառուցվածքային ու շինարարական առանձնահատկությունները, ամրոցի թվագրման միակ կոմաններն են: Առկա նյութի հիման վրա ամրոցը կարելի է թվագրել 11-12-րդ դդ., իսկ որպես բնակավայր այն գործել է մինչեւ 19-րդ դդ.:

Պեղումներ իրականացվեցին նաեւ գյուղին արեւմուտքից հարող ժայռի մեջ փորված քարանձավում: Մոտ 3 մ երկ միջանցքով մուտք ենք գործում քարանձավ: Ներսում, ճիշտ մուտքի դիմաց ժայռակերտ սյուն է, որի աջ եւ ձախ կողմերում երկու սրահներ են: Աջակողմյան սրահը գրեթե կլորավուն է, մոտ 12 քմ մակերեսով: Ձախակողմյան սրահը հատակագծային նույն կառուցվածքն ու չափերն ունի: Այդ սրահից դեպի ձախ խորանում է մոտ 9 մ երկարությամբ անցուղին, որի ծայրամասում փոքրիկ սրահ է: Սրահների պատերին փորված են փոքր պատրիան-խորշեր ձիթաճրագների համար: Այստեղ հայտնաբերվեցին խեցեղեն անոթների մեկ տասնյակ բեկորներ, հիմնականում ուշ միջնադարի թվագրությամբ:

Գագիկ Սարգսյան

Լուսավորչու ինքու ձևավորումը



ՆՈՐԱՅԱՅՏ ԵԿԵՂԵՑԻ ԵՂՎԱՐԴՈՒՄ

Եղվարդը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այն բազմիցս վկայված է միջնադարյան հայ մատենագիրների երկերում (Սեբեոս, Ասողիկ, Հովհաննես Դրասխանակերտցի, Ուստանես եւ այլք), ձեռագրաց հիշատակարաններում եւ վիճակն արձանագրություններում: Համաձայն վկայությունների Եղվարդը միջին դարերում մեծ ու բարգավաճ բնակավայր էր (այն քանիցս հիշատակվում է գյուղ, գյուղաքաղաք, քաղաք հորջորջումներով), շրջապատված բազմաթիվ այգիներով: Ներկայիս բնակավայրի տարածքում եւ շրջակայքում պահպանվել են տարբեր դարերի ուշագրավ հուշարձաններ, որոնք եւս վկայում են երբեմնի բարեշեն բնակավայրի գոյությունն այստեղ:

2007 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը շուրջ երեք ամիս տեւողությամբ մաքրման աշխատանքներ



իրականացրեց Եղվարդի Սբ. Աստվածածին երկհարկանի դամբարան-եկեղեցու շրջակայքում: Սբ. Աստվածածինը միջնադարյան հայ ճարտարապետության եւ քանդակագործության յուրահատուկ մոմիզներից է: Ունի շքեղ գեղարվեստական հարդարանք: Կառուցել է հանրահայտ ճարտարապետ Շահիկ վարդապետը: Պեղումների բուն նպատակը հուշարձանը խոնավությունից ու նաեւ փլուզման վտանգից փրկելն էր: Բանն այն է, որ կառույցի առաջին հարկի զգալի մասը, ավելի քան երկու մետր խորությամբ, թաղված էր հողի տակ, որի պատճառով այդ հատվածի որմերը մշտապես խոնավության մեջ էին: Հայ Առաքելական եկեղեցու Կոտայքի թեմի նախաձեռնությամբ նախատեսվում էր պեղել կառույցը, սալարկել նրա մերձակայքը եւ լուծել ջրահեռացման հարցը:

Նախատեսված պեղումներն ավարտվել են: Գտնվել են վաղ ժամանակների շինարարական մնացորդներ, բացվել բազմաթիվ միջ-

նադարյան թաղումներ, հայտնաբերվել հնագիտական նյութեր: Պեղումների ընթացքում Սբ. Աստվածածնի հյուսիսարեւմտյան կողմում բացվեցին վաղ միջնադարյան երկու եկեղեցական կառույցների մնացորդներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում Եղվարդի միջնադարյան ճարտարապետության, պատմության եւ հոգեւոր կյանքի ուսումնասիրության առումով: Բացվել է 4-5-րդ դդ. պայտածեւ ավագ խորանով եկեղեցու արեւելյան հատվածը, որը պատկանում է միանավ թա-

ղակապ շինության: Այս եկեղեցու ավերվելուց հետո՝ 7-րդ դ. կեսին, նրա ծավալի վրա ներգծել են քառախորան, կենտրոնագմբեթ մի այլ կառույց: Եկեղեցու թվագրությունը որոշակի ճշգրտվում է հատակագծով, շքամուտքի հարավային կողմի որմնասյան հիմքով (Փարպիի Թարգմանչաց, Օշականի Սանկանոց) քիվի քարով (Արուճ, Արթիկ, Եղվարդի Ջորավոր, Սիսիան, Թալին): Հայտնաբերվել է նորաբաց եկեղեցու տրոմպի քարերից մեկը՝ վրան կարմիր ներկով արված ճառագայթի ձեւ ունեցող հատվածով: Այստեղ գտնվել են վաղ միջնադարյան թեւավոր խաչերի եւ կղմինդրի բազմաթիվ բեկորներ:

Եղվարդում հայտնաբերված վաղ միջնադարյան եկեղեցիները լրացնում են այդ շրջանի համանման կառույցների վերաբերյալ մեր պատկերացումները եւ ընդլայնում այդ հնագույն բնակավայրի հուշարձանների ցանկը:

Հուսիկ Մելքոնյան

ԴԱՇՏԱԴԵՄԻ ԱՄՐՈՅԸ Հայ ամրոցաշինական եզակի կառույցի զարգացման փուլերը

Դաշտադեմի միջնադարյան ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին քաղաքից 5 կմ հարավ ընկած Դաշտադեմ, նախկինում Ներքին Թալին գյուղում:

թյուններն աղքատիկ են: Հնագույնը վերաբերում է 8-րդ դարին, ուր ի թիվս բնակավայրերի հիշատակվում է նաեւ Քաղեմի քաղաքը: Միջնաբերդի դղյակի կառուցման ժա-



Գտնվում է գյուղի հարավային մասում, Գայլաձոր կոչված ձորակի աջ ափի տուֆաժայռի հարթակի վրա, որտեղից լայն տեսադաշտ է բացվում Արարատյան դաշտավայրի արեւմտյան հատվածի վրա մինչեւ Արաքս գետը եւ Անի քաղաքի մատույցները:

Ամրոցը պատմական Քաղեմի քաղաքի միջնաբերդն է: Միջնադարյան Քաղեմի քաղաքի ավերակները տարածվում են գյուղից հարավ ընկած ընդարձակ դաշտում 1,5-2,5 կմ շառավղով:

Միջնաբերդը բաղկացած է դղյակից, այն շրջափակող առաջին պարսպաշարից, Սբ. Սարգիս եկեղեցուց ու երկրորդ, մեծ պարսպից: Հուշարձանի վերաբերյալ հրավոր աղբյուրների հիշատակու-

մանակը հայտնի չէ: 6-րդ աշտարակի վրայի արաբերեն արձանագրությունը վկայում է, որ 1174 թ. Անի քաղաքի Շադադյան տոհմի վերջին ամիրա Սուլթան իբն Մահմուդ իբն Շավուրին դղյակին կցել է աշտարակներ: Դղյակը շրջափակող կիսաբլուրակ աշտարակներով առաջին պարսպաշարը վերաբերում է 13-րդ դարին, Ջաքայանների տիրապետության շրջանին, որի մասին է վկայում Իվանե Ջաքայանի թոռ Աղպուղայի հատվածաբար պահպանված արձանագրությունը: Մեծ պարսպաշարը 1812 թ. կառուցել է Երեւանի պարսիկ կառավարիչ Հյուսեին խանը:


Պատմա-մշակութային հուշարձանների պահպանության եւ զբոսաշրջության զարգացման պե-

տական ծրագրի շրջանակներում 2005 թվականից կատարվում են Դաշտադեմի ամրոցի ամրակայումն ու մասնակի վերականգնումը ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ: Աշխատանքներն իրականացնում է "Արագածոտն" ՊԲԸ-ն, վերականգնման նախագծի հեղինակներն են ճարտարապետներ Ս. Դանիելյանը եւ Է. Գրիգորյանը, աշխատանքները ղեկավարում էր շինարար-վերականգնող Գ. Վարդանյանը:

Վերականգնման աշխատանքների ծրագրով նախատեսված մաքրումների ընթացքում միջնաբերդում հաջողվեց կատարել մասնակի հնագիտական հետազոտություններ, հայտնաբերելով ու փաստագրելով բացառիկ գիտական նշանակություն ունեցող արտեֆակտներ: Միաժամանակ դղյակը ենթարկվեց մանրամասն մասնագիտական զննումների, խնդիր ունենալով պարզել բազմաթիվ վերակառուցումների ժամանակը, հաջորդականությունը, ծավալներն ու նպատակները:

Մենք հետազոտեցինք դղյակի 4-րդ աշտարակի ներսի մշակութային շերտը, որտեղ շինարարները խնդիր ունեին հանելու ներսի հողը՝ պատերի հիմնամասերն ու վթարային ճեղքերն ամրակայելու նպատակով: 4-րդ աշտարակը, մինչեւ երկրորդ հարկի մուտքի վերեւի մակարդակը, լցված էր հողով: Մեր դիտարկումներով փաստագրվել է երկու մշակութային շերտ, որոնք խաթարված էին գանձախույզների փորված հորերով: Վերին շերտում շինարարները բացել էին 17-18 դդ. վերաբերող երկու կիսատ պահպանված թոնիրներ:


Ստորին՝ 13-14 դդ. մշակութային շերտը (0.6-0.8 մ), բնորոշվում էր խեցեղեն բեկորների, ոսկրաբանական նյութի եւ այրված փայտյա կոնստրուկցիաների մնացորդների արտակարգ առատ պարունակությամբ: Շերտն ամբողջությամբ միատարր էր: Այն պարունակում էր ջնարակած, հասարակ ու խոհանոցային խեցեղեն, շատ անգամ տեղում ճգմված, անկանոն վիճակում: Խեցանոթների բեկորները թափված էին իրար վրա, կույտերով, ճգմված իրարով, ընկած քարերով եւ այլ անոթների բեկոր-



հնագիտություն

ներով: Տեղ-տեղ անոթների բեկորների առատությունն այնքան էր, որ տպավորություն էր ստեղծվում, թե խեցանոթները շուռ են եկել իրար վրա շարված վիճակից: Աչքի էր զարնում ձիթածրագնե-րի համեմատաբար մեծ քանակու-թյունը, որոնցից շատերը ամբողջական վիճակում էին: Զնարակած սկահակների ու քրեղանների բեկորների շարքում կան բարձրարվեստ նմուշներ: Բազմաթիվ են կանթավոր ջրամանները, օղակա-ծեւ նստուկավոր թասերն ու խոհա-նոցային կճուճները, շարժական օջախների բեկորները: Հայտնաբերվեցին արաբատառ արձանագրությամբ պղնձե սկահակ, կաթսա ու դրամներ:

4-րդ աշտարակի ստորին շերտում, հարավային պատի տակ, հայտնաբերվեց մի եզակի ժապավեն-թիկնոց, ագուցված բրոնզե դեկորատիվ վարդյակներով ու մա-



սամբ ոսկեզօծ գնդասեղներով: Թիկնոցի մակերեսը վուշե գործված էր, ամրացված, հնարավոր է, կաշվե հիմքի վրա: Թիկնոցը պատված է գնդասեղ-գամերից հավաքված նկարազարդումով: Պատկերված են ծաղիկներ, բուսական եւ երկրաչափական զարդեր: Նկարազարդ կոմպոզիցիաների միջնամասերը զարդարված են վեցատերեւ բրոնզե վարդյակներով: Վարդյակները եւ ասեղնազուխ գամերն ունեն կարծ պոչուկներ, որոնց ծայրերը ծալված են կաշվե հիմքի վրա ամրացնելու նպատակով: Պահպանվել են վուշե մանրաթել գործվածքի հատվածները: Կաշվե հիմքը թույլ ուրվագծվում է, բայց երևում են թիկնոցի եզրագծերը կազմող հաստ գործվածքի ժապավենի պատառիկները: Ամենայն հավանականությամբ թիկնոցը եղել է 30-40 սմ լայնությամբ երկար, առավել քան 1 մետրանոց ոսկեզօծ, նկարազարդ ժապավեն, որը կարող էր օգտագործվել որպես հեծյալի կամ նժույգի զարդագոտի: Սա առաջին նմանօրինակ գտածոն է Հայաստանում: Այն գտնվեց մի քանի տակ ծալված, բրդյա սեւ կտորի մեջ փաթաթված, մասամբ այրված տեղում ճգմված, վատ պահպանված վիճակում եւ այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետ. թանգարանի վերականգնող մասնագետների մոտ:

Իտալիայի Հայկական մշակույթի ուսումնասիրության ու վերականգնման կենտրոնի մասնակցությամբ պեղվեց նաեւ Զաքարյանների պարսպի գլխավոր կամարակապ մուտքի ներսի հատվածը, ուր բացահայտվեց երկու շինարարական շերտ:

Հուշարձանի վերականգնման ընթացքում շինարարի, ճարտարապետի ու հնագետի համատեղ, փոխկապակցված աշխատանքը հնարավորություն տվեց բացահայտել եւ վերականգնել մանրամասներ, որոնք հնարավոր չէր նախատեսել մինչ այդ կազմված նախագծում: Պարզվեց, որ միջնաբերդի դղյակի երեւացող ուղղանկյուն դահլիճը ամենավաղ շինությունը չէ: Երեւացող, կրաշաղախով շարված սրբատաշ պատերը պարզապես նրանց մեջ ներառված, ավելի վաղ կառուցված մի

այլ ուղղանկյուն շինություն-միջուկի՝ ներսից ու դրսից ավելի ուշ կատարված երեսպատումներն են: Միջուկը կառուցված է բոլորովին այլ շինարարական տեխնիկայով՝ մեծածավալ կոպիտ մշակված տուֆ ու բազալտ քարերից, ոչ կանոնավոր շարքերով: Որպես կապակցող նյութ օգտագործվել է տեղի հողի եւ որոշ քանակությամբ կավային լուծույթի խառնուրդը: Միջուկի կապակցող լուծույթի միջից հավաքված խեցեղենը վաղ միջնադարյան է եւ թույլ է տալիս թվագրել 5-7-րդ դարերով:




Միջուկի բացահայտումը հնարավորություն տվեց առավել խորը հասկանալ հուշարձանը: Այն հիմք տվեց որոնելու, գտնելու եւ վերականգնելու դղյակի առաջին ու երկրորդ հարկերը կապող, ամբողջովին ծածկված, միջուկի միջով գնացող մինչ այժմ անհայտ գալարապտույտ քարաշեն աստիճանավանդակը: Պատի ծավալի մեջ ներառված, հեշտությամբ փակվող ու քողարկվող աստիճանավանդակի հայտնաբերումը նոր էջ է բացում հայկական միջնադարյան ֆորտիֆիկացիոն ճարտարապետության մեջ:

Ուսումնասիրության արդյունքում հնարավոր եղավ բացահայտել Դաշտադեմի միջնաբերդի դղյակի կառուցմանն առնչվող մի շարք հարցեր եւ պարբերացնել վերակառուցումների 4 հիմնական փուլերը:

Ամենավաղ պահպանված կառույցը մեկ հարկանի գերանածածկ ուղղանկյուն դահլիճն է (միջուկը), որը կառուցվել է առնվազն 5-7 դարերում, արդեն իսկ բնակեցված հրապարակում: Այն հյուսիսային պատի տակ ունեցել է քարե դռնով փակվող գաղտնուղի, որը պահպանվել է անփոփոխ, գլխավոր մուտք՝ հավանաբար հարավային ճակատից, եւ սրբատաշ կամարակապ պատուհաններ, որոնցից հարավայինը օգտագործվել է հետագայում որպես մուտք դեպի երկրորդ հարկ տանող աստիճանավանդակը ստեղծելիս:

Վերակառուցման 1-ին փուլ՝ 8-9-րդ դդ.: Միջուկին կցվել է արտաքին երեսպատումը:

Այն շարվել է սրբատաշ տուֆից կրաշաղախով, փոքրացնելով ու նեղացնելով պատուհաննե-



րի դրսի լայն բացվածքը, խնդիր ունենալով ուժեղացնելու դղյակի պաշտպանական ֆունկցիան: Այս փուլում դահլիճի ինտերիերը մնացել է անփոփոխ:

Վերակառուցման 2-րդ փուլ՝ 9-10-րդ դդ.: Դահլիճի վրա դրվում է երկրորդ գերանածածկ հարկը: Երկրորդ հարկի սրբատաշ պա-

տերը դրվում են միջուկի արտաքին երեսպատման քարերի վրա: Փոխվում, նորացվում է առաջին հարկի գերանածածկ տանիքը, որն ամրացնելու նպատակով դահլիճի ներսը երեսպատվում է սրբատաշ շարվածքով:

Երկրորդ հարկը, ամենայն հավանականությամբ, ունեցել է արտաքինից փայտաշեն աստիճանավանդակով մուտք հարավային ճակատից եւ 4 պատուհան՝ մեկական յուրաքանչյուր ճակատնե-րին, որոնք հետագայում դարձել են 2-րդ, 4-րդ, 6-րդ ու 7-րդ կցված աշտարակների առաջին բնակելի հարկերի մուտքերը:

Վերակառուցման 3-րդ փուլ՝ 12-րդ դ.: Երկհարկանի ուղղանկյուն սրահին արտաքինից կցվում են 4 աշտարակներ (համար 2, 4, 6, 7): Այն թելադրված էր արդեն իսկ խարխվվող շինությունը ամրացնելու եւ պաշտպանողունակությունը ուժեղացնելու նպատակով:

Աշտարակները ունեին 18 մ բարձրություն, որից մինչեւ 5 մ միջը լցված է քարահողային բուտով: Յուրաքանչյուրում եղել են նեղ պատուհաններով երեք բնակելի ու մեկ նկուղային հարկեր: Հարկաբաժինները անջատվում էին գերանակապ, եղեգնապատ, կավածեփ առաստաղներով:

Աշտարակներից 4-րդը փակում է երկրորդ հարկի արտաքին մուտքը, իսկ 6-րդը՝ 1-ին հարկի կենտրոնական մուտքը, եւ այն ստիպված տեղափոխվում է հարավարեւելյան անկյունը՝ ստանալով այսօրվա մուտքի անտրամաբանական տեսքը: Միաժամանակ դահլիճի գերանածածկ առաստաղը վերակառուցվում է քարակերտ թաղակապի՝ բարձրացնելով երկրորդ հարկի դահլիճի հատակի միջը: Երկրորդ հարկի կենտրոնական դահլիճի ծածկի հարցը բաց է մնում: Այս փուլում է կառուցվում երկրորդ հարկ տանող գալարապտույտ քարաշեն աստիճանավանդակը:

Վերակառուցման 4-րդ փուլ՝ 13-14 դդ.: Քառաշտարակ միջուկին կցվում են եւս 3 կիսաշրջան աշտարակներ (համար 1, 3, 5): Դրանք կցվում են այն անկյուններին, որոնք ծածկված չեն եղել աշտարակներով կամ հենապատով եւ հավանաբար թելադրված էին

թույլ հողաշեն միջուկի վրա կանգնեցված արդեն խարխվվող հզոր զանգվածը ամրակայելու անհրաժեշտությամբ: Նորաշեն աշտարակները կապում են իրար արդեն գոյություն ունեցողները, ստեղծելով նաեւ պաշտպանական կուռ համակարգ: Վերջիններս կառուցողական տեխնիկայով նմանվում են Զաքարյանների պարսպին եւ, ամենայն հավանականությամբ, կառուցվել են միաժամանակ:

Հայտնաբերված հնագիտական նյութը թույլ է տալիս եզրակացնելու, որ Դաշտադեմի միջնաբերդը կործանվել է 14-րդ դարի առաջին կեսում, ըստ ամենայնի, թշնամու կողմից գրավման ու իրկիզման հետեւանքով: Աշտարակների ներսի 4 հարկաբաժիններն իրենց ամբողջ պարունակությամբ այրվել, փլուզվել, թափվել են նկուղի հատակին ահեղ իրդեհից: Այսպես է 4-րդ, 6-րդ, 7-րդ ու 2-րդ աշտարակների ներսում գոյացել 13-14-րդ դարերի փակ, միատարր մշակութային շերտը, որն ունի բացառիկ գիտական արժեք: Ամրոցը հավանաբար որոշ ժամանակ դիմադրել է թշնամուն, որի ընթացքում պաշարվածները հասցրել են դուրս հանել շատ թե քիչ արժեքավոր իրերը, իսկ թիկնոցը ու փորագիր պղնձե սկահակը, որոնք փաթաթված էին բրդյա հաստ կտորով, հավանաբար չեն հասցրել դուրս հանել, այդ պատճառով մնացել են այրված ու ներսից փլուզված աշտարակի մեջ:

Միջնաբերդի ավերակների վրա կարճ ժամանակով կյանքը վերսկսվել է 16-17-րդ դարերում եւ նորից ընդհատվել մինչեւ 19-րդ դ. կեսերը, երբ ամրոցի տարածքում բնակություն է հաստատում մահմեդական տարրը: Վերջիններիս փոխարինելու են եկել 20-րդ դարասկզբին այստեղ հաստատված հայ զաղթականները:

Քաղենի քաղաքը եւ նրա միջնաբերդը եզակի հուշարձան է, որը կարող է ամբողջական եւ խորը հնագիտական ուսումնասիրության:

Գագիկ Մ. Սարգսյան
Չնագետ

ՊԱԼԻՆԴՐՈՄՈՆ - ԴԱՐՁԳԻՐ

Դանիել Երաժիշտ

20-րդ դարի արվեստում գոյա-ցավ ստեղծագործական ուղղությունների, մեթոդների, ձևերի, մանիֆեստների, մի խոսքով «լեզուների» մի «բաբելոնյան» խառնարան։ Եւ որքան էլ դրանք իրարամերժ լինեին, ի վերջո կոչված էին արտացոլելու ժամանակի հովերը եւ ամբողջացնելու 20-րդ դարի արվեստի, հոգեւոր կյանքի խճապատկերը։

Նպատակ չունենալով այդ բազմազանության աշխարհով «վտանգավոր» ճանապարհորդություն ձեռնարկելու, հպանցիկ անդրադառնանք միայն երկու դարակազմիկ ստեղծագործական մեթոդներին։ Մեկը հիմնված է, այսպես կոչված, «գիտակցության հոսանքի» վրա՝ սկզբունք, որն առավել արծարծվեց գրականության բնագավառում, մյուսը՝ երաժշտության մեջ հաստատված 12-կիսատոնային համակարգի՝ դոդեկաֆոնիայի վրա։ Ե՛րիշտ է, այս մեթոդները հակոտնյաներ են, սակայն երկուսի միջոցով յուրովի արտացոլվել են նույն ժամանակաշրջանի մարդու հոգու խոր-խորատները։ Գրական համրագիտարանից տեղեկանում ենք հետեւյալի մասին. «Գիտակցության հոսանքը», ըստ փիլիսոփա եւ հոգեբան Ուիլյամ Ջեյմսի, գիտակցության յուրովի ինքնարտացոլումն է։ Գիտակցությունը երբեք չի գործում մասնատված կերպով, չի ընթանում «շղթայված» կամ «շարքով», այլ հոսում է ինչպես գետը։ «Գիտակցության հոսանքը» նույնացվում է «ներքին մենախոսության» հետ։ Այս մեթոդով ստեղծված գրակաությունը հարում է մոդեռնիզմին։ Գրողը, դիտելով իր գիտակցության, հոգեշարժումների հոսքը, ջանում է որսալ միտքը ինչպես որ կա, անմիջակամորեն վերարտադրել, գրանցել այն։ Հայտնի են «Ուլիս» վեպի հեղինակ Ջեյմս Ջոյսի այրօրինակ գեղումները, որոնք ասես մեկ շնչով են գրված եւ տասնյակ էջերի ընթացքում կարող ես հանդիպել ընդամենը մեկ կետադրական նշանի»։ (Краткая литературная энциклопедия, М., 1968, т. 5, стр. 917-918)։ Նույն ոգով է գրված դեռ 18-րդ դարում հայտնի «Տրիստրամ Շենդիի կյանքը եւ կարծիքները» վեպը, որի հեղինակին՝ Լորենս Սթերնին Պուշկինը անվանել էր «անտանելի դետ»։

Կարելի է պատկերացնել, թե ինչպես կբորոշեր Պուշկինն այն արվեստագետներին, որոնք այսպես ասած, արտացոլել են «ենթագիտակցության հոսանքը», մի աշխարհ, որը բացահայտել է հոգեվերլուծող Ջիզմունդ Ֆրոյդը։ Ահավասիկ, Մարսել Պրուստը, Թոմաս Էլիոթը, Սքոթ Ֆիտցջերալդը, Ուիլյամ Ֆոկկերը, Օլդոս Հաքսլին եւ ուրիշներ...

Ինչ վերաբերում է դոդեկաֆոնային մեթոդը կիրառող կոմպոզիտորներին, ապա դրանց ստեղծագործական ակտը նմանվում է Վոլֆգանգ Գյոթեի նկարագրած պոետի արարմանը։ Ըստ փիլիսոփայի, «արվեստը տիրապետում է տարերքին, զետեղելով այն կարծր շրջանակների մեջ։ Երգի աղբյուրը պիտի լինի «հոգու կրակը»։ Եւ ամհրաժեշտ է մարել այն, «պաղեցնել սրտերը», ձեռք բերել այն հոգեկան անդորրը, որն ամհրաժեշտ է, որպեսզի դուրս պոռթկացող խոսքը երգի ձեւ ստանա» (М. Кессель, Гете и "Западновосточный диван", М., 1973, стр. 52)։

Եւ դոդեկաֆոնիայի կանոններն ու ձևերը դարձան այն կարծր կաղապարները, որոնք պարուրեցին 20-րդ դարի մարդու հոգու հրահեղուկը։ Հատկանշական է այս առումով Անտոն Վեբեռնի նաժակը 1931-ի մարտի 17-ին, հասցեագրված Հիլդեգարդ Յոնեին։ Թարգմանաբար ներկայացնում ենք հետեւյալ հատվածը։

«Ինձ թվում է, որ ես մի մոր (նվագախմբային) ստեղծագործության հիմքը դրեցի։ Ես կազմել եմ մի «շարք» (դա Ձեզ հայտնի 12 տոներն են), որն ինքնին արդեն պարունակում է բավական բարդ կապեր (այդ 12 տոների միջեւ)։ Մի շարք, որը հավանաբար ինչոր բանով նմանվում է հայտնի հնագույն ասույթին»։ Նամակի վերջում Վեբեռնը մեջբերում է լատիներեն այդ հմայախոսքի բանաձեւը. SATOR, AREPO, TENET, OPERA, ROTAS

S	A	T	O	R
A	R	E	P	O
T	E	N	E	T
O	P	E	R	A
R	O	T	A	S

Ահա բառացի թարգմանությունը. «Գեղջուկ սերմնացան Արեպոն ձեռքով բռնած է գութանը (կամ անիվները) եւ դեկավարում է աշխատանքը»։

Ըստ երաժշտագետ Պոլնաուերի, Վեբեռնը այս բանաձեւը ընթերցում էր որպես «բուստրոֆեդոն», որ հունարեն նշանակում է «շրջում եմ եզանը» եւ նկատի ունի հին հունարեն գրելաոճը. 1-ին տողը կարդում են ձախից աջ, 2-րդ տողը՝ հակառակը՝ աջից ձախ եւ այլն (А. Веберн, Лекции о музыке, нисьма, М., 1975, стр. 98-99)։ Ընթերցման այս եղանակի արդյունքում ստացվում է հետեւյալ նախադասությունը. «Սերմնացանը դեկավարում է աշխատանքը, դեկավարում է աշխատանքը սերմնացանը»։

Վեբեռնի մեջբերած այս հմայախոսքը ունի բազում այլ ընթերցումներ եւ մեկնաբանություններ...

Մոգական այս քառակուսու մեջ բառը վերջից դեպի սկիզբ կարդալու եղանակը երաժշտության մեջ անվանում են խեցգետնային շարժում։ Բացի այդ հայտնի են նաեւ նույն թեման, հնչյունների շարքը շարադրելու մյուս կերպերը՝ հայելանման եւ հայելանմանի խեցգետնային շարադրանքը։ Բազմածայնության այս տեխնիկայի կիրառման կատարյալ նմուշներն են Յոհան Սեբաստիան Բախի «Ֆուգայի արվեստը», «Երաժշտական ընծա»-ն եւ այլն։ Այս տեխնիկայի վրա է հիմնվել նաեւ դոդեկաֆոնիան։ Ըստ Պոլնաուերի, Վեբեռնը հիշյալ նամակում ակնարկում է իր Կոնցերտը, op.24, որի կոմպոզիցիոն սկզբունքը հեղինակը համեմատել է նշված հնագույն բանաձեւի հետ։

Եթե պոլիֆոնիայում որեւէ թեմայի վերջից դեպի սկիզբ շարադրելը կոչվում է խեցգետնային շարժում, ապա բանաստեղծական արվեստում այն անվանում են պալինդրոմ կամ պալինդրոմոն։ Սա հունարեն նշանակում է «վազում եմ», «վերադարձող» եւ նկատի ունի այն, որ այս տեխնիկայով գրված որեւէ բանաստեղծություն կամ նախադասություն կարելի է կարդալ թե՛ սկզբից դեպի վերջ եւ թե՛ հակառակը, ընդ որում երկու դեպքում էլ տեքստը եւ իմաստը նույնն են։

Նման սահմանափակումների դեպքում, երբ հոգու եւ մտքի թռիչքը կաշկանդվում է «պրոկրուստյան մահճի» շրջանակներով, դժվար է համատեղել եւ բառակապակցությունը, եւ գեղեցիկը, եւ իմաստավորը։ Ըստ մասնագետների, նույնիսկ ոչ բոլոր լեզու-

Երաժշտություն

Ներն են լայն հնարավորություններ ընծեռում։ Օրինակ, պալինդրոմի ձեւով ստեղծած բազմաթիվ բարձրարվեստ բանաստեղծություններ կան չինարենով, մինչդեռ եվրոպական լեզուներով գրվածները որոշ արհեստակաություն են պարունակում։ «Նյութի դիմադրության հաղթահարման» առումով օրինակելի է Բախի արվեստը։ Ըստ Ռոբերտ Շումանի, պոլիֆոնիայի խիստ կապանքները, Բախի ձեռքերի համար, պարզապես ծաղկե դրասանգներ էին, որոնք ի զորու չէին խոչընդոտելու նրանց թեթեւ ճախրանքը։ Նույնը չես ասի պոեզիայի պարագայում, ուր նաեւ բառերի իմաստի եւ քերականության հետ հաշվի նստելու խնդիր է ծառանում։ Ահա այս հանգամանքից է, որ օրինակ, ֆուտուրիստ պոետ Վլենմիր Խլեբնիկովի «Ռազին» բացառիկ պոեմը, որ ամբողջությամբ գրված է պալինդրոմ ձեւով, որոշ արհեստականություն է պարունակում։ Ահա հետաքրքիր մի պատառիկ. "Раб, нежъ жѣн дар", որ թարգմանվում է. «Ծո՛րտ, գուրգուրի՛ր տերերի կանանց» (Краткая лит. энциклопедия, М., 1968, стр. 655-656)։ Ավելի բանաստեղծական է հնչում մեծ դաշնակահար Վլադիմիր Սոֆրոնիցկու պալինդրոմը. «Но невидим архангел, мороз узором лѣг на храм, и дивен он»։ Ահա թարգմանությունը. «Ձյունը նախշել է տաճարը՝ եւ զարմանահրաշ է այն, սակայն անտեսանելի է հրեշտակապետը»։

Անշուշտ հայերենով գրված պալինդրոմներ եւս կան։

Առաջին նմուշը, որ հանդիպել եմ դպրոցական տարիներին, ահավասիկ. «Մենակ կատակ կանեմ»,- այս զավեշտական օրինակն էր։ Հետո ինքս էլ փորձեցի եւ ներկայացնում եմ շատ թե քիչ հաջողված տարբերակներից մեկը. «Մարդ. ունի գին ու դրամ»։ Հետագայում իմացա, որ գերմանացի գրող Էրիխ Մարիա Ռեմարկի իսկական ազգանունը «Կրամեր» էր, որը գրողը դարձրել էր հակառակը՝ «Ռեմարկ»։ Ի դեպ, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը, ինչ որդուն է անվանել «Լեինադ», որ «Դանիել» անվան դարձգիրն է...

Դառնանք երաժշտությանը։ Ըստ հանրագիտարանի, երաժշտական առաջին հայտնի դարձգիրը կիրառված է փարիզյան «Նոտդ դամ» դպրոցի ժամանակաշրջանի (13 դ.) «կլա՛ուզուկա» կոչված երգասացություններից մեկում (Музыкальная энцикл-

опедия, М., 1978, т. 4, стр. 528)։ Նույն աղբյուրից տեղեկանում ենք նաեւ, որ երբեմն դարձգիրը խորհրդանշել է անսահմանություն, հավերժություն։ Օրինակ, Սամուել Շայտի (16-17-րդ դդ.) դարձգիր եռածայն կանոնը,Tabulatura novaե ժողովածուից։ Կանոնը հիմնված է հետեւյալ խոսքերի վրա. «Տէ՛ր, թող յաւետ ամօթով չմնամ»։ Դավթի այս աղոթքը քաղված է թիվ 30 սաղմոսից. «Յոյսս դրի քեզ վրայ, Տէր...»։ Իսկ հանրագիտարանում վկայակոչված Պյեռ դը Լա Ղյուի (15-րդ դ.) Missa Alleluia մեսսայում դարձգիրը օգտագործված է որպես Քրիստոսի խոսքերի հնչյունային պատկերազարդում։ Ահա՛ այդ խոսքերը. «Ետե՛ւս գնա, սատանա՛»։ Եւ հնչյունները սկսում են նահանջել, հետհետ գնալ։ Ամենահայտնի օրինակներից է Գիյոմ դը Մաշոյի (14-րդ դ.) եռածայն ռոնդոն, որը կոչվում է «Իմ վերջն իմ սկիզբն է, իմ սկիզբն իմ վերջն է»։

Այս ռոնդոն ունի սիմետրիկ ձեւ, ընդ որում երկրորդ կեսը առաջինի դարձգիրն է։ Դարձգրի բարձրագույն նմուշներ հանդիպում են Բախի «Երաժշտական ընծա» շարքում, մասնավորապես երկծայն անվերջանալի կանոնում, Մոցարտի «Յուպիտեր» սիմֆոնիայի ֆինալում, Բեթհովենի, Չայդնի, Բրամսի, Շոստակովիչի եւ այլոց արվեստում։ Դարձգրի մեծակերտ նմուշ է Պալուկ Հիմդեմիտի «Անդ եւ ետ» օպերան, որում զարգացումը հասնելով շրջադարձային կետին, ասես արտացոլվելով հայելում, նույնությամբ վերադառնում է իր սկզբին։

Դարձգիր կիրառել են նաեւ ժամանակակից հայ կոմպոզիտորները։ Տիգրան Մանուրյանի 2-րդ սոնատի 1-ին մասի վերջում դաշնամուրի որոտընդոստ ակորդներից հետո ջութակի հնչյունների «սոսափյունը» երեք պիանոյից աճում է մինչեւ մեկ պիանո եւ դաշնամուրի առանցքային ակորդից հետո նույն ճանապարհով հետ դառնում ու աներեւութանում։ Այս գողտրիկ դարձգիրն ընկալվում է որպես հպանցիկ մի տեսիլ։




Հետաքրքրական է Միքայել Կոկժանի «Օրորոցայինը»՝ դաշնամուրի համար, նվիրված կոմպոզիտոր Հրաչյա Մելիքյանի հիշատակին։ Այն գրված է 12-կիսատոնային եղանակով։ Որպես ձեւակառուցման հիմք, շինանյութ, Կոկժանը վերցրել է հինգ հնչյունից բաղկացած մի սերիա՝ շարք։ Տվյալ շարքը կոմպոզիտորը կազմել է «Հրաչ» (Грач) անվան տառերին համապատասխանող լատիներեն նիշերից՝ սոլ-ռե-լյա-դո-սի։ Սա յուրատեսակ մի երաժշտական աքրոստիկոս է։ Այս շարքը եւ նրա ածանցյալ երեք սերիաները կոմպոզիտորը թղթի վրա գծագրել է խաչի տեսքով։ Ընդ որում, խաչի ձախ թեւը բոււն սերիան է, ներքեւի թեւը այդ սերիայի հայելանման շարադրանքն է, վերին թեւը՝ բոււն սերիայի դարձգիրը, իսկ աջ թեւը՝ հայելանման սերիայի դարձգիրը։ Գրաֆիկական երաժշտության այս խաչակերպ պատկերը դիտվում է որպես ստեղծագործության ե՛ւ բնաբան, ե՛ւ ձեւավորում։

Իսկ բոււն «Օրորոցայինը» բխում է նշված չորս սերիաների զանազան համակցություններից։

Ի դեպ, 16-րդ դարից պահպանված մոտային գրաֆիկայի խաչակերպ մի նմուշ՝ հանելուկային մի կանոն նույն ինքը Մ. Կոկժանը զետեղել է «Երաժշտական տարածության տոպոլոգիա» վերնագրված իր գրքում, որը 2004-ին տպագրվել է Մոսկվայում։ (М. Кокжаев, Топология музыкального пространства, М., 2004, стр. 10)։ >>>

Երաժշտություն



S. Մանուկյան, Սոնատ №1:

Որպես կոմպոզիցիոն սկզբունք, դարձգիր օգտագործել է նաև Մարտուն Իսրայելյանը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Կոնտրաստների» շարքում:

Ամենացայտուն կերպով այն արտահայտված է շարքն ամփոփող 5-րդ «Կոնտրաստում», որը կերտված է 12-կիսատոնային (դոդեկաֆոն) եղանակով: Այս «Կոնտրաստում» դարձգրի սկզբունքը ձեռք է բերում գերիշխող, համապարփակ բնույթ: 5-րդ «Կոնտրաստի» կառուցվածքը հիշեցնում է Դիմիտրի «Անդ եւ ետ» օպերայի երաժշտության զարգացման ընթացքը: Այս «Կոնտրաստը» եւս բաղկացած է երկու կեսից, ընդ որում սկսած 41-րդ տակտից երաժշտությունը վերադառնում է դեպի սկիզբ՝ նույն ճանապարհով, որով եկել էր:

Այս «Կոնտրաստը» տրամաբանական մի կուռ կառույց է: Այստեղ գործում է սիմետրիայի օրենքը, ընդ որում տարբեր բաղադրիչների մակարդակով՝ ինտերվալային, գործիքավորման, տեսսիտուրայի, ֆակտուրայի, նյութի, ծավալի բաշխման, հնչուժի եւ այլն:

«Կոնտրաստի» ութսուն տակտերից առաջին եւ վերջին քսան տակտերը Իսրայելյանը շարադրել է Անտոն Վեբեռնին հաստուկ «պուլսանտիլիստական» եղանակով, որը բնորոշվում է որպես «պատուգանք, շրջապատված հնչյուններով»:

Բուն սերիայի հնչյունները հերթով շարադրում են կլարնետը, ֆագոտը, հորոյը, թավջութակը եւ այլն: Սրանք շշուկով հնչող կտրուկ հնչյուններ են: Առաջին եւ վերջին 20 տակտերում լարայինները նվագում են «պիցցիկատո», որոնք փողայինների հետ մեկտեղ կարող են հիշեցնել անձրե-

ւի կաթիլներ կամ աստղերի թարթելը, կամ մեկ այլ պատկեր: Ինչպես նկարչի վրձինը հետզհետե ներկում է, պատում կտավի «սպիտակ բծերը», այնպես էլ այստեղ՝ երաժշտական տարածության (կտավի) պատուգանքը հետզհետե լցվում են նորանոր նվագարանների հնչյուններով: Գնալով ծայրերի հյուսվածքը խտանում է, ծանրանում, «մակընթացության» հնչուժը կուտակվում է եւ հասնում մինչեւ «կրիտիկական զանգվածի»: Նվագախումբն ամբողջությամբ սկսում է հնչել եւ դորդալ 34-րդ տակտից եւ այն տեւում է մինչեւ 42-րդ տակտը: (Բոնգոները կոմպոզիտորը օգտագործել է միայն 3-րդ «Կոնտրաստում»:) Ինչպես նշվեց, 41-րդ տակտից սկսվում է հետընթաց շարժումը՝ «տեղատվությունը» եւ երաժշտությունը վերադառնում են «ի շրջանս յուր»:

Եթե հարկ լիներ հակիրճ բնութագրել 5-րդ «Կոնտրաստը», ապա կկիրառեինք Վասիլի Կանդինսկու կոմպոզիցիաներից մեկի առումը՝ «Ծանրը թեթեւի մեջ»: Ընդ որում «թեթեւը» առաջին եւ վերջին 20 տակտերն են, որոնք երիզում են «ծանր» միջուկը...

Դարձգրի կիրառման հայտնի գավեշտական դեպքով էլ ավարտենք մեր առանց այդ էլ ծանրացած խոսքը: Ասում են կոնսերվատորիաներից մեկի մի ուսանող չէր հասցրել հորինել քննությանը պահանջվելիք ստեղծագործությունը եւ իր փորձառու ընկերոջ խորհրդով արտագրել էր իր ուսուցչի ստեղծագործությունը: Բայց, որպեսզի «չբռնվի», այն արտագրել էր հակառակ ուղղությամբ՝ վերջին հնչյունից մինչեւ սկիզբ ու ներկայացրել քննությանը: Պարզվել է, որ դա Ֆերենց Լիստի 2-րդ ռապսոդիան էր...

Նուրբ ու գրավիչ


Կարինե Աճեմյանի քանդակները՝ նուրբ ու գրավիչ պատկերաշար են ներկայացնում: Երեսնամյա երիտասարդ այս կինը Երեւանից է, ուր արելելյան հազարամյա հողը նրան ներարկել է մի քնարերգություն, որը հնչել է հին ասքերում ու երգերում: Հայաստանը, ուր ծնվել եւ ապրում է Կարինե Աճեմյանը, նրա հոգում ու սրտում կուտակել է ներդաշնակության պահանջը, որն իր արտահայտությունն է գտել նրա քանդակների բորբոքում պարերում:

Այդ ֆիգուրներն ասես պարուրված են լեռներից եկած բուրումնավետ քամիներով, որ հետո շղջափելու են մարդկային մարմինները: Երիտասարդ աղջիկների մի ամբողջ փունջ, որ Կարինե Աճեմյանը փնտրել է հավերժական սարերի ստորոտներից, մեզ են ցուցադրում իրենց մերկության անկրկնելի գեղեցկությունը: Այդ կանայք՝ սլացիկ ու գեղեցիկ, երիտասարդ ու ճկուն, մեկը մյուսից գրավիչ, միշտ մնում են ողջախոհ ու զգույշ՝ չնայած իրենց մերկությանը: Ինչպիսին էլ որ նրանք լինեն՝ հայելու արջեւ սեթեւեթող, համեստ, բայց գլխապտույտ առաջացնող, մի խենթ կույս՝ գրկաբաց, սիրեցյալին սպասելիս, այս բոլոր բրոնզե քանդակները երգում են գեղեցկության հիմնը:

Բայց Կարինեի ստեղծագործությունների մեջ առանձնանում է «Աղոթող միանձնուհին»: Այստեղ քանդակի ամբողջ կառուցվածքը ձգվում է դեպի երկինք: Մարմինը, խաչված ձեռքերը, եթրային սիրով պարուրված դեմքն արտահայտում են մի աղոթք, որ բարձրանում է առ Աստված: Անարատության ու մաքրության մի ճանապարհով Կարինեն մեզ ցույց է տալիս, որ եթե սահմաններ չճանաչող արվեստը ձեւերի ու մարմինների ներդաշնակությունն է, ապա նաեւ մի ուղի է, որ տանում է դեպի հոգիների կատարյալ ներդաշնակություն:

Քրիստիան ՃԵՐՄԱԿ
«Նուվել դը Արմենի»

Հայրենի / Armenian woman



Karine Atshemyan



Աղոթող / Akhtamar



Աղոթ / Preyer


Կարինե
Աճեմյան



Նազելի / Nazeli

Սամվել Չիբուխչյան

Samvel Chibukhchyan



1. Չքոսայգի, 2006 թ.
Park, 2006
2. Երկնային տարբեր, 2000 թ.
Heavenly Gift, 2000
3. Հանգրվան, 2000 թ.
Terminus, 2000
4. Թռիչք, 1999 թ.
Flight, 1999
5. Կանաչ բացալ, 1999 թ.
Green Valley, 1999

գեղանկարչություն

Սամվել Չիբուխչյան մարդը ճանաչվեց ավելի ուշ, քան Սամվել Չիբուխչյան գեղանկարիչը: Տարիներ շարունակ տարբեր ցուցահանդեսներում նրա նկարները առանձնակի ուշադրություն են գրավել, հետաքրքրել բազմապիսի արվեստասերների, մասնագետների, սակայն հեղինակը մնացել է անհայտ: Նույնիսկ այն ժամանակ, երբ մի քանի տարի առաջ մեկական գործի հանրապետական ցուցահանդեսում նրա «Երկնային պարզե» կտավը տարբեր ուղղությունների դավանող եւ տարբեր սերնդի արվեստագետների կողմից միաձայն որոշվեց ներկայացնել Հայաստանի նկարիչների միության սահմանած առաջին մրցանակի: Նման դեպքերում սովորաբար վեր են բարձրանում արդեն մեծ ճանաչում ունեցող արվեստագետների ինքնավստահ հավակնությունները, եւ այս դեպքը միակն էր թերեւս, երբ բոլորը, ինչպես ասում են, ցած դրեցին զենքերը: Տեղին է հիշել մասնագետներից մեկի կարծիքը. «Այս նկարիչի ներկայակի վրա բացի գույներից կա եւս մի բան, որը հնարավոր չէ չտեսնել՝ առիթնող ազնվությունը»: Պրոֆեսիոնալ նկարչի համար նման որակումը զուտ արտահայտություն չէ, այլ արվեստագետի կերպը հավաստող սկզբունքային ելակետ:

Փոքր ցանկապատով առանձնացած հայրական տոհմիկ ընտանիքի տան բակում կառուցած արվեստանոցում առանձնացած, նա կարծես խուսափում է արվեստի «ժամանակակից շունչը» հավաստող նկարիչների բուռն հորձանուտից, ինքնահաստատման հավակնոտ փորձարարություններից: Նրա բնատուր խորաթափանց միտքը անընդհատ հուշում է, որ ստեղծագործական ֆենոմենի գաղտնիքը պետք է փնտրել ներանձնական ապրումների սահմաններում, որտեղ սիրո, լույսի ու հավատի շաղախից խմորվում, արարվում են դեռեւս չասված բառը, չնկարված պատկերը: Դեպի իր եության խորքը այս ներհայաց հեռանկարի մեջ նա փնտրում է իր իսկ իրական կերպը, վերաիմաստավորելով հավերժա-

կան մոտիվների եւ բնության մնացած ձեւերի հոգեւոր կապի խորհուրդը: Այսպես նրա արվեստում մուտք գործեց ծառի մոտիվը: Մոտիվը, ոչ թե պատկերը, որովհետեւ նկարչի պատկերացումներում այն յուրահատուկ արքե-տիպ է, խորապես իմաստակիր մի ձեւ, որ, ի վերուստ գոյատևելով մեր էության անհայտ շերտերում, զուտ կերպավորման նյութ չէ, այլ ստեղծագործական ֆենոմենի հիմնարար ազդակ: Պատահական չէ, որ նկարչի ստեղծած «Ծառ» նկարների շարքը ակնհայտորեն տարբերվում է այլ արվեստագետների նմանատիպ գործերից: Այս ծառը այնուհետեւ բնի վրա պատկերված սպիտակ եւ կարմիր նշագծերով կիսաշուկա նրա բնանկարներում՝ խորհրդավոր իր միայնության մեջ պատկերը պարուրելով թանձր խոհի աննյութական շղարշով: Ինչ է և սա՝ մետաֆորա՞: Իհարկե, որքանով որ նկարչի ներաշխարհում այն իր կենդանի հույզով անհատականացված, խորապես վերապրված վիճակ է: Չիբուխչյանի արվեստում մետաֆորա է հենց բնությունը, պատկերագրական առումով զարմանալի պարզ ու խոհուն նրա բնապատկերները՝ երկնքի կապտամոխրագույն ֆոնի վրա արձանացած սպիտակ ամպի հայացքի տակ հավերժորեն միմյուր անտառը, ցորենի մի կտոր դաշտի խորհուրդը ավերի մեջ առած վառված լեռների լուռ անըջանքը, քարեղեն հոգսը լանջերին թառած վեր ձգվող լեռների տառապալից ճիգը, կանաչ օազիսի պես կենսատու լույսով ճառագած մի կտոր հողակտորի շուրջը ծարավից պապակված արեւախամ զաշտերի հուսահատ լռությունը, հիշողության տարիների ծանրությունից կքած կավաշեն լքված տնակները: Իսկ «Իմ Դանայան» նկարը բնության ու բնածղիցուհու ներդաշնակ կապի առիթնող մաքրությամբ դեռ երկար կիռզի ոչ միայն հայ, այլեւ անգլիացի այն արվեստասերին, որ արտասահմանյան աճուրդներից մեկում ձեռք բերելով այս նկարը, չթաքցրեց իր շնորհակալությունը: Այս նկարներից յուրաքանչյուրը բանաստեղծական անխառն հույզերի մաքուր, անեղծ արտացոլանք է, հիրավի ապրված վի-



ճակ, եւ հենց այս ապրումի հուզական շաղախից է ստեղծվում նկարչի գունազգացողության այն ներփակ դաշտը, ուր բնության ամեն մի պատկեր, մեր աչքի համար այնքան սովորական իրական ձեւ վերագտնում է իր գոյության կենդանի շունչը: Եւ հենց այստեղ է թաքնված թերեւս նկարչի ստեղծագործական ինքնատիպությունը հավաստող ֆենոմենը՝ կոլորիտը: Սովորաբար այն որակվում է «տաք» կամ «սառը», եւ միայն բնատուր ծիրքով օժտված արվեստագետները գիտեն, որ այն ոչ թե ստեղծվում, այլ արարվում է «չիմացության» անըմբռնելի սահմաններից, որ այն նույնիսկ գունազգացողություն չէ, այլ հոգեմայրի մի տարօրինակ շաղախ՝ անըմբռնելի, անբացատրելի: Եւ միայն ի վերուստ բանաստեղծված հոգիներից է տրված այդ շաղախի մեջ նշարել վերանձնականի լուսե ցուլերը որպես բարձրագույն «Ես»-ի բարեհաճ կամքի մեծագույն շնորհք: Եւ հասկանալի է Մոսկվայից նկարչի արվեստանոցը այցելած օտարերկրացու հուզումը, որ վերոհիշյալ «Երկնային պարզե» նկարում առաքյալների լքված սեղանից դեպի երկիր տարածվող ճերմակ սփռուցի անեղծ ծալքերի հյուսվածքի մեջ լուռ «ունկնդրում» էր Բախի մեսսաների տիեզերածին հնչյունները: Չիբուխչյանի արվեստանոցը հավատավոր մարդու կացարանն է՝ լուռ ու ինքնամոխի իր առիթնող մեծության մեջ:

Սարո Սարուխանյան

Ծնվել է Մայկոպում, ուր գաղթել էին կարսեցի մայրն ու խնուսցի հայրը, մինչեւ յոթ տարեկանն ապրել է Յալթայում, 1932 թ. տեղափոխվել Երեւան: Ուսանել է պրոֆեսիոնալ գեղանկարչի (Երեւանում) եւ Կինոբեմադրող նկարչի (Մոսկվայում) մասնագիտությունները, 1955-1990 թթ. «Չայֆիլմ» կինոստուդիայում բեմանկարել մի քանի տասնյակ կինոնկարներ, եղել մուլտիպլիկացիոն ֆիլմերի ստեղծագործական միավորման գե-

ՄՏԵՓԱՆ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

ղարվեստական ղեկավարը, կազմակերպել հայկական մուլտֆիլմերի արտադրության մեջ հայ մասնագետների պատրաստման գործը, մինչեւ օրս դասավանդում է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետ. ինստիտուտում: Բեմանկարչական խնդիրներն իրականացնելու համար առաջին իսկ ֆիլմերից պրոֆեսիոնալիզմն ու պրպտուն միտքը Անդրանիկյանին մղել են մանրամասն ուսումնասիրելու պատկերվող միջավայրի առանձնահատկությունները: «Յուլսիսային ծիածան» ֆիլմում, սարդարի հայելապատ պալատը վերականգնելիս, ձեռքի տակ ունենալով մի քանի ժլատ նկարագրություն ու հին պատկերներ, կառուցեցին վիթխարի ղեկորացիաներ ու էրիվանի ամրոցի 350x6 մ չափեր ունեցող պատը՝ դարպասներով: Չետագայում, երբ արդեն դարձել էր «Չայֆիլմ» կինոստուդիայի առաջատար նկարիչներից մեկը, ձեռք բերեց պատմական ֆիլմերի բեմանկարչի համբավ: Անդրանիկյանի ընկալումները բազմապլան են մերաշխարհը՝ զգայուն, հոգին անթեղում է կարոտ, արժեքների, ազգային ավանդույթների համդեպ խորն ակնածանք: Ամեն ինչում գեղեցիկը տեսնող եւ անսովորը փնտրող Անդրանիկյանը հաճախ է հետաքրքիր լուծումներ առաջարկել՝ թարմացնելով եւ իր, եւ ռեժիսորի ստեղծագործական որոնումները ու իր որոշակի լուծման ունենալով ապագա ֆիլմի հաջողության մեջ: Եվ որքան նկարիչը ճիշտ է ներկայացնում միջավայրը, այնքան նրա աշխատանքը ֆիլմում չի առանձնանում: Անդրանիկյանի էքսիզներով ու ղեկորացիաներով ստեղծված ֆիլմերը դիտելիս դժվար է ասել, թե որտեղ է սկսվում ռեժիսորի մտահղացումը, որտեղ ավարտվում նկարչի աշխատանքը: Թերեւս համդիսատեսի մտքով չի անցնում, որ «Տժվժիկ» ֆիլմում տիպիկ արեւմտահայաստանյան տեսարանները հիմնականում նկարահանվել են ղեկորացիաներում: Անդրանիկյանը «Նռան գույնը» ֆիլմում որոշակի ճշտումներ է կատարել ազգագրական հարցերի, հայկական տարազի ու կենցաղին բնորոշ մանրամասների հետ կապված: Արվեստագետի շնորհը դրսևերով էլ է նաեւ մուլտիպլիկացիոն արվեստում՝ կինոհանդիսատեսին պարգեւելով «Արեւի հարսնացուն», «Վին պինգվինը» եւ այլ ֆիլմեր: Նրա ստեղծագործությունների շնորհիվ կտրուկ շրջադարձ կատարվեց հայկական մուլտիպլիկացիայում: Լինելով «Արեւի հարսնացուն» (1971 թ.)



մուլտֆիլմի սցենարի համահեղինակ, բեմադրող ռեժիսոր, բեմադրող նկարիչ եւ մոնտաժոր, Անդրանիկյանն օգտագործել է ազգային կենցաղի խորհրդանիշներ եւ բանահյուսական կերպարներին տվել արդիական հնչեղություն: Կինոնկարը 1972-ին արժանացել է Զագրեբի կինոփառատոնի հատուկ դիպլոմին, իսկ 1973-ին՝ Ավան Աթայի համամիութենական կինոփառատոնի «Լավագույն ռեժիսուրայի եւ մուլտֆիլմում լեզունդի օրիգինալ մարմնավորման համար» մրցանակին: «Վին պինգվինը» (1972 թ.), որ նրա, սցենարի հեղինակ Ա. Տեր-Յակոբյանի, նկարիչ Կ. Անդրանիկյանի եւ կոմպոզիտոր Ս. Շաքարյանի ստեղծագործական համագործակցության փայլուն արդյունքն է, իր հուժնոր, պատկերավոր հնչյունավորման ու գեղեցիկ երգի շնորհիվ մինչեւ օրս սիրված է թե՛ մեծահասակների եւ թե՛ փոքրիկների կողմից: 1978-ին Անդրանիկյանը որպես բեմադրող ռեժիսոր արժանացել է Երեւանի համամիութենական կինոփառատոնի «Մուլտֆիլմում մանկական հեքիաթի լավագույն մարմնավորման համար» մրցանակին «Կարչկար, մի ոգնի կար» մուլտֆիլմի համար: Անդրանիկյանի եռանդն անսպառ էր, նա անընդհատ աշխատում էր. էքսիզներ անում, ղեկորացիաներ ստեղծում, նկարահանման հրապարակում մշտապես օպերատորի եւ ռեժիսորի կողքին էր, հարկ եղած դեպքում կադրի կոմպոզիցիան ճշտում էր նաեւ օբյեկտիվում, հասցնում էր ժամանակ գտնել ու ստեղծել տվյալ ֆիլմի հետ կապված գեղանկարչական աշխատանքների շարք. կինոգործիչների դիմանկարներ, տարբեր բնանկարներ, մատյուրմորտներ: Ստեփան Անդրանիկյանի ստեղծագործական միտքն ակտիվ է եւ այսօր, երբ իր իմացությունն ու փորձն է հաղորդում ուսանողներին կամ պարզապես զրուցում որեւէ հարցի շուրջը: Դժվար է ասել պատկառելի տարիքն ու հայկական կինոարվեստում կատարածի հանդեպ հազեցածությունը, թե՛ այսօրվա կինոարտադրությունում պրոֆեսիոնալիզմի ճնշվածությունն է հետ պահում նրան մասնակցելու մոր ֆիլմերի ստեղծմանը: Կարեւորն այն է, որ հարուստ կենսափորձ, մասնագիտական գաղտնիքներ եւ բազում հուշեր ամբարած բազմավաստակ նկարիչը դեռ շարունակում է ստեղծագործել եւ կտավին հանձնել իր ուրույն աշխարհի պատկերները:

Անահիտ Արփեն

ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐԻ ՉՐԱՇԱԼԻ ԱՇԽԱՐՀԸ

Չոկտեմբերի 9-13-ը Երեւանի «Ցիտադել» մորաբաց կենտրոնում տեղի ունեցավ ֆիլատելիստական մեծ ցուցահանդես՝ նվիրված մորանկախ Չայաստանի առաջին նամականիշի թողարկման 15-ամյակին: Ցուցահանդեսին իրենց հավաքածուներով մասնակցում էին մի շարք հավաքորդներ, որոնցից մեկի մասին է ստորեւ ներկայացվող ակնարկը:



Զափազանց հետաքրքիր անձնավորություն, մասնագիտությամբ իրավաբան Վլադիմիր Գրիգորի Պետրոսյանը ծնվել է 1948 թ. Երեւանում, զինվորականի ընտանիքում: Մանկությունից կլանվել է մամականիշների եւ բացիկների հավաքչությամբ, որը հետագայում, մասնագիտությամբ զուգահեռ, դարձել է նրա կյանքի ու գործունեության հիմնական ուղղվածությունը: Իրավագիտության թեկնածու, ԳՀ կառավարության եւ բանկային համակարգերում աշխատած, ինչպես նաեւ երեւանյան եւ մոսկովյան բուհերում դասավանդած (այժմ էլ դասավանդող) Վ. Պետրոսյանը բազմիցս մասնակցել է Չայաստանում եւ Մոսկվայում ֆիլատելիստների միությունների կազմակերպած ցուցահանդեսներին եւ հաճախ արժանացել բարձրագույն մրցանակների: Նրա մամականիշների եւ բացիկների հարուստ հավաքածուն 2005-ին առանձին ցուցադրվել է ԳՀ Ազգային ժողովում: Վլադիմիր Պետրոսյանը հաճելի անակնկալ է մատուցել մամականիշների հավաքչության «հիվանդությամբ տառապող» հայ եւ օտարազգի մասնագետներին, իր հա-



կինյանը, իրավագետ Չեմրիկ Ադամյանը: Առաջիկայում պետպատվերով կիրատարակվի գրքի հայկական բաժինը, սակայն կարծում ենք, որ այն անհրաժեշտ է հրատարակել ամբողջությամբ: Չայտնի է, որ Մեծ Բրիտանիայի թագուհի Էլիզաբեթ Երկրորդը մամականիշների ու բացիկների խոշորագույն հավաքորդներից է: Այդ բանը նկատի ունենալով՝ Վլադիմիր Պետրոսյանն իր կազմած գրքի ազդործակի կարգով տպագրված մեկ օրինակ ուղարկել է թագուհուն: Նամականիշներն ու բացիկները համաշխարհային մշակույթի մի ինքնատիպ բնագավառ են, որ կարելու է ինչպես ծանաչողական, այնպես էլ գեղագիտական տեսակետից: Եւ լավ է, որ Չայաստանը որպես պետություն, եւ մեր հայրենակիցները որպես հավաքորդներ, մույնպես մասնակից են քաղաքակրթական համեմատաբար մոր այս երեւույթին: Միքայել Զարությունյան Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության փոխնախագահ



բալետ

ԲԱԼԵՏԻ ՄԵՐ ՀՐԱՇՔ ՏՂԱՆԵՐԸ որ մի օր վերադառնալու են Հայաստան...

ԱՐԾԿԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ

ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱԼԵՏԱՅԻՆ ՄԱՖԻԱ՞

Համաշխարհային բալետի ասպարեզում երբեւէ չի եղել հայ պարողների այնպիսի առատություն, ինչպես այժմ: Շվեյցարական թերթերից մեկը նույնիսկ կատակով եվրոպայի «հայկական բալետային մաֆիա» էր կոչել այսօրվա եվրոպական բալետի հայաստանցի ներկայացուցիչներին: Միայն եվրոպայի թատրոններում հանդես են գալիս 30 հայաստանցի պարողներ: Արսեն Մեիրաբյան, Տիգրան Միքայելյան, Արշակ Ղալումյան, Վարդան Խաչատրյան, Հակոբ Հակոբյան, Արման Ալիզադյան, Վլադիմիր Հայրյան, Պետրոս Տերտերյան, Գեուրգ Ասոյան, Արսեն Չրահյան (Գերմանիա), Վահե Մարտիրոսյան, Արման Գրիգորյան, Արթուր Բաբաջանյան (Շվեյցարիա), Դավիթ Գալստյան (Ֆրանսիա), Արման Հակոբյան (Բուլղարիա), Եվրոպայից դուրս՝ Դավիթ Յովհաննիսյան, Դավիթ Կարապետյան, Էդգար Վարդանյան, Սարգիս Կալթախչյան, Գրեգորի Առաքելյան, Լուկաշ Աբրահամյան (ԱՄՆ), Վահրամ Համբարձումյան, Հայկ Քաջբերունյան (Արգենտինա), Ռուբեն Մուրադյան (Բրազիլիա)... Հայ բալետի նահապետ Վիլեն Գալստյանը մի առանձնագրույցի ժամանակ եվրոպայում հայ բալետի պարողների այդ մեծ թիվը բացատրեց ոչ միայն Հայաստանում բալետային արվեստի ներկայիս անբավարար մակարդակով, այլև մասնավորապես Լոզանի բալետի մրցույթին հայ տղաների հաճախդեպ մասնակցությամբ, որից հետո նրանց հետ մշտապես շահավետ պայմանագրեր են կնքում՝ տարբեր երկրներում կատարելագործվելու եւ աշխատելու...

ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՀՉՈՐ ԶԳՅՍՄՈՒՆՔՆԵՐ

2006-ի ամռանը հայ համերգային կյանքում տեղի ունեցավ անմախաղեպ մի մշակութային պայթյուն. բալետային բարձրարվեստ բեմադրությունների ծարավի երևանացի հանդիսատեսը դիտեց «Forceful feelings» («Հզոր զգացմունքներ») խորագրով մոդեռն բալետային մի ծրագիր: Եվ ներկայացնողները ոչ թե ժամանակակից բալետի օտարազգի ասեր էին, այլ մե՛ր իսկ տղաները, որոնք աշխարհում ներկայանում են որպես Հայաստանի ներկայացուցիչներ: Չորս տաղանդավոր հայ երիտասարդներ՝ Արսեն Մեիրաբյանը, Տիգրան Միքայելյանը, Վահե Մարտիրոսյանը եւ Արման Գրի-



Տիգրան Միքայելյան



գորյանը, որոնց պարն այսօր զարդարում է Գերմանիայի եւ Շվեյցարիայի թատրոնների բեմերը (ի դեպ, խմբում է նաեւ Դավիթ Կարապետյանը Սան Ֆրանցիսկոյի բալետի խմբից, որը, ցավոք, այս էլ երկրորդ անգամ չկարողացավ գալ Երեւան): Անցավ մեկ տարի, եւ չորս հայ պարողները կրկին Հայաստանում են: Այս անգամ՝ իրենց գործընկերների հետ, այդ պատճառով էլ նրանք ներկայացան որպես «Հզոր զգացմունքներ եւ ընկերներ»: Դարձյալ բալետային արվեստի անգուսպ հրավառություն, երաժշտության եւ շարժումների անսպառ էներգիա, հիրավի հզոր զգացմունքներ, որ բառացիորեն հորդում էին մեր տղաների կատարումներից՝ ողողելով առանց այդ էլ հպարտությունից եւ բարձր պարարվեստին առնչվելու այդ հազվագյուտ հանդիսատեսին: Երկու օր Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնը շնչում էր արդիաշունչ բալետով, որը խիստ հազվադեպ հյուր է նրա բեմահարթակում: Կարող ենք հիշել 1990-ականների կեսին Ֆրանսիական «Միշել Հալլե-Եղիայանի ընկերություն» պարախմբի ներկայացրած «Գովերգ Կանդիսկուն» արդիառճ ներկայացումը Երեւանում, մեկ այլ Ֆրանսիական մոդեռն բալետի խմբի (Նանսի քաղաքից) հյուրախաղերը... Արվեստի այդ տե-



Վահե Մարտիրոսյան



սակը՝ ժամանակակից, մոդեռն, արդիական կամ նեոկլասիկ բալետը, հայ իրականության մեջ, ցավոք, դեռեւս իր տեղը չունի (տարածքով մեր չափ եւ բնակչությամբ մեզմիջ մվազ էստոնիայում ամեն տարի տեղի է ունենում ժամանակակից պարի փառատոն...): Հայտագիրն սկսվեց Երեւանի բեմում մեր տղաների կատարած փորձերը ներկայացնող տեսանյութով, որից հետո տղաները եւ իրենց ընկերները մենաելութներով, դուետներով եւ ավելի մեծ կազմ ընդգրկող համարներով արտահայտեցին իրենց հզոր զգացմունքները հայ հանդիսատեսի հանդեպ... Միմյանց արագորեն հերթազայող պարային զանազան ոճեր ներկայացնող համարները՝ բեմական լուսավորության փոփոխություններով եւ ամենատարբեր գեղեցիկ կոմպոզիցիաներով, մարմնավորվում էին հայ եւ արեւմտյան երաժշտությամբ՝ սայաթնույան մեղեդիներից մինչեւ Ալան Հովհաննեսի երաժշտությունը, որի ներքո պատկերվեցին Արչիլ Գոբկու եւ նրա մոր զգացմունքները: Հայտագիրն անցյալ տարվա պես ավարտվեց իմպրովիզացիոն մի համարով՝ Կառլ Օրֆի «Կարմինա Բուրանա» ստեղծագործության հանրածանոթ ֆինալի ներքո. յուրաքանչյուր մենական տար վարպետորեն ցուցադրեց իր կատարողական արվեստը եւ անհատականու-

բալետ

թյունը, եւ ապա ողջ խումբը մի գեղեցկագույն կոմպոզիցիա կազմելով մաժորային ակորդով եզրափակեց հզոր զգացմունքների այդ հրավառությունը...

Բարեբախտաբար, մեր քննադատական միտքն աչքաթող չարեց մշակութային այդ կարեւոր իրադարձությունները (տե՛ս Սվետլանա Սարգսյանի վերլուծական հոդվածները, «Ազգ», 31.08.2006, 15.08.2007):

ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱՐՄԱՆ. «ՄԵՆՔ ՄԻՇՏ ԿԱՇԽԱՏԵՆՔ ՀԱԳԵՑՆԵԼ ՀԱՅ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ԲԱԼԵՏԻ ԾԱՐԱՎԸ»

Ութսունականների սերնդի չորս հայ երիտասարդների կենսագրության որոշ դրվագներ միախուսված են: Չորսն էլ Երեւանի պարարվեստի ուսումնարանի շրջանավարտներ են: 1996-1997-ին նրանք հաղթող են ճանաչվել Երեւանում կայացած «Ամադեուս» բալետի պարողների մրցույթների ժամանակ, այնուհետեւ մրցանակակիր դարձել Լոզանի սկսնակ պարողների միջազգային մրցույթում: Իսկ 2005-ի Նազդյալի (Ճապոնիա) բալետի համաշխարհային մրցույթում տղաներից երեքը՝ Արսենը, Արմանը եւ Վահեն, արժանացել են տարբեր մրցանակների:



Լուսանկարը՝
Թոմաս Քիրխգրաբերի

Թեեւ տղաները շատ կարճ ժամանակով էին Երեւանում, սակայն նրանցից երեքը համաձայնեցին հակիրճ հարցազրույցներ տալ մեր մամուլին: Առաջինը հանդիպեցի ամենաավագի՝ Տիգրանի եւ ամենակրտսերի՝ Արմանի հետ: Նրանք պետք է եվրոպա վերադառնային արդեն երկրորդ ներկայացման գիշերը:

Հիրավի արտիստական վառ անհատականություն է 27-ամյա Տիգրան Միքայելյանը: 1989-1997 թթ. Տիգրանը սովորել է Երեւանի պարարվեստի ուսումնարանում (Գարուշ Խումոյանի դասարան): Անհատական

դասեր է վերցրել նաեւ պարուսույց Արմեն Գրիգորյանից: Շահելով Նուրիեւ հիմնադրամի թոշակը՝ ուսման է մեկնել Յուրիխի շվեյցարական բալետի ակադեմիա: 1998-ին «Լոզանի մրցանակաբաշխությունում» արժանացել է «Լավագույն պրոֆեսիոնալ սկսնակ» մրցանակին: 1998-2004 թթ. Միքայելյանը հանդես է եկել Յուրիխի օպերայի եւ բալետի թատրոնում, կատարել Դորկոնի («Դափնե եւ Քլոե»), Սոլո տղայի («Սուտակներ») դերերը: 2005-ից ընդգրկվել է Բավարական պետական բալետի խմբում որպես մենապարող, մասնակցել «Ռայմոնդա» (Բերենժե), «Բայադերա» (Ոսկե կուռք), «Ռոմեո եւ Ջուլիետ» (Մերկուրիո եւ Ռոմեո), «Վերջույթների թեորեմը», «Կարապի լիճը» (Ջիգֆրիդ), «Կոստար» (Ալի եւ Քոնրադ), «Յոդի երգը» (Հավերժը) եւ այլ բեմականացումների: «Մյունխեն մեթոդը» օրաթերթի ընթերցողների կողմից արժանացել է «Մերկուր» թատերական մրցանակին: Այս տարի Տիգրան Միքայելյանն արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման, իսկ Գերմանիայում առաջադրվել է «Գերմանիայի լավագույն արտիստ» կոչման:

Հին հունական քանդակի գեղի դան մարմնով, խիստ պլաստիկ եւ արտահայտիչ 22-ամյա Արման Գրիգորյանը Երեւանի

որպես առաջին մենակատար: Մասնակցել է «Ամառային գիշերվա երազ» (Փաք), «Մոցարտ» (Մոցարտ), «Կարապի լիճը» (պադե-տրուա), «Մարդուկ-Ջարդուկը» («Շչեկուլնչիկ», կատարել է Արքայազնի պադեդե), ինչպես նաեւ մի շարք արդիական ներկայացումների:

Տիգրանը եւ Արմանը ինձ հաճելիորեն զարմացրին եւ ուրախացրին՝ իրենց կշռադատված, ինքնավստահ խոսքով եւ անկեղծ հայրենասիրությամբ...

- Տղաներ, ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար Երեւանում հանդես գալը...

- Ուղղակի հաճույք է, մեր մայր բեմն է, որը մենք կյանքում չենք կարող մոռանալ կամ լքել: Աշխարհի բոլոր բեմերում, հարցազրույցներում եւ հաղորդումներում մենք միշտ շեշտում ենք, որ մենք պատկանում ենք ահա այս բեմին, որը մնում է մեզ համար ամենից հարազատը: Եվ մենք շնորհակալ ենք մեր օպերայի եւ թատրոնի ամենակազմին, որ այսքան բացակայելուց հետո մեզ հնարավորություն է տալիս ելույթ ունենալ այստեղ: Իհարկե, եղան մի շարք դժվարություններ, որոնք կարողացանք հաղթահարել...

- Ձեր կարծիքով հայկական բալետը բավարա՞ր վիճակում է:

- Իմանալով, թե ինչ է իրենից ներկայացնում հայ համաշխարհային բալետային ուժը, կարող ենք ասել, որ կարող է առաջնակարգ տեղում լինել:

- Սողեռն բալետ Հայաստանում չկա...

- Այդ հարցի շուրջը մենք էլ ենք մտածել, հենց այդ պատճառով էլ Արսենի մտքով անցավ ստեղծել այս նախագիծը ու նաեւ Հայաստանի հանդիսատեսին տալ մոդեռն բալետի ճիշտ գաղափարը:

- Ո՞րն հետ եք համագործակցում:

- Մեր պարային համարները բեմադրում են Արսեն Մեիրաբյանը եւ Դավիթ Կարապետյանը: Ներկայացնում ենք նաեւ այսօրվա ամենամեծ բալետմայստերների բեմադրություններից՝ Ուիլյամ Չոքոսայթ, Հայնց Շվիյուլի...

- Ձեր օտարազգի գործընկերների մասնակցությունն այս նախագիծն բարեգործակա՞ն բնույթ ունե՞ր...

- Ոչ ամբողջովին բարեգործական, սակայն ոչ էլ իրենց լիիրավ համապատասխան պայմանագրեր էին կնքվել: Նրանց մասնակցության մեջ կարելու դեր խաղաց մեզ հետ ունեցած բարեկամությունը: Իհարկե, եղան հովանավորներ, որոնց կուզեինք հատուկ շնորհակալություն հայտնել, ինչպես, մեր օպերայի եւ բալետի թատրոնի տնօրեն պարոն Հովհաննիսյանին, օլիմպիական կոմիտեի փոխնախագահ Ռոբերտ Ջանիբեկյանին, ինչպես

բալետ

ճաեւ մեզ միշտ օժանդակած մեր մշակույթի եւ պաշտպանության մախարարներին, վարչապետին եւ մախագահին։ Մենք միշտ գինվորական ծառայության հետ հարցեր ենք ունեցել, սակայն մեր պետական այրերի շնորհիվ այդ խնդիրները կարգավորվել են...

- *Ձեզ ամեն ամառ կարո՞ղ ենք տեսնել մեր բեմում...*

- Չգիտեմք, թե դա որքանով կհաջողվի ավանդույթ դարձնել։ Սակայն մենք աշխատում ենք ամեն հարմար առիթով ելույթներ ունենալ Չայաստանում։ (Անցած հունվարին Տիգրանը եւ Արսենը մասնակցել են հայոց բանակի 15-ամյակին նվիրված արարողությանը, Տիգրանը հանդես է եկել մեր օպերայի եւ բալետի թատրոնի խաղացանկում ընդգրկված «Գայանե», «Դոն Կիխոտ», Արմանը՝ «Կարմեն», «Ժիզել», իսկ Վահեն՝ «Կարմեն» ներկայացումներում)։

- *Ինչպե՞ս եք տեսնում հայ բալետի ապագան։*

- Այսօրվա դրությամբ մեր ապագան եվրոպայում է եւ համաշխարհային բեմերում, սակայն դա միաժամանակ ներկայացնում է հայկական բալետը։ Կաշխատենք հազեցնել նաեւ հայ հանդիսատեսի՝ բալետի հանդեպ ունեցած ծայրավը...

ԱՐՍԵՆ ՄԵՅՐԱԲՅԱՆ. «ՉԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱԼԵՏԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ»

Գեղեցկատես, ճկուն, օղային ոստյունների հրաշալի մեկնաբան 25-ամյա Արսեն Մեհրաբյանը նույնպես սերում է բալետային ընտանիքից։ Չայրը Չայաստանի վաստակավոր արտիստ Նորայր Մեհրաբյանն է, «Բարեկամություն» պարային համույթի գեղարվեստական ղեկավարը, մայրը՝ պարուհի Լարիսա Մեհրաբյանը, հանդես է եկել Չայաստանի պարի պետական համույթում եւ «Բարեկամություն» խմբում, իսկ ավագ եղբայրը՝ Արթուր Ասատրյանը, սեփական բալետային խումբ ունի ԱՄՆ-ում։ Արսենն ուսանել է Երեւանի պարարվեստի դպրոցում, ուսուցիչներն են եղել հայրը եւ Ռուբեն Տոնոյանը։ 1998-ին Արսենը մասնակցել է Սանկտ Պետերբուրգում կայացած ռուսական բալետային դպրոցի 250-ամյակին նվիրված «Վազանովա պրիզ» միջազգային մրցույթին։ Նույն 1998-ին Լոզանում կայացած սկսնակ արտիստների միջազգային մրցույթում նույնպես արժանացել է ոսկե մեդալի եւ հնարավորություն է ստացել վերապատրաստվել եվրոպական եւ ամերիկյան բալետային դպրոցներում։ Մեհրաբյանն ընտրել է Չամբուրգը, որի բալետի ակադեմիայում սկսել է ուսանել 2000 թվականից՝ Ռադիկ Ջարիպովի դասարա-

նում։ Հինգ մրցույթների դափնեկիր է։ 2002-ին Վառնայի միջազգային մրցույթում 30 երկրների 150 մասնակիցների մեջ Արսեն Մեհրաբյանն արժանացել է «Գրանդ Վառնա» ոսկե մեդալին՝ մրցանակը ստանալով Յուրի Գրիգորելիչից։ Այժմ Մեհրաբյանը հանդես է գալիս Ջոն Նոյմայերի գլխավորած Չամբուրգի բալետում, մասնակցել մի շարք բալետների՝ «Սոխրուտիկը» (Արքայազն), «Ժիզել» (պա-դե-դե), «Մարդուկ-Ջարդուկը» (Արքայազն), «Դոմեո եւ Ջուլիետ» (Բենվոլոլո), «Ամառային գիշերվա երազ» (Դմիտրիուս), «Մահ Վենետիկում» (Յաշու եւ Տաջիո)։ Նատալյա Մակարովայի բեմադրած «Բայադերա» ներկայացման մեջ հանդես է եկել երկու՝ Սոլորի եւ Բրոնզե կուռքի դերերով։ Մեհրաբյանը հանդես է եկել նաեւ Նոյմայերի բեմադրած արդիական բեմադրություններում։ «Նիժինսկի» ներկայացման մեջ Արսենը մարմնավորել է ռուս մեծ պարող Նիժինսկուն «Վարդի տեսիլք» եւ «Շեհերազադե» բալետներում պարելիս (վերջինում՝ Ոսկե ստրուկի դերը), ինչպես նաեւ նրա եղբորը՝ Ստանիսլավին։

Արսեն Մեհրաբյանի հետ իմ հանդիպումը տեղի ունեցավ մեկ շաբաթ անց։ Մեծապես զգացվեցի նրա պարտաճանաչությունից. չնայած ուտքի վնասվածքին (ծանոթ վիճակ պարողների համար)՝ նա եկավ հարցազրույցի...

- *Ինչպե՞ս ծնվեց «Չգոր զգացմունքների» գաղափարը։*

- Մենք տարիներ շարունակ ընկերներ ենք եղել Չայաստանում։ Երբ Չայաստանից դուրս եկանք, հաստատվեցինք Եվրոպայի տարբեր քաղաքներում, շատ բան տեսանք եւ սովորեցինք։ Բոլորս էլ առանձին-առանձին գնում-գալիս էինք, հանդես գալիս ներկայացումներում, եւ ահա իմ մեջ միտք ծագեց մի բալետային նորություն բերել Չայաստան։ Որոշեցի ստեղծել մի փոքր խումբ, որի անվանման մեջ անպայման լինի «զգացմունք» բառը, քանի որ զգացմունքներն են, որ մեզ կապում են իրար։ Մենք մեր պարով արտահայտում ենք մեր զգացմունքները մեր ժողովրդի, մեր մշակույթի, մեր օպերայի եւ բալետի թատրոնի հանդեպ...

- *Եվ այս տարի եկաք ծեր ընկերների հետ։ Կներկայացնե՞ս նրանց։*

- Որպես խումբ՝ բոլորս շատ միաձույլ էինք։ Չեխ երկվորյակ եղբայրներ Օտտո եւ Իրժի Բուբենիչեկները 14 տարի պարել են Չամբուրգի թատրոնում։ Ես շատ պարողների գիտեմ Եվրոպայում, սակայն ինձ համար «լավ պարող» խոսքն առաջին հերթին վերաբերում է Բուբենիչեկ եղբայրներին։ Այսօր շատ պարողներ չեն կարողանում ամեն ոճով պարել։ Իսկ չեխ եղբայրները դասական պարի մեծ դպրոց են անցել ու

ճաեւ մոդեռն բալետի մեծ վարպետներ են։ Եվ քանի որ երկվորյակ եղբայրներ են, չկա տարբերություն, որ նրանցից մեկը մյուսից լավն է։ Օտտոն երաժշտություն է գրում, Իրժին բեմադրում է։ Մեզ հետ եկած երեք պարուհիներն էլ Չամբուրգի օպերայի եւ բալետի թատրոնից են, որոնց ես ընտրեցի՝ որոշ դերերի համար։ Ավստրիացի Պատրիցիա Տիչին կատարեց «Սիրեցի, յարս տառան» պարային պատկերը՝ Նորայր Մեհրաբյանի բեմադրությամբ։ Կանադուհի Ստեֆանի Միլերը երկար տարիներ աշխատել է Օտտո Բուբենիչեկի հետ, փայլուն է նրա բեմադրություններում։ Ճապոնուհի Յուկա Օուշին շատ զգացմունքային պարուհի է, աշխատասեր, տիրապետում է մոդեռն պլաստիկայի։ Նա շատ հաջող է Արչիլ Գորկու մոր դերում։ Բոլորն էլ շատ զոհ էին այստեղ մարդկանց վերաբերմունքից, ուրախ էին Չայաստանը ճանաչելով։ Բուբենիչեկները որոշ չափով ծանոթացան նաեւ մեր ժողովրդական պարերին։

- *Ստավախություն չկա՞ր, որ հայաստանցի հանդիսատեսը չի ընկալի ծեզ։*

- Արվեստագետը չպետք է մտածի այդ մասին։ Ինձ համար կարեւորը այն բերելն էր, քանի որ մեզ մոտ այդ արվեստից շատ բան չեն տեսել։ Իսկ բերելիս պետք է բերել ամենալավը, քանի որ դա մեր ազգի համար է, իսկ ով կընկալի կամ չի ընկալի՝ դա արդեն հանդիսատեսի անձնական խնդիրն է։

- *Այսօր Չայաստանին պե՞տք է մոդեռն բալետ։*

- Անշուշտ, այսօր աշխարհում միայն դասական բալետ չեն պարում։ Անգամ Պետերբուրգում, որ դասական բալետի կենտրոններից է, այսօր բեմադրվում են ժամանակակից պարի ներկայացումներ։ Չայաստանում հնարավորություն կա հրավիրել մասնագետների, որոնք դասընթացներ կվարեն, մեթոդիկա կսովորեցնեն։ Մոդեռն բալետը, ի տարբերություն դասականի, շատ տարբեր ուղղություններ եւ ոճեր ունի։ Կարծում եմ, որ հայկական մտածելակերպը պետք է փոխվի բալետի հարցում։ Այսօր մենք կանգնած ենք մնացել Վազանովայի մեթոդիկայի վրա, որը, բոլորս գիտենք, շատ առաջնակարգ է, սակայն աշխարհը չի մնում նույն տեղում։ Մեր պարողներն արտասահմանում արագ յուրացնում են տարբեր բալետային ուղղությունները, նաեւ ժամանակակիցը, որը նոր աշխարհ է նրանց համար։ Ժամանակակից բալետը միայն տեխնիկական միջոցներ չէ, դա մեթոդիկա է, որ պետք է ուսումնասիրել եւ սովորել։ Մեզ մոտ ամեն ինչ դեռ նույն վիճակում է, չկա զարգացում, չկան մոր լուծումներ, մոր բեմադրություններ, թեկուզ՝ վատ։ Ունենք հիանալի մաս-

բալետ

ճագետներ, բալետմայստրներ, որոնք, ցավոք սրտի, չեն աշխատում։

- *Ի՞նչ բեմադրություններ ես կատարել։*

- Անցած տարի Չամբուրգում բեմադրել եմ «Ծիրանի ծառը» Կոմիտասի երաժշտությամբ, այս տարի՝ «Լարի ծայնը» Սայաթ-Նովայի երաժշտությամբ, դասական շարժումների վրա հիմնված, սակայն այսօր որեւէ բեմադրություն չի կարող միմիայն դասական լինել...

- *Եւ մի քանի խոսք ծեր ծրագրերի մասին...*

- «Հզոր զգացմունքներով» պատրաստվում ենք հանդես գալ հյուրախաղերով Եվրոպայում, գրեթե նույն ծրագրով։ Մտադիր եմ ամբողջացնել Արչիլ Գորկու մասին բալետը՝ Ալան Յովհաննեսի երաժշտությամբ, հիմնված հայկական շարականնեռի վրա։ Լիբրետոն արդեն պատրաստ է։ Ժամանակի եւ տեղի հարց է, որը պետք է լուծել...

«ՄԵՐ ՀՈՒՅԱԸ ՄԵՐ ՏՂԱՆԵՐՆ ԵՆ...»

Այսօր արտերկրում գործող բալետի հայ երիտասարդ աստղերից թերեւս ամենակրտսերին՝ 22-ամյա Դավիթ Գալստյանին հանդիպեցի «Հզոր զգացմունքների» ներկայացման օրը։ Նա նույնպես եկել էր արձակուրդն անցկացնելու տանը, միաժամանակ «Դոն Կիխոտի» երեւանյան բեմադրության մեջ հանդես եկավ գլխավոր՝ Բազիլի դերում։

Թուլուզի «Կապիտոլ» բալետի մենակատար, նույնպես շեմշող արտաքինով, պարզ եւ անմիջական Դավիթը հարցազրույցի եկավ հոր՝ հայ բալետի ականավոր գործիչ Վիլեն Գալստյանի հետ։ Ակիզբ առավ մտերիմ զրույց ոչ միայն Դավթի կառիերայի, այլեւ առիասարակ մեր բալետային իրականության վերաբերյալ...

- *Դավիթ, դու սերում ես բալետային ընտանիքից... իսկ մի՞շտ ես սիրել բալետը։*

- Ճիշտն ասած, սկզբում հատուկ սեր չունեի բալետի հանդեպ։ Սովորում էի անգլիական թեթումով դպրոցում։ Բայց ինը

տարեկանում մի օր, առանց ծնողներիս տեղեկացնելու, գնացի եւ ընդունվեցի պարավետսի ուսումնարան։ Սովորել եմ Յովհաննես Դիվանյանի դասարանում։ Տասնչորս տարեկանում իմ պարի տեսագրությունն ուղարկեցի Մոսկվա՝ Վյաչեսլավ Գորդենեին, որը Նուրիեի լոզանյան հիմնադրամի կողմից տաղանդավոր պարողներից Գորդենեւ ընտրեց միայն ինձ եւ իր հետ տարավ Շվեյցարիա։ Մրցույթի առաջին իսկ փուլին հրավեր ստացա սովորելու ԱՄՆ-ում կամ Եվրոպայում, 18 երկրների ազգային բալետի դպրոցներում։ Ընտրեցի Լոնդոնի բալետի դպրոցը։ Այստեղ իմ ուսուցիչներն են եղել Դեյվիդ Նորմանը եւ Քրիսթոֆեր Փաունին, իսկ հյուր դասախոսներ՝ Միխայիլ Բարիշնիկովը, Կառլոս Ակոստան, Սինթիա Հարվին եւ Նատալյա Մակարովան։ Լոնդոնի բալետի դպրոցն ավարտեցի ոսկե մեդալով՝ երեք տարի շարունակ ճանաչվելով դպրոցի լավագույն աշակերտ։ Շուրջս տարբեր մրցույթների մեդալակիրներ էին, իսկ ես ոչ մի բալետային մրցույթի չէի մասնակցել (հիմա էլ ժամանակ չկա մասնակցելու), բայց նաեւ ոսկե մեդալ ունեի, որ ինձ հանձնեցին ժյուրիի անդամները՝ բոլորն էլ այսօրվա բալետի մեծ աստղեր...

- *Գերմանիայում եւ Շվեյցարիայում բալետի հայ տղաները քիչ չեն, իսկ ահա Ֆրանսիայում, որքան գիտեմ, միայն դու ես...*

- Այո, այսօր ուրիշ հայաստանցի հանդես չի գալիս ֆրանսիական բալետում։ Թուլուզի «Կապիտոլ բալետ» խմբում եմ ավարտելուցս հետո, 2003 թվականից։ Մասնակցել եմ դասական եւ նեոկլասիկ բալետների՝ Բալանչինի «Թեմա վարիացիաներով» (Չայկովսկու երաժշտությամբ), Փիթեր Մարթինզի բեմադրած «Սարսափելի համաչափություններ» (Ջոն Ադամսի երաժշտությամբ), Ֆորսայթի «Վերջույթների թեորեմը» եւ այլն։ Իսկ «Շչեկունչիկ» բալետում պարել եմ բոլոր դերերը։ Ասեմ, որ մեր թատրոնի տնօրեն Նանետ Գուլշալը «Բալանչին թրասթի» իրավահաջորդն է, միայն մեր թատրոնն իրավունք ունի վերաբեմադրել Ջորջ Բալանչինի պարային բեմադրությունները...

- *Ես գիտեմ, անցյալ տարի մասնակցել ես աշխարհի մեծագույն բալետային շոուին՝ Լոնդոնի «Էտուալին»...*

- (Ծիծաղելով) Դու շատ իմֆորմացված ես։ Այո, Իրեկ Մուհամեդովն ինձ առաջարկեց իր հետ դուետ կատարել Լոնդոնի «Էտուալ» գալա-համերգում։ Նա արդեն մեծ է, 45 տարեկան, ինձ համար մեծ հաճույք էր այդ մշանավոր պարողի հետ հանդես գալը։ «Էտուալին» մասնակցում եմ այ-

սօրվա բալետի ամենախոշոր աստղերը, մայում էի չուրջս եւ մի տեսակ զարմանում, որ ես էլ նրանց մեջ եմ։ Բայց բալետային քննադատները ինձ էլ նկատեցին, անվանեցին «նոր ծագող աստղ»...

- *Ֆրանսահայերը ծանաչո՞ւմ են քեզ...*

- Այո՝ Մի անգամ Թուլուզում «Կարմեն» էինք պարում, Չայաստանի անկախության օրն էր, հանդիսատեսների մեջ տեսանք մի խումբ հայերի, որոնք եկել էին հայկական դրոշով...

- *Իսկ ո՞ւմ ես համարում քո ուսուցիչը...*

Դավիթը պլաստիկ շարժումով թեթեալի հարվածում է իր կողքը նստած հոր ծնկին։

- Նա ինձ ուղղություն չի տալիս. տարին մեկ-երկու բառ է ասում, որն ինձ միանգամայն բավական է։ Ինձ ուրիշ ուսուցիչ պետք չէ։

- *Հենց այդ պատասխանն էլ ուզում էի լսել։ Դավիթ, գիտեմ, որ բալետի արտիստները ազատ ժամանակ գրեթե չուՈնեն, սակայն ո՞րն է քո հորին։*

- Շատ եմ սիրում արագընթաց մեքենա վարել։

- *Իսկ տրամադրություն մեո՞ւմ է ներկայացումներից հետո զմալ դիսկոտեկ...*

- Այո՝ ես շատ գիշերային մարդ եմ։ Ներկայացումներից հետո միշտ մի տեղ գնում եմք։ Դիսկոյում պարելն էլ ուրիշ հաճույք է...

- *Իսկ կարոո՞ղ ես ասել, ինչպիսի՞ն կլինի հայկական բալետի ապագան...*

Այս հարցին պատասխանեց Դավթի հայրը՝ Վիլեն Գալստյանը.

- Երբ այս բոլոր հրաշք տղաները վերադառնան Չայաստան, որի համար շատ երկար ժամանակ չի պահանջվում, այնժամ մենք կունենանք առաջնակարգ բալետ։ Մեր տղաներն արդեն 27 տարեկան են կամ մոտենում են այդ տարիքին, ուստի՝ եւ սպասվում է, որ նրանք հերթով կվերադառնան եւ աշխարհի բոլոր բալետային նորությունները կբերեն հայրենիք։ Մենք ժամանակին չգիտեինք էլ, թե ինչ է մոդեռն պարը։ Այսօր իմ Դավիթը, մեր մյուս տղաները ինչ որ տեսնում եւ սովորում են մոդեռն բալետի մեծերից՝ Կիլիանից, Ֆորսայթից, բալետի վերջին խոսքն է, որին նրանք հրաշալի տիրապետում են։ Մենք օտարազգիներից չպիտի սպասենք մեր բալետի վերածնունդը։ Մեր հույսը մեր տղաներն են։

Ես այս լավատեսական մոտայով էլ բաժանվում եմ հայր եւ որդի Գալստյաններից, լիառիւս, որ մեր հրաշք տղաներն իսկապես մի օր վերջնականապես կվերադառնան Չայաստան, եւ բալետ կոչվող այդ չքնաղ արվեստը մեր երկրում վերջապես վերելք կապրի՝ ընթանալով համաշխարհային զարգացումներին զուգընթաց...



Հայ կլավեսինահարուհին Գերմանիայում

Խմբագրությունը Գերմանիայից ստացել է հետաքրքրական թղթակցություն՝ Արմինե Ջեթադյան-Բաբայանի հարցազրույցը կլավեսինահարուհի Վարվառա Մանուկյանի հետ (ռուսերեն): Ծավալուն նյութը տպագրելու հնարավորություն չունենալով՝ ստորել հակիրճ ներկայացնում ենք դրանից քաղված որոշ տեղեկություններ մեր երիտասարդ հայրենակցի մասին:

Ծնունդով երեւանցի Վարվառան սովորել է Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնում (դաս. Նազելի Իվանյան): Ուսումը շարունակել է Մոսկվայում՝ Գնեսինների անվան ռուսամարանում, մաեւ ավարտել է կոնսերվատորիայի եւ ասպիրանտուրայի պատմական եւ ժամանակակից կատարողական արվեստի ֆակուլտետը, որ հիմնադրել է աշխարհահռչակ դաշնակահար Ալեքսեյ Լյուբիմովը: Այնուհետեւ կատարելագործվել է Մյունխենի բարձրագույն դպրոցի ասպիրանտուրայում: Ուսումնառության տարիներին նա ռուսամասիրել է ստեղնային նվագարանների՝ կլավեսինի, համներկավերի (մուրճիկավոր դաշնամուր) եւ կլավիկորդի կատարողական արվեստի ավանդույթները:

16-18 դդ. տարածված այս նվագարանները կրկին ասպարեզ եկան 20-րդ դարում, հատկապես հոլանդացի անվանի կլավեսինահար Գուստավ Լեոնհարդի ջանքերով: Ընդ որում գործադրվեցին ոչ միայն թանգարանային հնագույն նմուշները, այլեւ դրանց հիման վրա ստեղծե-

ցին նոր գործիքներ: Այս ամենի նպատակն էր վերածնել տվյալ ժամանակաշրջանի ոգին: Մինչ այդ կլավիրային երաժշտությունը կատարվում էր դաշնամուրով, որն իր հարստությամբ հանդերձ, այնուամենայնիվ, ստույգ պատկերացում չէր տալիս անցյալի մասին: Կլավեսինի հնչյունարտաբերումն ունի լարային-կամիթային բնույթ: Հնչյունը բխում է ստեղնի ծայրին ամրացված փետուրով լարին դիպելու շնորհիվ: Իսկ կլավիկորդի հնչյունը արտաբերվում է ստեղնի ծայրին ամրացված զամով (տանգենտ), որը նույնպես դիպում է լարին, սակայն այն կարող է կապած մնալ լարին, ինչը հնարավորություն է տալիս տատանել այն (վիբրատո) եւ ստանալ թրթռուն հնչյուն: Մինչդեռ համներկավիրի ստեղնի սեղմումով շարժման մեջ է դրվում մուրճիկը, որի հարվածը լարին արտաբերում է ավելի ուժիգն հնչյուն: Համապատասխան կերպով էլ տարբերվում են նվագելաձեւերը, եւ պահանջվում է հատուկ հմտություն:

Զրուցակցի այն հարցին, թե էլեկտրոնային երաժշտությամբ, ջազով, ռոքով ու փոփ-արվեստով հափշտակված երիտասարդ սերնդին արդյոք հետաքրքիր է հնագույն երաժշտությունը, Վարվառան պատասխանել է. «Դա ոչ միայն հետաքրքրասիրություն է, այլեւ բնական անհրաժեշտություն, որը պայմանավորված է կորսված




ներդաշնակության փափագով՝ ներդաշնակություն, որն արտահայտում եւ տարածում է հնագույն երաժշտությունը...»:

Անդրադառնալով Հայաստանին, կլավեսինահարուհին նշել է. «...Ես լիահույս եմ, որ երբեւէ Հայաստանում կլինեն երաժշտախմբեր, որոնք կմասնագիտանան պատմական կատարողական արվեստի բնագավառում, իսկ այն ուսանողները, ովքեր կցանկանան տիրապետել հնագույն նվագարաններին, ստիպված չեն լինի դրա համար մեկնել Եվրոպա»:

Զրույցի վերջում Վարվառան նշել է իր նախասիրությունները եւ հավատամքը՝ սիրում է ընթերցել Հերման Հեսսեի եւ փիլիսոփա Խոսե Օրտեգա-Գասետի գործերը: Նրա նշանաբանն է՝ «կատարելությունը սահման չունի», «ամենուր սփռել լույս եւ բարություն»:


Նոր գրքեր




Հայաստանի ազգային պատկերասրահը հրատարակել է նկարիչ Ենոկ Ենոկյանի ստեղծագործությունների կատալոգը (կազմող՝ Ս. Խանջյան), հարեւն եւ անգլերեն:



Հայաստանի ազգային պատկերասրահը հրատարակել է «19-րդ դ. վերջի եւ 20-րդ դ. սկզբի ռուսական արվեստը Հայաստանի ազգային պատկերասրահում» (զեղանկար, գրաֆիկա) ծավալուն ալբոմը (ռուսերեն): Ներածական հոդվածի հեղինակն ու կազմողն է Իրինա Բաղդամյանը:



Երվանդ Քոչար, «Ես եւ դուք»: Ելույթներ, հոդվածներ ու հիշողություններ, պիես: «Մուղնի» հրատարակություն, 2007 թ.:



«Հրանտ Ստեփանյան», ստեղծագործությունների կատալոգ, առաջաբանը՝ վեց լեզվով: Կազմող՝ Արշակ Ստեփանյան: Երեւան, «Էդիթ պրինտ», 2007 թ.:

Հայ Արվեստի



Սամվել Չիրուխյան, «Ձրոսայգի»



Հարություն Հարությունյան, «Արարատը Բյուրականից»

հավաքածու



Գազիկ Պարսամյան, «Բնակար»

Նայե՛ք «Հայ արվեստի» նորացված կայքը
www.armenianart.am


Տիգրան Սարգսյանի նոր կայքը

www.artbytigrani.com

Քանդակագործ Տիգրան Սարգսյանը, որը նաեւ «Հայ արվեստի» լիազոր ներկայացուցիչն է Լոս Անջելեսում, արվեստասերների ուշադրությանն է հանձնել իր նոր կայքը: Այն ամբողջական պատկերացում է տալիս արվեստագետի բազմաբնույթ եւ բազմաժանր ստեղծագործության վերաբերյալ:

Ծնունդով երեւանցի արվեստագետը հայտնի է նաեւ Հայաստանին մեծադիր ստեղծագործությունների նվիրատվություններով (Մայր աթոռի թանգարան, Ցեղասպանության ինստիտուտ-թանգարան):





ԱՐԱՄԵ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՅ
ARAME ART GALLERY

Հայ անվանի գեղանկարիչների
ստեղծագործությունների
ցուցահանդես-վաճառք

Ռուբեն Աբովյան
Հմիլ Գազազ
Սարգիս Համալքաշյան
Գևորգ Եղիազարյան
Տարոն Մուրադյան
Արմեն Գևորգյան
Շոթա Ոսկանյան
Ավետիք Չթչյան
Մարատ Մարգարյան



Վաճառված աշխատանքների հետ
տրվում են դրանց
խկությունը հաստատող փաստաթղթեր
և արտահանման արտոնագրեր:
Առաքումն անվճար է:

Հավելյալ ծառայություններ

- ◆ Եվրոպական արտադրության
բարձրակարգ շրջանակների
պատրաստում
- ◆ Հին և վնասված նկարների
ռեստավրացիա



Արմեն Գևորգյան "Մրցույթ"

Բաց է ամեն օր, ժամը 11.00-ից 20.00-ը

ՀՀ., 375002, Երևան,
Ամիրջյան, 13

ԱՐԱՄԵ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՅ

E-mail: arameart@arminco.com

Հեռ.: (374 1) 53 92 65

Բջջ.: (374 9) 41 69 27

<http://www.aramegallery.com>